

See discussions, stats, and author profiles for this publication at: <https://www.researchgate.net/publication/346081709>

Psychological assessment of professional readiness

Book · September 2020

CITATIONS

0

READS

38

4 authors:



Varduhi Papoyan

Yerevan State University

19 PUBLICATIONS 0 CITATIONS

[SEE PROFILE](#)



Diana Sargsyan

Yerevan State University

14 PUBLICATIONS 0 CITATIONS

[SEE PROFILE](#)



Alina Galstyan

Yerevan State University

14 PUBLICATIONS 0 CITATIONS

[SEE PROFILE](#)



Milena Karapetyan

Yerevan State University

1 PUBLICATION 0 CITATIONS

[SEE PROFILE](#)

Some of the authors of this publication are also working on these related projects:



The research is carried out with the support of the topic with the code "18T-5A056" of the RA SCC [View project](#)



(projekr N15T-5A078) [View project](#)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԹԵՍՏԵՐ ԵՎ ՎԱՐԺԱՆՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԳՄՆ
ՆԱՄԱՆՍԱՐԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Թեստեր և վարժանքներ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 159.9(07)

ԳՄԴ 88գ7

Մ 315

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

*ՀՀ կրթության և գիտության նախարարի 18.07.17 թ. N787-A/2 հրամանով
2017 թ.-ից գործածության երաշխավորված «Սովորողի ինքնուրույնության և
մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում» մեթոդական
ուղեցույցի երկրորդ լրամշակված և նոր նյութերով համալրված
հրատարակություն:*

Մասնագիտական գրախոս՝

հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Վ. Ռ. Պապոյան

Կազմողներ՝

Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յ. Սարգսյան, Մ. Ա. Կարապետյան

Մ 315 Մասնագետի պատրաստման հոգեբանական գնահատում: Թեստեր և վարժանքներ/ Կազմողներ՝ Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յ. Սարգսյան, Մ. Ա. Կարապետյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 198 էջ:

Ձեռնարկը գրված է ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «18T-5A056» ծածկագրով «Անձի հոգեբանական գնահատումը մասնագիտական պատրաստման գործընթացում» թեմայի շրջանակներում:

Սույն ձեռնարկը նվիրված է մասնագիտական պատրաստման հոգեբանական գնահատման հիմնախնդրին: Այն ընդգրկում է ինչպես տեսական վերլուծություններ, այնպես էլ մշակված և տեղայնացված հոգեբանական գնահատման գործիքակազմ՝ համապատասխան թեստերով և հարցարաններով: Ձեռնարկն ավարտվում է կիրառական վարժություններով, որոնք փորձարկվել են հանրակրթական և բարձրագույն կրթական հաստատությունների սովորողների շրջանում: Ձեռնարկն արդյունավետ կարող է կիրառվել կրթական հաստատությունների հոգեբանների և մանկավարժների կողմից:

ՀՏԴ 159.9(07)

ԳՄԴ 88գ7

ISBN 978-5-8084-2460-9

© ԵՊՀ հրատ., 2020

© Կազմողներ, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ	
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)	8
ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ	
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ. Մասնագիտական կրթություն	15
ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ	16
ՀՈԳԵԲԱՆԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	34
ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԴԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ	
ՁԵՎԱՎՈՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	39
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ «ԵՍ» ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	47
ԱՆՁՆԱՅԻՆ ՄՈՏԻՎԱՅԻՆՈՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	60
ՀՈԳԵԴԻԱԳՆՈՍՏԻԿԱԿԱՆ ԹԵՍՏԵՐ ԵՎ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼ	
ԱՆՁԻ ՄՈՏԻՎԱՅԻՆՈՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	65
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ	67
ՆԱԽԱՁԵՌՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ	71
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	73
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇԻՉ	
ՀԱՐՑԱՐԱՆ	78
ԼՈԿՈՒՄ ՀՄԿՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ	82
ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՅԻԱՅԻ ԵՎ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ	
ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՐՑԱՐԱՆ	88
ԱՆՁԻ ՄՈՏԻՎԱՅԻՆՈՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԱՐԱՆ	91
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ	
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	
ՀՈԳԵԴԻԱԳՆՈՍՏԻԿԱԿԱՆ ԹԵՍՏԵՐ ԵՎ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ	103
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ	105
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ	112
ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՇԱՐԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ	
ԱՊՐՈՒՄԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ	115
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ	
ՄԱՍԻՆ	124
ՄԱՍՆԱԳԵՏԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ	
ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ	138

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՆԵՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....	152
ՆԱԽԱԲԱՆ.....	152
ՏԵՂԵԿԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ.....	153
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՎԵՐԲԱԼ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ.....	154
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐ.....	155
ԱՊԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	156
ԱՍՈՑԻԱՏԻՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ.....	158
ՀԱՐՈՒՍՏ ԸՆԿԵՐ.....	158
ՄԵՎ ԽՈՌՈՉ – ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐԻՋՈՆ.....	160
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ.....	161
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	162
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ.....	165
ՀՈՒՋԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ.....	168
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	169
ԹՐԵՅՆԻԿԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ...	172
Ո՞Վ ԵՄ ԵՄ ԿԱՄ Ի՞ՆՉ ԵՄ ՄՏԱԾՈՒՄ ԻՄ ՄԱՍԻՆ.....	172
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ. ՄԵՐ ԸՆՏՐԱԾ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ.....	173
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ.....	178
ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՄՄԱ.....	178
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....	182
ԻՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	184
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ.....	185
10 ՏԱՐԻ ԱՆՑ.....	187
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	188

ՆԱԽԱԲԱՆ

Ապագա մասնագետների պատրաստման գործընթացի արդյունավետությունը պայմանավորում է նրա կայացումն ու ինքնիրացումը մասնագիտական գործունեության մեջ: Մեր կողմից իրականացվող նախագիծն ուղղված է ապագա մասնագետի անձի հոգեբանական գնահատմանը, քանի որ այն կարող է նպաստել մասնագիտական գործունեության մեջ սեփական անձի կարողությունների և հմտությունների գիտակցմանը, սահմանափակումների վերանայմանը, մասնագիտական կերպարի ձևավորմանը, նույնականացմանը: Հոգեբանական այս գործընթացները անշուշտ ապահովում են մասնագետների անձնային աճը, հասունությունը անը:

Մինչ այժմ մեր կողմից իրականացված նախագծերը, որոնք ուղղված են եղել հոգեբանական տեխնոլոգիաների մշակմանը և սովորողի անձի ինքնորոշմանը, տեսական և հետազոտական արդյունքներ են տվել մասնագիտական պատրաստման հիմնախնդիրն ավելի մանրամասն ուսումնասիրելու և կիրառական ելքեր գտնելու համար: Վերջին տարիներին տպագրվել են հոդվածներ, աշխատանքային խմբի անդամները հանդես են եկել զեկուցումներով տեղական և միջազգային գիտաժողովներում (Երևան, Դոնի-Ռոստով, Պրահա), անցկացվել են թեմատիկ-քննարկումներ, իրականացվել են վերապատրաստումներ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Նախագծի իրականացման ընթացքում ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի է ունեցել գործնական հանդիպում հանրակրթության մասնագետների, հոգեբանների և մանկավարժների հետ՝ «Երիտասարդների զբաղվածության և ձեռներեցության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների համագործակցությամբ:

Սույն ձեռնարկում փորձել ենք ներկայացնել մասնագիտական պատրաստման հոգեբանական գնահատմանն ուղղված տեսական վերլուծությունները, մշակված և տեղայնացված հոգեբանական գնահատման գործիքակազմը՝ համապատասխան թեստերով և հարցարաններով, ինչպես նաև կիրառական վարժությունների շարքը, որը փորձարկվել է հանրակրթական և բարձրագույն կրթական հաստատությունների սովորողների շրջանում: Հաշվի առնելով սեփական անձի հետաքրքրությունների

և ապագա մասնագիտության սկզբնական ինքնորոշման քայլերի կարևորությունը դեռահասության տարիքում՝ գործնական աշխատանքների իրականացումը սկսել ենք մասնագիտացված քոլեջներից: Պարզ է դարձել, որ տեղեկացվածությունը, մասնագիտությունների մասին պատկերացումները բավարար չեն մասնագիտական ինքնորոշման և պատրաստման համար: Եվ մեր աշխատանքների հիմնական ուղղությունն են դարձել տեսագործական և կիրառական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու հոգեբանական գնահատման գործիքների և նյութերի պատրաստումն ու տարածումը, համապատասխան մասնագետների շրջանում վերապատրաստումների իրականացումը:

Սույն ձեռնարկը կազմված է երեք մասից. տեսական, գործնական (գնահատման) և կիրառական:

Ձեռնարկի առաջին մասը վերաբերում է մասնագիտական պատրաստման հիմնախնդրին: Անդրադարձել ենք մասնագիտական պատրաստման նախադրյալներին, որոնք դրսևորվում են մասնագիտական կրթության տարիներին: Մասնագիտական պատրաստման գործընթացում կարևորելով հոգեբանական գործոնների դերը՝ առանձնակի ուսումնասիրել ենք մասնագիտական Ես-ը և նույնականությունը:

Ձեռնարկի երկրորդ մասն ընդգրկում է թեստեր և հարցարաններ, որոնք ևս ներկայացվում են երկու ենթամասով: Սկզբում ներկայացված են անձի մոտիվացիոն ոլորտի բաղադրիչների գնահատման գործիքները, որոնք դուրս են բերում անձի ինքնահսկման, մասնագիտական ուղղվածության, հաջողության և անհաջողության հանդեպ վերաբերմունքի, կենսական, ստեղծագործական ակտիվության, ինքնուրույնության, նախաձեռնողության և այլ կարևորագույն ցուցանիշներ և որոնք անմիջականորեն նպաստում են սովորողի անձի ինքնաճանաչմանն ու մասնագիտական ուղղվածության դուրսբերմանը: Մյուս ենթամասում ներկայացված են մասնագիտական գործունեության գնահատմանն ուղղված մեթոդիկաները, որոնք վերաբերում են մասնագիտական պատրաստվածությանը, մասնագիտական աճին և հասունությանը, գործողություն իրականացնելու պատրաստվածությանը, կարգավորիչ գործունեություն իրականացնելու նախադրյալներին և այլն:

Ձեռնարկի երրորդ մասը կիրառականն է: Այն հագեցված է հոգեբանական խթանիչ վարժանքներով, մասնագիտական պատրաստմանն

ուղղված տարաբնույթ վարժություններով և տեխնիկաներով: Դրանք վերաբերում են մասնագիտությունների մասին տեղեկություններին, թե՛ սեփական անձի արժեքներին և հետաքրքրություններին, թե՛ մասնագիտական կարողություններին և հմտություններին և թե՛ հուզական վերաբերմունքին՝ այս կամ այն գործունեության հանդեպ: Թրեյնինգային բնույթի շարունակական վարժությունների շարքը կարող է ունենալ երկարաժամկետ արդյունավետ կիրառություն կրթական հաստատություններում հոգեբանական աշխատանքներ իրականացնելու ընթացքում:

Ձեռնարկի վերջում առաջարկվում է հիմնական և լրացուցիչ գրականություն, որը ներառում է ոչ միայն մասնագիտական պատրաստման հիմնախնդիրն ուսումնասիրող հեղինակների աշխատությունները, այլև վերջին տարիներին մասնագիտական գործունեության վերաբերյալ մեր կողմից իրականացված տեսական և հետազոտական աշխատանքների տպագրությունները:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ
(ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)**

Անձի մասնագիտական պատրաստման հիմնախնդիրը արդիական է բոլոր ժամանակների համար և չի կորցնում իր կարևորությունը հոգեբան մասնագետների շրջանում: Մասնագիտական հմտությունների ձևավորումը և մասնագիտության մեջ անձի կայացումը՝ որպես անձի ինքնագարգացման պահանջմունք, նպաստում են մասնագիտացմանը, աշխատանքային գործունեության մեջ աճին: Մակայն դժվար է անդրադառնալ այս հարցերին, առանց մեկնաբանման: Շարունակական կրթության պայմաններում այսօր բացակայում են մասնագիտական ինքնորոշմանն ու ընտրությանն ուղղված հոգեբանական աշխատանքները [3], այսինքն՝ աշխատանքներ տարվում են, բայց դրանք համակարգված չեն և չունեն ընդհանուր նպատակաուղղվածություն: Կարծում ենք, որ հոգեբանական աշխատանքների հիմքում ոչ միայն պետք է դրվի անձի պահանջմունքների և հնարավորությունների գնահատումը, այլև պետք է հաշվի առնվեն աշխատաշուկայում տվյալ մասնագիտության պահանջարկներն ու դրանց ներկայացվող աշխատանքային չափորոշիչները: Տարիների ընթացքում մեր կատարած հետազոտություններն ունեցել են հենց այդ ուղղվածությունը [10]:

Աշխատանքային խմբի մշակած և հավաքագրած տեխնոլոգիաների շնորհիվ դուրս են բերվել այնպիսի սահմանափակումներ, որոնք պայմանավորված են սոցիալական ինստիտուտների համակարգված և համալիր փոխգործունեության բացակայության հետ: Մասնագիտական ինքնորոշման, կողմնորոշման և ընտրության հիմնախնդրի լուծումն այն է, որ հոգեբանական ուղղորդման գործընթացի արդյունավետ կազմակերպումը կհանգեցնի ընդհանուր կրթության համակարգում գործնական մի շարք բարեփոխումների: Առաջին հերթին այն կնպաստի մասնագիտական

պատրաստվածության արդյունավետության բարձրացմանը և կրթություն-աշխատանք անցման դժվարությունների հաղթահարմանը:

Ներկայում աշխատաշուկայում տեղի ունեցող արագընթաց փոփոխությունների և մասնագետների պատրաստման գործընթացի միջև առկա է հակասություն, ինչի մասին բազմիցս ասվել է մեր աշխատանքներում [1; 2; 11; 15]: Մի կողմից՝ ժամանակակից աշխատաշուկան բնութագրվում է համապատասխան մասնագետի պահանջների ոչ հստակ չափորոշիչներով, իսկ մյուս կողմից՝ դպրոցի շրջանավարտներից միայն որոշներն են կողմնորոշված մասնագիտության ընտրության հարցում:

Մասնագիտական պատրաստման նախնական՝ ինքնորոշման փուլում շատերը կարիք ունեն մասնագիտական խորհրդատվության և մասնագիտության ընտրության ուղղորդման, որպեսզի սովորողների մոտ ամբողջական դառնան մասնագիտությունների աշխարհի մասին պատկերացումները: Անհրաժեշտ է, որ նրանք ոչ միայն կողմնորոշվեն իրենց ապագա մասնագիտական գործունեության մեջ, այլև հասկանան, թե ինչպես կարելի է ձեռք բերել հոգեբանական ինքնորոշման ուղղորդում մասնագիտական հետագա աճի և գործունեության համար [3, էջ 16-33]:

Հոգեբանական տեխնոլոգիաներով մասնագիտական պատրաստման նախադրյալների գնահատման համակարգում առանձնացվում են ինչպես սովորողների անհատական առանձնահատկություններն ու կարողությունները, այնպես էլ նրանց մոտիվացիոն ոլորտի ցուցանիշները: Մակայն կարևոր են նաև այն կրթական պայմանները, ծրագրերը, դասավանդման համակարգը, որոնք նպաստում են սովորողի անձի ինքնաձանաչմանը, արդյունավետ զարգացմանը և սովորողների առջև կրթական նոր պահանջների ձևավորմանը: Յուրաքանչյուր շրջանավարտ, մտածելով իր ապագայի մասին, առաջին հերթին որոշում է, թե ինչ մասնագիտություն ընտրի: Կյանքի այդ առանձնահատուկ շրջանում հոգեբաններն արժեքավոր ծառայություն կմատուցեն դեռահասներին, վաղ պատանիներին, եթե օգնեն նրանց տիրապետել ինքնուրույն մասնագիտություն ընտրելու հմտություններին: Սովորողներին պետք է տալ հնարավորություն, որ հենց իրենք ընտրեն իրենց համար ցանկալի՝ այսպես ասած ապագայի կերպարը:

Վստահ կարող ենք ասել, որ սովորողի անձի անհատական-տիպաբանական առանձնահատկությունների իմացությունը և դրանց հետ սո-

վորողի ապագա մասնագիտության համապատասխանություններ գտնելու կարողությունը արդյունավետ ընթացք են տալիս ապագա մասնագիտությունը կրողի պատրաստվածությանը, մասնագիտական որակների ձևավորմանը և որ ամենակարևորն է՝ դրանց գիտակցմանը [1, էջ 55-86]: Սովորողների շրջանում հստակ ձևավորված գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու ունակությունները իհարկե խթանում են մասնագիտական պատրաստվածությունը և լավագույն հիմք են ապագա մասնագիտական հասունության ու աճի: Այսօր դեռևս ինքնաճանաչման և ինքնաբացահայտման հատկությունները չեն ներդրվում ապագայի պլանավորման և մասնագիտական աճի մոդելում. սովորողները հստակ կողմնորոշված չեն իրենց ցանկություններում, նպատակներում և ձգտումներում, անհամապատասխանություն է նկատվում նրանց առարկայական նախասիրության և ապագա մասնագիտական ինքնորոշման միջև [2; 3; 11]: Մրան ի հակադրություն՝ դպրոցական տարիքում կենսական մոտիվացիան բարձր է, ձգտում են հաջողությունների, ինքնուրույն են, նախաձեռնող, ակտիվ և կենսական ուժով լի, սակայն այս ներուժը համապատասխանաբար ուղղորդված չէ ուսման գործընթացին: Կրթություն ստանալու փուլում անձը դեռևս չունի ձևավորված պատկերացումներ ապագա մասնագետի կերպարի և գործունեության մասին: Մասնագիտական պատրաստման հոգեբանական գնահատման տեսանկյունից առաջնահերթ է հոգեբանական աջակցության և ուղղորդման արդյունքում սովորողների մոտ ձևավորել համարժեք ինքնագնահատում, սեփական հավակնություններն ու կարողությունները ինքնուրույն գնահատելու ունակություն, որի շնորհիվ անձի մոտ կարող են ձևավորվել ոչ միայն իրատեսական պատկերացումներ մասնագիտական պատրաստման գործընթացի վերաբերյալ, այլև կձևավորվի որոշակի հեռանկարային «պատկեր»՝ մասնագիտական գործունեության իրականացման և հետագա ընթացքի նկատմամբ: Այս մասին են փաստում նաև մեր կողմից կատարված և ներկայում իրականացվող տեսական և հետազոտական մի շարք վերլուծություններ: Մասնավորապես, դրանց մի մասը փաստում է, որ սովորողների մոտ բարձր է ընդհանուր մոտիվացվածությունը, ինքնուրույնությունը, հստակ են իրենց կենսական որոշումներում, բայց մասնագիտության ընտրության հարցում թույլ են պատկերացումները սեփական գիտելիքների, ցանկությունների իրատեսական գնահատման և նախընտրելի մասնագիտությունների վերաբերյալ: Նաև սովորողների, դիմորդների

րի և աշխատանք փնտրող երիտասարդների մոտ հիմնականում բացակայում են մասնագիտությունների մասին ամբողջական պատկերացումները: Այս ամենը հանգեցնում է մեկ ընդհանրական գաղափարի. մինչև մասնագիտություն ընտրելը անհրաժեշտ է ունենալ մասնագիտությունների վերաբերյալ համակարգված պատկերացումներ, որոնք ոչ միայն պետք է համադրվեն սովորողների կարողությունների և գիտելիքների հետ, այլև պետք է համապատասխանություն ունենան սովորողի անձի սեփական հետաքրքրությունների, ցանկությունների, հակումների և մոտիվացիոն ոլորտի այլ ցուցանիշների հետ: Խոսքը վերաբերում է այնպիսի ցուցանիշների, ինչպիսիք են՝ կենսական ակտիվությունը, ձգտումը սոցիալական կարգավիճակի, ստեղծագործական ակտիվությունը և այլն:

Մասնագիտություն ընտրելուն հաջորդում է կարիերայի առաջնայնության խնդիրը: Այն մշտապես մնում է արդիական և դրսևորվում է առաջխաղացման մեջ խնդիրները հաղթահարելու անհրաժեշտությամբ: Դրանք ծագում են ձգտումների և պահանջների հակասությունների միջև և հաղթահարվում են որոշակի բալանսավորման արդյունքում: Լավագույն լուծումները, իհարկե, պետք է փնտրել տեղեկացվածության, հասարակական բարձր գիտակցության և սեփական հաջողությունների համարժեք գնահատման արդյունքում: Երբ ընտրության առջև կանգնած անձը տեղեկացված է իր և մյուսների հաջողություններից, ունի մրցակցելու և հարմարվելու բավարար կարողություններ, նրա համար բնականոն է դառնում թե՛ մասնագիտություն ձեռք բերելու, թե՛ մասնագիտության մեջ կայանալու և թե՛ մասնագիտական կերպարի հետ նույնականանալու գործընթացը: Կարևոր է, որ կրթական հաստատություններում մասնագիտությունների մասին համապատասխան աջակցություններն ու տեղեկատվական ուղեցույցները լինեն մատչելի, հասանելի և ունենան լայն կիրառություն: Տեղեկատվական ցանկացած ուղեցույց, ձեռնարկ, մեթոդական նյութ և մասնագիտությունների վերաբերող գրքույկ կարող է լրացնել սովորողների անորոշությունն ու տարաձայնությունները հոսքային կամ մասնագիտական ընտրության ճանապարհին: Ի. Կլիմովն իր աշխատություններում առանձնացնում է չորս տարբեր մոտեցումներ, որոնք ուղղակիորեն կապված են մասնագիտական պատրաստվածության, առաջընթացի և կարիերայի հետ. դրանք են՝ անձի անհատական ինքնորոշումը, շրջապատող մեծահասակների անհատական ինքնորոշման ազդեցությունը, մասնագիտական գործնական ազդեցությունների ոլորտը և

գործնական ուղեցույցները՝ որպես երիտասարդությանն ուղղորդող սոցիալական գործընթաց [9]:

Մասնագիտական պատրաստվածությունը անվերջանալի, մշտապես փոփոխվող և զարգացող գործընթաց է: Այն կարող է ընթանալ ողջ կյանքում և ունենալ որակական փոփոխություններ, բարելավումներ, և այդ է պատճառը, որ մասնագիտական տեղեկատվության ցանկացած տիպի ազդեցություն առավել նշանակալի է դառնում, երբ պետք է կատարել ընտրություն կրթական տարբեր փուլերում՝ հոգեբանական ուղղորդման մեխանիզմների ներքո: Սովորողին հնարավորություն է տրվում հետևելու սեփական ցանկություններին և հնարավորություններին, ճանաչելու մասնագիտական ուղղվածությունները, արժևորելու դրանք տարբեր տեսանկյուններից: Այս ամենն իրականացվում է անձի հոգեբանական գնահատման և ուղղորդման ճանապարհով: Սակայն մեր իրականության մեջ շատ դժվար է կատարել ճշգրիտ կանխատեսումներ՝ ի նպաստ ապագա մասնագետի: Կան մի շարք դրույթներ, որոնք համոզիչ են դարձնում ասվածը [11, էջ 50].

- Հոգեբանական, մասնավորապես ինտելեկտի չափման թեստերը, դուրս են բերում անձի զարգացման այն հասանելի մակարդակը, որն առկա է, սակայն մասնագիտական պատրաստման տեսանկյունից կարևոր են այն ձգտումներն ու նվաճումները, որոնք ի հայտ են գալիս գործունեության ընթացքում և ապագա մասնագետը կարող է լինել դրանց պոտենցիալ կրողը: Սակայն ոչ մի գործիքակազմ չի կարող տալ անձի հնարավորությունների փոփոխության հստակ պատկերը:
- Գիտելիքների ձեռքբերման ընթացքում սովորողների մոտ դժվար է գնահատել այս կամ այն գործունեության անհատական ուղղվածությունը կամ ոճը:
- Անձի մոտիվացիոն ոլորտի ցուցանիշները՝ որպես ներքին դրդիչներ, կարող են փոխհատուցել անձի մի շարք սահմանափակումներ, որոնք պայմանավորված են նրա ընդունակություններով:

Մասնագիտական պատրաստման հոգեբանական գնահատման տեսանկյունից ամենակարևոր գործոններից մեկը անձի ինքնուրույնու-

թյունն է: Նախկինում կատարված հետազոտությունների արդյունքներում ընդգծվում էր այն հանգամանքը, որ որքանով սովորողների մոտ արտահայտված էր ինքնուրույնության ցուցանիշը, այնքանով նրանք ավելի հստակ կողմնորոշված էին դեպի մասնագիտությունը և արդեն իսկ ունեին ձևավորված վերաբերմունք ապագա մասնագիտության հանդեպ: Որպես անձնային որակ՝ ինքնուրույնությունը վերաբերում է ինքնուրույն գործելուն, ինքնուրույն որոշումներ կայացնելուն, սեփական արարքներում ինքնուրույն պատասխանատվություն կրելուն: Այն ձևավորում է որոշակի ինքնավերաբերմունք և ինքնահարգանք սեփական հնարավորությունների և կարողությունների հանդեպ, ինչը շատ կարևոր է ոչ միայն մասնագիտական պատրաստման գործընթացում, այլև ողջ կենսագործունեության համար: Ինքնուրույնությունը նաև նպաստում է անձի համարժեք ինքնագնահատմանը և մասնագիտական պատրաստման գործընթացի ճանապարհին այն խթան է դառնում մասնագիտական Ես-ի ձևավորման համար: Մասնագիտական Ես-ը ներառում է մասնագիտական գործունեության մասին համապատասխան պատկերացումները, առաջընթացի հնարավորությունները՝ որպես տվյալ մասնագիտությունը կրողի անձնային աճ ու զարգացման հեռանկարներ: Մասնագիտական Ես-ի ձևավորումը նպաստում է աշխատանքային գործունեությանը հարմարվելուն՝ ապահովագրելով հոգեբանական մի շարք դժվարություններից և սահմանափակումներից: Հակառակ դեպքում երիտասարդ մասնագետը հանդես է գալիս միայն որպես կատարող, ենթակա՝ զերծ մնալով նախաձեռնողականությունից, նոր գաղափարների, ստեղծարար մոտեցումների առաջարկներից, ճկուն գործելակերպից: Կարծում ենք, որ այսօր մեր հասարակության մարտահրավերները հակադարձում են նշվածին՝ կանխատեսելով և կարևորելով ապագա մասնագետների ինքնուրույն գործելառճն ու ինքնահաստատումը մասնագիտական գործունեության մեջ: Ի վերջո, մասնագիտական Ես-ի ձևավորումը նպաստում է աշխատանքային տարբեր խնդիրների և հակասությունների ինքնուրույն լուծման ուղիների մշակմանը ու առավել ևս՝ դրանց կանխարգելման հնարավորությունների ընդլայնմանը:

Մասնագիտական պատրաստման հիմնախնդրի ուսումնասիրման շրջանակներում մեր կողմից կատարված մեկ այլ հետազոտության արդյունքներից պարզ երևում է, որ դեռևս գերակայում են այն մասնագիտությունները, որոնցում առկա են «մարդ-մարդ» հարաբերությունները,

շփումները, տարբեր ծառայություններ՝ կապված մարդկային փոխհարաբերությունների, խորհրդատվությունների հետ: Չանտեսելով և չնվազեցնելով տեխնոլոգիաների ինտեգրումը առօրյա կյանք և մասնագիտական գործունեություն, միևնույն է, մարդը չի բավարարվում տեխնոլոգիաների կիրառմամբ և դրանք ծառայեցնում է ի նպաստ շփումների: Եթե հեռախոսակապ, ուրեմն՝ սենսոր՝ վիզուալ ներկայացուցչականության հնարավորություններով, եթե մասնագիտական գործիքակազմ, ուրեմն՝ առավելագույնս հարմարեցված մարդուն, եթե սարքավորումներ, ուրեմն՝ արհեստական ինտելեկտի փոքր կամ միջին հնարավորություններով և այլն... Մասնագիտական պատրաստման գործընթացի անխուսափելիորեն կարևոր խնդիր է տեխնոլոգիաների տիրապետման համար կարողությունների և հմտությունների ձևավորումը: Սովորողների շրջանում հոգեբանական գնահատման և ուղղորդման համակարգված մոտեցումները նպաստում են մասնագիտական պատրաստման հիմնախնդրի պարզաբանմանը և լուծմանը նպատակաուղղված աշխատանքների իրականացմանը: Այն է՝ խմբային ուղղորդված աշխատանքներ և թրեյնինգներ՝ փորձառու մասնագետների ուղեկցմամբ, քննարկումներ՝ մասնագիտությունների առավելությունների և սահմանափակումների մասին, մասնագիտական բանավեճեր՝ ինքնիրացման հեռանկարների շուրջ և այլն:

Ինչպես արդեն նշել էինք, մասնագիտական պատրաստման գործընթացում կարևորվում է անձի մոտիվացիոն ոլորտը՝ իր ներքին և արտաքին բաղադրիչներով: Այսպես, մասնագիտական կայացման, մասնագիտության մեջ սեփական դիրքորոշումների, հետաքրքրությունների և հակումների բավարարման, ինքնիրացման կայուն հեռանկարների ձևավորման և նպատակների իրագործման համար լավագույն նախապայման են գիտելիքների ձեռքբերման հետ զուգահեռ ապագա մասնագետի անձի հոգեբանական գնահատումն ու ուղղորդումը: Այս առումով կարևորում ենք ոչ միայն հոգեբանական թեստերի, տարաբնույթ գործիքակազմի կիրառումը սովորողների և երիտասարդ մասնագետների շրջանում, այլև նրանց հետաքրքրությունների, հակումների և հնարավորությունների համարժեք գնահատումը, համադրումն ու հակադրումը գնահատվող ցուցանիշների հետ, բաց քննարկումներն ու շփումները մասնագիտական տարբեր հարթակներում:

ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մասնագիտական կրթություն

Մասնագիտական կրթությունը, որը կատարում է մասնագիտական պատրաստվածության գործառույթ, ենթադրում է ձեռքբերման երկու ճանապարհ՝ ինքնակրթություն և կրթություն մասնագիտական հաստատություններում [19, էջ 50]: Մասնագիտական կրթության հաջողությունը սահմանում է այնպիսի կարևոր հոգեբանական բաղադրիչ, ինչպիսին «պատրաստվածությունն» է այս կամ այն մասնագիտությունը ձեռքբերելու ժամանակ (հուզական, դրդապատճառային): Մասնագիտական պատրաստվածության առաջին քայլը մասնագիտական գործունեության ոլորտի ինքնաբացահայտումն է, որը մարդու կողմից իրականացվում է ներքին պաշարների, ներուժի վերլուծության արդյունքում՝ համապատասխանեցնելով մասնագիտությունը պահանջարկի հետ: Հոգեբանական տեսանկյունից մասնագիտություն ընտրելը երկկողմանի գործընթաց է.

ա) ընտրության սուբյեկտ, այսինքն՝ նա, ով ընտրում է,

բ) ընտրության օբյեկտ՝ այն, ինչը ընտրում են:

Ընտրության օբյեկտը և սուբյեկտը սահմանում են մասնագիտական կրթության հեռանկարները [15, էջ 89]: Սա հոգեբանական բավականին բարդ գործընթաց է, և շատ դժվար է ասել, թե այն մարդու կյանքի որ փուլում կարող է դառնալ համարժեք: Մարդը և նրա ընտրած մասնագիտությունը անցնում են միաձուլման, նույնականացման ճանապարհ, մասնագիտությունը դառնում է մարդու կենսագործունեությունը՝ այն հիմնականը, առաջատարը, որով մարդը ապահովում է իր ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական գոյությունը:

Մասնագիտության ընտրությունը միանշանակ փաստ չէ: Մասնագիտության ընտրությունը բաղկացած է մի շարք փուլերից, որոնք միավորված են միևնույն գործընթացում: Ընդ որում, փուլերի հաջորդականությունը կախված է արտաքին պայմաններից և մասնագիտության ընտրության ժամանակ սուբյեկտի անհատական առանձնահատկություններից:

ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մեր երկրում և հարակից տարածաշրջաններում տեղի ունեցող փոխակերպումները, եվրոպական կրթական համակարգի ներմուծումը, մասնագիտությունների մասին պատկերացումները, ընկալումները և դրանց ներկայացվող պահանջները առաջ են բերում կրթության հիմնախնդիրների վերանայման, կրթության կազմակերպման միջոցների վերափոխման անհրաժեշտություն, որոնք ուղղված կլինեն ժամանակակից մարդու զարգացմանը:

Ներկա ժամանակաշրջանում բարձրագույն կրթությունն ընթանում է մասնագիտական պահանջարկի և աշխատաշուկայում ունեցած մրցակցության հիման վրա: Ժամանակակից մասնագետը պետք է ունենա բարձր որակի պատրաստվածություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակություններ և ստեղծարարական հմտություններ, մասնագիտական գործունեության նպատակների համար տեղեկատվական լայն հոսքում ընտրություն կատարելու և դրանք զարգացնելու կարողություններ, ինչպես նաև ինքնակատարելագործման և անընդհատ ինքնագնահատման ներուժի դրսևորումներ:

Սովորողների մասնագիտական պատրաստվածության հիմնաքարը ինքնուրույնությունն է, հատկապես մասնագիտական կրթության և մասնագիտական որակների զարգացման հարցում: Ինքնուրույնության զարգացումն է հնարավորություն տալիս ինքնաձանաչման և ինքնագնահատման որակների ձևավորմանը, որոնք բազմակողմանի ապահովում են սովորողի անձի արդեն մասնագիտական ինքնուրույնությունը: Մասնագիտական գործունեության հոգեբանության ոլորտի գիտական աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինքնուրույնությունը մի կողմից՝ հանդես է գալիս որպես անձնային որակ, մյուս կողմից՝ որպես գործունեության կամ ակտիվության տեսակ, որն ուղղված է վարքի համակարգմանը, պլանավորմանը և կառավարմանը: Այս առումով խիստ կարևորվում է հատկապես բարձրագույն կրթական համակարգում ուսանողների ինքնուրույնության ձևավորման հիմնախնդիրը՝ և՛ որպես գործունեության ձև, և՛ որպես ակտիվ ուսանողի կերպարի ձևավորում:

Մասնագիտական պատրաստվածության համար միանշանակ առաջանային դեր ունի սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարման հմտությունների ձևավորումը: Հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ է ներկայացված Օ. Վ. Մակարովայի և Տ. Գ. Կնյազևայի հոդվածներում, որոնցից մեկում նշվում են այն պայմանները, որոնք կարող են ապահովել սովորողների մասնագիտական պատրաստվածությունը: Դրանք են՝

- ✓ ուսանողների մոտ ապահովել կրթական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ և ունակություններ,
- ✓ ապահովել գիտելիքների անընդմեջ զարգացման հոգեբանական պատրաստվածություն,
- ✓ սովորեցնել կողմնորոշվել գիտական տեղեկատվական հոսքի մեջ,
- ✓ ստեղծել բազային հիմքեր ապագա մասնագետի աշխատաշուկայում մրցակության համար [14, էջ 317-327]:

Համախմբելով մի շարք հեղինակների ուսումնասիրությունները՝ Գ. Ս. Պրիգինը իր աշխատության մեջ փաստում է, որ մասնագիտական ինքնուրույնությունը անձնային որակ է, որը բնորոշվում է որպես տվյալ մասնագիտության մասին խորը և կայուն գիտելիքների ձեռքբերման ընդունակություն, ենթադրում է մտածողության միջոցների կիրառություն, ազատ կողմնորոշում, ինքնուրույն խնդիրների դուրսբերում և նպատակների ձևակերպում: Ինքնուրույնությունը ենթադրում է նաև անձի այնպիսի հատկություն, որի շնորհիվ վերջինս կկարողանա փոխել իր գործողությունները՝ արտաքին և ներքին դրդիչների փոփոխություններով պայմանավորված [16]:

Մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրը կապված է սոցիալական զարգացման հետ, որտեղ առաջնային պահանջները ձևավորվում են անձի բնութագրական հատկանիշներով: Հասարակական գործունեության տարբեր ոլորտներում կարևոր է անձի գիտակցաբար ընտրություն կատարելու պատրաստվածությունը, ցանկացած իրադրությունում նախաձեռնողականություն ցուցաբերելը, առաջադրված նպատակներին հասնելու կայունությունը, դժվարությունները ակտիվորեն

հաղթահարելը, սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելը: Մոցիալական այս մարտահրավերները համապատասխանաբար թելադրում են անձին լինել ինքնուրույն կամ ցուցաբերել ինքնուրույնություն կենսական, հասարակական, մասնագիտական գործունեության անընդհատ փոփոխվող պայմաններում:

Մասնագիտական ինքնուրույնության՝ որպես սովորողի անձնային հոգեբանական պատրաստվածության նախապայմանի ձևավորման հիմնախնդիրն արդիական է բոլոր մասնագիտություններում: Վերջին տարիների ընթացքում տարբեր երկրներում կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, որոնք ուղղված են եղել մասնագիտական որակները բացահայտելուն, որտեղ առաջնային է համարվել հենց մասնագիտական ինքնուրույնության ձևավորումը: Մասնագիտական ինքնուրույնության՝ որպես անձնային որակի ձևավորումը մասնագետները տեսնում են ուսումնական գործընթացում, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մեջ՝ շեշտադրելով հատկապես մասնագիտական կուրսային գիտելիքի ձևավորմանն ու զարգացմանը ուղղված առարկայական ծրագրերի համապատասխան մշակման անհրաժեշտությունը [5, էջ 70-60]:

Վերլուծելով վերը նշված մոտեցումները՝ տեսնում ենք, որ ինքնուրույնությունն ու սեփական կարողությունների համարժեք ինքնագնահատումը՝ որպես անձնային որակներ, դեռևս ձևավորվում են դպրոցական տարիներին, իսկ բուհում դրանք արդեն վերածվում են մասնագիտական ինքնուրույնության [13, էջ 63-69]: Սա է հոգեբանական այն խնդիրը, որ ավագ դպրոցականները, որոնց մեջ չեն ձևավորում ինքնուրույնության բազային ընդունակություններ, նաև չեն դրսևորվում կամ թույլ են դրսևորվում նրանց մասնագիտական հետաքրքրություններն ու ուղղվածությունը: Հետագայում բարձրագույն կրթական համակարգում (առավելապես կրթության առաջին տարիներին), արդեն ուսանող կարգավիճակում ունենում են լուրջ դժվարություններ՝ սկսած գիտելիքների ձեռքբերման գործընթացից մինչև հոգեբանական և մասնագիտական պատրաստվածություն:

Անձի մասնագիտական ինքնուրույնությունը կարելի է դիտել որպես ինտեգրալ հատկություն, որի շնորհիվ անձը կարողանում է ընդունել և իրացնել մտածված, հիմնարար որոշումներ, ինչպես նաև կրել դրանց հա-

մար լիիրավ պատասխանատվություն: Մասնագիտական ինքնուրույնությունը ծագում է ճանաչողական ակտիվությունից և մտածողության ինքնուրույնությունից, որոնք ձեռք են բերել մասնագիտական ուղղվածություն [9, էջ 45-49]: Ըստ այդմ, մասնագիտական ինքնուրույնությունը հենց այն հիմնարար օղակն է մասնագիտական պատրաստվածության համար, որը պարուրված է որոշման կայացման գործընթացով: Հիշենք, որ այդ գործընթացը ենթադրում է նպատակի գիտակցում, դրդապատճառների և ներանձնային կոնֆլիկտների հասկացում, ընտրություն և գործողությունների պլանավորում: Ահա նաև այն հստակ ուղին, որը տանում է մասնագիտական պատրաստվածության՝ մասնագիտության ընտրությունից մինչև մասնագիտական կատարելագործում:

Ուսումնասիրելով արևելյան երկրներում կրթության կազմակերպման համակարգերը, հետազոտությունները, որոնք ամփոփված են Ե. Դ. Ժուկովի «Ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպումը իսլամական կրթությունում» (2013 թ.) աշխատության մեջ, կարող ենք նշել, որ դրանց հիմքում ընկած են հոգեբանական այնպիսի գործոններ, ինչպիսիք են սովորողների պատրաստվածությունը մասնագիտական գործունեության, ինքնուրույնությունը, իրենց ուժերի նկատմամբ վստահությունը, ստեղծագործական ներուժը, մոտիվացվածությունը և հնարավորությունների զարգացումը [7, էջ 20]:

Մասնագիտական պատրաստվածության առանձնահատկություններից կարևորվում են նաև՝

- Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառությունը: Կան բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ ուսանողների հիմնական ակտիվությունն ուղղված է տվյալ բուհի էլեկտրոնային կայքերից, գրադարաններից, ուսումնական նյութերից, փոստարկղերից, առցանց խորհրդատվություններից և տեղեկատվական այլ ուղիներից օգտվելուն:
- Գիտահետազոտական աշխատանքների որակի գնահատման հստակ չափանիշների առկայությունը, կատարման ժամկետների վերահսկողությունը, պատրաստված նյութերի հանրային պաշտպանությունը:
- Պրոֆեսորադասախոսական կազմի հետ յուրաքանչյուր ուսանողի փոխհարաբերությունների կառուցումը և գիտական մթնոլորտի ապահովումը [9, էջ 46]:

Ուսումնասիրելով Ռուսաստանի բարձրագույն կրթական համակարգը՝ անհրաժեշտ է նշել, որ վերջինիս մեծագույն առավելությունը ուսանողների բազմաբնագավառային տեսական խորքային գիտելիքների մատուցումն է (այդպես է նաև ՀՀ բարձրագույն կրթական համակարգում), որը ուսանողներին տալիս է գիտական լայն աշխարհայացք, մտածողության ճկունություն, տեսամեթոդաբանական գիտելիքներ:

Սովորողների մասնագիտական պատրաստվածությունը իրականացվում է նաև տեսական և գործնական նյութերի ապահովմամբ, ուսանողների անհատական պատրաստվածության, հետաքրքրությունների, ուղղվածությունների հիման վրա անհատական հանձնարարությունների կատարմամբ: Այն ձևավորում է սովորողների մասնագիտական ինքնուրույնություն և մոտիվացվածություն, ինքնուրույն աշխատանքների կատարման կարողություն, ինքնուրույն աշխատանքի կազմակերպման հմտություններ, ինքնուրույն աշխատանքների կատարման նպատակների և միջոցների հստակեցում [18, էջ 3]:

Ապագա մասնագետի պատրաստվածության դերը առավել կարևորվում է ավագ դպրոցականների կամ առաջին կուրսի ուսանողների հա-

մար, երբ նրանք կանգնում են սեփական անձի, Ես-ի, ինքնահասկացման և ինքնաճանաչման, ներքին և արտաքին դրդապատճառների գնահատման, վարքի և ժամանակի կառավարման ունակությունների զարգացման առջև [1]:

Միևնույն ժամանակ տեսական և գործնական հարթակում այդքան էլ պարզ չեն սովորողի անձի հոգեբանական ուղղորդման տեխնոլոգիաները, որոնք կնպաստեն պատանիների մասնագիտական ինքնորոշմանը: Այս համակարգում առանձնակի դեր ունեն ոչ միայն կրթական պայմանները, ծրագրերը, դասավանդման համակարգը և սովորողների առջև դրված կրթության որակի պահանջները, այլև սովորողի անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները [1]: Յուրաքանչյուր շրջանավարտ, մտածելով իր ապագայի մասին, առաջին հերթին որոշում է, թե ինչ մասնագիտություն ընտրի: Կյանքի այդ առանձնահատուկ շրջանում հոգեբաններն արժեքավոր ծառայություն կմատուցեն դեռահասներին, եթե օգնեն նրանց տիրապետել ինքնուրույն մասնագիտություն ընտրելու հմտություններին: Սովորողներին պետք է տալ հնարավորություն, որ հենց իրենք ընտրեն իրենց համար ցանկալի, այսպես ասած՝ ապագայի կերպարը, ինչու չէ՝ կիրառելով մասնագիտություն ընտրելու հայտնի բանաձևը՝ «Ուզում եմ», «Կարող եմ», «Պետք է» [10, էջ 12]:

Անձի հոգեբանական գնահատման տեսանկյունից սովորողի կրթական նպատակների ձևավորման գործընթացի փուլային հեռանկարը ներառում է մոտակա իրագործելի նպատակներից մինչև ապագայի երազանքը՝ որպես գերնպատակ: Կրթության որևէ փուլի ավարտը առաջադրում է նոր ընտրություն, շարունակելիության նոր գիտակցում և նոր նպատակ, որը հետագայում ծառայելու է մասնագիտական պատրաստմանը, աշխատանքային գործունեությանը [3, էջ 389-395]:

Այսօր ժամանակակից երիտասարդների համար մասնագիտության, աշխատանքի, կրթության, կարիերայի հետ կապված բազում խնդիրներ կան, որոնց արդյունավետ լուծումը պահանջում է անձնային որակների և ներուժի ճիշտ կառավարում: Այն ընդգրկում է անձնային ինքնորոշման ողջ շրջանակը՝ անձնային աճ, կյանքի ոճ, արժեքային համակարգ, հավակնությունների մակարդակ, գիտելիքների պաշար և այլն: Հոգեբանորեն տրամադրված ապագային և հակված նույնիսկ թռչելու դեռևս չիրականացած փուլերի վրայով՝ երիտասարդներին ներքուստ արդեն ճնշում է

հանրակրթությունը, դպրոցական կյանքը թվում է ժամանակավոր, անիրական, մեկ այլ՝ առավել հարուստ և իրական կյանքի նախաշեմ, որը միաժամանակ և՛ գրավում է, և՛ վախեցնում [8, էջ 87]: Ավագ դպրոցականը հասկանում է, որ այդ ապագա կյանքի բովանդակությունը ամենից առաջ կախված է այն բանից, թե ինքը կկարողանա՞ արդյոք ճիշտ մասնագիտություն ընտրել և նույնականանալ նրա հետ: Երիտասարդության շրջանում որքան հստակ է նկատվում երիտասարդի անհատական դիմանկարը, այնքան ճանաչելի են նրա այն անհատական առանձնահատկությունները, որոնք իրենց ընդհանրության մեջ ձևավորում են նրա անձնային պաշարները: Այս պարագայում մենք կարող ենք հավաստել, որ անձը պատրաստ է մասնագիտական ինքնորոշման և մասնագիտության ընտրության [1]:

Անդրադառնալով մասնագիտական պատրաստվածությանը՝ կարող ենք ասել, որ այն անձի կենսագործունեության անբաժանելի մասն է կազմում՝ սկսած դեռևս նախադպրոցական տարիքից, երբ երեխան ծանոթանում է մեծերի աշխարհին: Հետագա ուսումնական գործունեության մեջ առանձնակի նշանակություն են ստանում անձի մասնագիտական ինքնորոշումը, մասնագիտությունների մասին ունեցած տեղեկատվությունն ու պատկերացումները: Այդ իսկ պատճառով, հատկապես, ավագ դպրոցական տարիքը վճռորոշ շրջան է մասնագիտական ինքնորոշման և ընտրության համար: Պատանեկությունից երիտասարդության անցման տարիքում ձևավորվում են աշխարհընկալումը, սոցիալական դիրքորոշումները, աշխարհայացքը, արժեքային և դրոպապատճառային համակարգը [12]: Բազմաթիվ հոգեբաններ (Ա. Ադլեր, Զ. Ֆրեյդ, Է. Էրիկսոն, Ա. Մասլոու, Ա. Բանդուրա) անդրադարձել են այս տարիքի նորագոյացությունների, հոգեբանական փոփոխությունների, անձնային հիմնախնդիրների ուսումնասիրմանը, և թերևս բոլորն էլ անձի կենսագործունեության մեջ կարևորել են մասնագիտության դերը և դրանում մասնագիտացված լինելը [20]: Ա. Ադլերը նույնիսկ առանձնացնում է մասնագիտական գործունեությունը որպես հոգեկան առողջության չափանախշ և նշում է, թե որքանով է կարևոր անձի առողջ կենսագործունեության համար մասնագիտության ոլորտում ինքնիրացումը, ինքնաբավարարվածությունը և պրոֆեսիոնալիզմը [4; 20]:

Ըստ Ի. Կոնի՝ մասնագիտության ընտրության հարցում կարևորվում են երիտասարդների սոցիալական ինքնորոշումը՝ սեփական կարողությունների և հատկությունների, ունակությունների և գիտելիքների ինքնագնահատումը: Մա իհարկե բարդ և բազմաբովանդակ գործընթաց է, որը ներառում է կյանքի հեռանկարների, մասնագիտությունների, աշխատանքի (գործունեության) հանդեպ վերաբերմունքի և ինքնագիտակցության բաղադրիչներ [12]:

Սոցիալական ինքնորոշումը դժվար է ձևավորվում վաղ երիտասարդության շրջանում, երբ անձի մեջ տեղի են ունենում հոգեբանական և ֆիզիոլոգիական, տարիքային և սեռադերային փոփոխություններ, ներքին անձնային դրդապատճառային և արժեհամակարգային իմաստավորումներ: Սոցիալական ինքնորոշումն անմիջականորեն կապված է անձի «Ինքն»-ի որոնման հետ [12, էջ 185]: Մի փոքր մեկնաբանենք այս փոխկապվածությունը: Ի. Կոնն իր աշխատությունների մեջ, որոնք հիմնականում նվիրված են պատանեկության և երիտասարդության տարիքի հիմնախնդիրներին, առանձնացնում է երկու հիմնական հասկացությունների ձևավորման կարևորությունը՝ «Ես» (Я) և «Ինքը» (Себя): Առաջին հայացքից թվում է, թե այս երկու հասկացությունների միջև գրեթե տարբերություններ չկան, սակայն խորքային ուսումնասիրությունները, այդ թվում նաև հասկացությունների անգլալեզու հիմքերի դիտարկումները ևս մեկ անգամ փաստում են «Ես» և «Ինքը» բառերի իմաստային տարբերությունները: Կարևոր ենք համարում նշել, որ Կոնը նույնպես առանձնացնում է վերջիններս՝ ներկայացնելով դրանք որպես «Ես»-ի բացահայտում (открытие Я) և ինքնաորոնում (поиск Себя) [12]:

Արտերկրյա հոգեբանական աշխատանքներում և հետազոտություններում հաճախ ենք հանդիպում ինքն կամ ինքնա (self) կիրառությանը, որն առավել բնորոշվում է որպես անձնային համակարգ (self system), և որի օգնությամբ մարդը կարողանում է տարբերակել ներանձնային և արտաքին օբյեկտիվ երևույթների փոխադարձությունը [22]:

«Ինքը» տերմինը արևմտյան հոգեբանության մեջ զուգահեռաբար կիրառվում է նաև որպես «Ես»-համակարգ, ինչը ռուս և հայ գրականության մեջ հստակ տարանջատված է: Անգլալեզու գրականության մեջ բացի self-ից որպես հարակից հասկացություն կիրառվում է նաև oneself կամ myself

տերմինը, որը մայրենի լեզվով թարգմանելու դեպքում մենք գործ ունենք հենց այն ինքն-ի հետ, որը ռուս գրականության մեջ առկա է որպես cam:

Տերմինաբանական այս խառնաշփոթն ուսումնասիրելու անհրաժեշտություն կա, քանի որ, եթե մենք գործ ունենք ինքը տերմինի հետ, ապա պետք է հասկանալ դա անգլալեզու և ռուս գրականության մեջ self-себя, թե՛ self/oneself կամ myself cam թարգմանություններն են: Հոգեբանական մասնագիտական գրականությունում նշվում է, որ ինքը տերմինը ներառում է հետևյալ տարրերը՝ անձնային բաղադրիչներ, հուզական գործընթացներ, նպատակային սպասումներ և արժեհամակարգ, ինքնակառավարման ռազմավարություն (Mischel Morf 2003, Mischel Shoda 1995, 2008): Oneself տերմինի, ինչպես նաև myself, him/herself, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ներառում է ոչ միայն վերը նշված կոգնիտիվ, հուզական և վարքային բաղադրիչները, այլ նաև ֆիզիկական գոյությունը, և բացատրվում է որպես մտավոր և ֆիզիկական գործողություններ կատարելու ինքնուրույնություն՝ ինքնուրույն կարողություն [22]:

Սոցիալական ինքնորոշման ավելի բարդ մեխանիզմ հանդիպում ենք Ջ. Ռոտերի կողմից մշակված «Սոցիալական ուսուցում» տեսության մեջ, որը գործնական մեծ տարածում գտավ, երբ 1966 թվականին լույս տեսավ «Ընդհանրացված սպասումները ներքին ամրապնդման համար՝ ի տարբերություն արտաքինի» աշխատությունը: Սոցիալական ուսուցման տեսության հիմնական գաղափարներն են՝ պահանջմունքը, պահանջմունքային ներուժը և ընդհանրացված սուբյեկտիվ սպասումները: Համաձայն Ջ. Ռոտերի՝ պահանջմունքը ուսուցանվող վարքի վերացարկում է (աբստրակցիա), որն ունի ընդհանրացված ուղղվածություն: Առաջադրվել էր այն, որ անհատական վարքի տարբեր տիպերը դառնում են գործառության փոխկապակցված՝ ուսուցման և ընդհանրացման գործընթացներում: Վարքի տիպերի գործառության կապերը կփոփոխվեն, երբ դրանց զուգընթաց փոփոխվեն պայմանները [24]:

Չնայած շատ հեղինակներ են համաձայնում ինտերնալության և էքստերնալության ընդհանրացվածությանը, այնուհանդերձ անձնային բազմաթիվ որակներ էական դեր են խաղում այդ ընդհանրացումներում: Անձնային այդպիսի որակներ են ընդունակությունները, հաջողության ձգտումը կամ նվաճման միտումը, հավակնությունների մակարդակը և ինքնագնահատականը [24; 20]: Այս որակների ամբողջությամբ և փոխադարձվա-

ծությամբ է տեղի ունենում նաև սուբյեկտիվ վերահսկումը՝ ինտերնալության և էքստերնալության ուղղություններով: Սուբյեկտիվ վերահսկման արդյունավետությունը կարող է հանգեցնել նաև մասնագիտական ինքնուրույնության և ինքնորոշման կայունության: Սուբյեկտիվ վերահսկման արդյունավետության մասին խոսելիս մենք նշում ենք երկու հանգամանք՝ ինչ-որ մեկը, այսինքն՝ գործունեություն իրականացնող սուբյեկտը, ինչ-որ բան՝ գործունեության ընթացքն ու արդյունքը: Գործունեության արդյունավետությունը ակնհայտ է դառնում այն դեպքում, երբ գործունեություն իրականացնողը ցուցաբերում է ինտերնալ վերահսկում [20]: Հիմք ընդունելով այս հանգամանքը և այն տեղախոփելով մասնագիտական գործունեության արդյունավետության դաշտ՝ կարող ենք ասել, որ գործունեության արդյունավետությունը պայմանավորված է գործունեություն իրականացնող անձի մասնագիտական ինքնակառավարումից կամ այդ գործունեության ընթացքում ցուցաբերած ինքնուրույնությունից:

Չոգեբանական հանրագիտարանում **ինքնուրույնություն** տերմինը առանձին ներկայացված չէ. այն քննարկվում է ինքնակառավարում (self control) տերմինի ներքո և համադրվում է կամքի ազատության, պատասխանատվության և «**Ես**»-ի դերակատարումներով [17, էջ 773-774]:

Ինքնուրույնության մեկ այլ դրսևորում է որոշման կայացումը: Դրան անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, ովքեր այն կապում են մարդու կամային գործընթացների, նպատակադրման, գիտակցված ընտրության, իրադրությունից կամ անորոշությունից ելքեր փնտրելու գործընթացների հետ: Ըստ Պ. Կ. Անոխինի՝ որոշման կայացումը հոգեկան գործընթացներից ամենաբարդն է, քանի որ ներառում է անձի հուզականային, դրդապատճառային և ինտելեկտուալ կողմերը՝ պայմանավորված անձնային առանձնահատկություններով [16, էջ 53]: Որոշման կայացման գործընթացը քննարկելու անհրաժեշտություն կա, քանի որ ինքնուրույնությունը հանդես է գալիս հենց որպես որոշման կայացման առանցք: Տ. Կորնիլովան որոշման կայացման գործընթացը դիտարկում է մի նոր տեսանկյունից՝ այն կապելով մարդու ինտելեկտուալ որակների հետ: Նա առանձնացնում էր անգամ ինտելեկտուալ որոշումները, որոնց հիմքում ընկած են մարդու ռացիոնալությունն ու դրդապատճառային համակարգը [2, էջ 82-83]:

Հիմնվելով այս մեթոդաբանությանը՝ կարող ենք ասել, որ մասնագիտական գործունեության մեջ (սկսած ուսուցման ընթացքից մինչև մասնագիտության ընտրություն և մասնագիտական կրթություն) ինքնուրույնությունը դրսևորվում է որպես անձի առաջնային որակ:

Ի. Կոնը և նրա աշխատության մեջ ներկայացված մի շարք հեղինակներ (Ի. Ա. Բունին, Ե. Ա. Կլիմով (1970 թ.), Ն. Օ. Միպաչևա (1987 թ.) և ուրիշներ) հավաստում են, որ անձի ինքնորոշման գործընթացը ուղղվում է անձի համար մեծ նշանակություն ունեցող հետևյալ հարցերին.

- *կյանքի իմաստավորմանը, կենսագործունեության պլանավորմանը և հեռանկարների կառուցմանը,*
- *մասնագիտության ընտրությանը, մասնագիտական հեռանկարներին, մասնագիտական գործունեությանն ու աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը:*

Ըստ Ի. Կոնի՝ այս գործընթացն ունի երկու կողմ: Մի կողմից՝ անձի արժեքային համակարգն է և անհատական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ դպրոցն ու կրթության կազմակերպումը: Այս առումով առանձնացվում է մասնագիտական ինքնորոշման հիմնական չորս փուլ, որոնք ներկայացված են ստորև:

• Փուլ 1. Նախադպրոցական տարիքում խաղային և ուսուցման տարբեր միջոցներով մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության ապահովում, մասնագիտական դիրքորոշումների ձևավորում:

• Փուլ 2. Դեռահասության տարիքի ֆանտազիաները. երբ երեխան իր երազանքներում տեսնում է իրեն այս կամ այն մասնագիտության կրող կամ գործունեություն որևէ տեսակի մեջ ակտիվ, երագում է դառնալ իր համար կատարյալ և բաղձալի մասնագիտության տեր մարդ:

• Փուլ 3. Պատանեկության տարիքը, որը հենց ինքնին բնութագրական է որպես մասնագիտության ընտրության շրջան: Այստեղ տեղի է ունենում գիտելիքների, ունակությունների և կարողությունների գնահատում և դրանց՝ մասնագիտական գործունեության հետ համապատասխանեցում: Պատանիների մոտ այս պարագայում առաջնային են դառնում իրենց հետաքրքրությունները, ցանկությունները, անձնային առանձնահատկությունները, այդ թվում՝ նրանց նպատակասլացությունը, համա-

ռությունը, որոշումների հստակությունը, ձգտումները, անձի արժեքային-կողմնորոշիչ և դրդրապատճառային համակարգը, նրանց հավակնությունների մակարդակը:

• Փուլ 4. Մասնագիտության ընտրություն և մասնագիտական գործունեություն [12, էջ 196-197]:

Վերլուծելով Ի. Կոնի կողմից առաջադրված մասնագիտական կայացման՝ որպես անձի դինամիկ զարգացման կարևոր բաղադրիչի փուլային դասակարգումը, տեսնում ենք, որ արդի դարաշրջանում հոգեկան և ֆիզիկական զարգացման նշանակալի փոփոխությունները, արտաքին միջավայրային նորանոր մարտահրավերները և տեխնիկական հզոր տեղաշարժերը ստեղծում են վերը նշված փուլերի վերադասակարգման անհրաժեշտություն: Նմանատիպ դասակարգում է կատարել նաև Ե. Ա. Կլիմովը (1998 թ.), ով կարևոր է համարում հատկապես անձի մասնագիտական կայացման ընթացքը՝ հիմքում դնելով այն որակներն ու հատկությունները, որոնք համապատասխանում են տվյալ մասնագիտությանը կամ ծառայում են այդ մասնագիտությանը: Ընդհանրացնելով նրա մտեցումները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ փուլերը:

Առաջին փուլը անձի մասնագիտական կայացումն է՝ կապված անձի աշխատանքային և մասնագիտական կյանքում նրա ընդհանուր զարգացման և աշխատանքային գործունեության տարբեր ոլորտներում առաջնային կողմնորոշման ազդեցության տակ մասնագիտական մտադրությունների սկզբնավորման և ծագման հետ: Այս փուլի հաջող անցկացման հոգեբանական չափանիշ է անձի և հասարակության պահանջներին մասնագիտության ընտրության համապատասխանությունը:

Երկրորդ փուլը մասնագիտական կրթության ընթացքն է, այսինքն՝ ընտրած մասնագիտական գործունեության պատրաստվածության ձեռքբերման և մասնագիտական վարպետության բոլոր նրբությունների տիրապետման փուլը: Այս փուլի հաջող անցկացման չափանիշ է անձի մասնագիտական ինքնորոշումը, այսինքն՝ անձի՝ որպես մասնագիտության սուբյեկտի հանդեպ վերաբերմունքի և մասնագիտական ուղղվածության ձևավորումը, որում բավական հստակ արտացոլվում են այն պայմանները, որոնք անհրաժեշտ են մասնագիտական նշանակալի որակների ձեռքբերման համար:

Երրորդ փուլը վերաբերում է ակտիվ ներթափանցմանը մասնագիտական միջավայր, որը նկարագրում է սովորողի գործունեության անցումը նոր ձևի՝ աշխատանքայինի՝ տնտեսության կամ արտադրության տարբեր պայմաններում: Այս փուլի հաջող անցկացման հոգեբանական չափանիշը իրական աշխատանքային պայմաններում մասնագիտությանը լիիրավ տիրապետելն է, աշխատանքային թիմում կամ միջավայրում դրսևորվելը կամ ինքնահաստատվելը:

Չորրորդ փուլը ենթադրում է մասնագիտական հեռանկարների լրիվ կամ մասնակի իրականացում, աշխատանքային գործունեության մեջ անհատի հնարավորությունների ինքնուրույն դրսևորում: Այս փուլի հաջող անցկացման հոգեբանական չափանիշ է մասնագիտական գործունեության գործառնական կողմի տիրապետման և անձի մասնագիտորեն նշանակալի որակների ձևավորման մակարդակը, վերաբերմունքը աշխատանքի հանդեպ, վարպետության և ստեղծարարության աստիճանը [11, էջ 174-198]:

Երիտասարդների կրթության տեսական և գործնական բազմաթիվ գաղափարախոսությունների ուսումնասիրություններում ինքնուրույնությունն այն հիմնախնդիրներից է, որը հաճախ առաջ է բերում հասկացության շփոթմունք: Այս հասկացությունը հարաբերակցվում է բազմաթիվ հարանման այլ հասկացությունների հետ, որոնք հաճախ օգտավորվում են որպես հոմանիշ և համանուն: Օրինակ՝ մասնագիտական ինքնուրույնությունը կարող է ներառել ինքնուսուցում, ինքնավար կրթություն, անկախ հետազոտություն, հեռակա կրթություն և այլ հասկացություններ: Մրանք կիրառության մեջ երբեմն հստակ տարբերվում են, երբեմն էլ առաջ են բերում շփոթություն, հատկապես երբ չեն մեկնաբանվում դրանց՝ որպես ինքնուրույնության հոմանիշ օգտագործելու պատճառները: Այնուամենայնիվ, ինքնուրույնության և նմանօրինակ հասկացությունների հետ փոխկապակցվածության հիմնախնդիրն ուսումնասիրվել է բազմաթիվ հեղինակների կողմից և քննարկվել է տարբեր տեսանկյուններից:

Գ. Ս. Պրիգինը իր «Ինքնուրույնության հոգեբանություն» մենագրությունում ցույց է տալիս, որ մարդու գործունեության կամ ակտիվության օրինաչափությունների վերաբերյալ հոգեբանության տեսությունների պայքարը ընթացել է երկու հիմնական ուղղություններով՝ մարդու վարքի վրա արտաքին (Սկիններ) և ներքին (Չ. Ֆրեյդ) գործոնների ազդեցության

ուսումնասիրությամբ: 1920-ական թվականներին Կ. Գ. Յունզը անձի տիպաբանական առանձնահատկությունների ուսումնասիրության առանցքում դրեց ինտրովերսիա և էքստրովերսիա հասկացությունները, որոնք հետագա զարգացում ստացան Հ. Այզենկի տեսություններում: Այս հասկացությունները համեմատական հոգեբանության ոլորտում որպես անձնային գործոններ դիտարկել են նաև Հ. Ա. Վիտկին և ուրիշներ (1962), որոնք նրա աշխատություններում բնութագրվում են որպես կոգնիտիվ ոճի երկու հակադարձ բևեռներ՝ անվանվելով կախվածություն – անկախություն: Հետագայում այս և նմանատիպ հասկացությունները շրջանավեցին ոչ միայն անձի բնութագրական հատկանիշների կամ որակների տեսանկյունից, այլև մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ միջանձնային հարաբերություններում, որոշման կայացման, գործունեության պլանավորման, մասնագիտության ընտրության, ինքնիրացման, սոցիալականացման դրսևորման տեսանկյուններից: Հոգեբանության ժամանակակից ոլորտներում և բնագավառներում կատարված գիտափորձարարական հետազոտությունները, որոնք իրականացվում են տարբեր երկրներում, վերը նշված հասկացությունների կառուցվածքում մեծ ուշադրություն են դարձնում ներքին մոտիվացիայի խնդրին: Համաձայն Ռ. Ուայթի (1959) Ե. Դեսիի (1975), Մ. Լեպերի (1980)՝ ներքին մոտիվացիան դրսևորվում է այն իրադրություններում, որտեղ արտաքին խթանիչները չունեն այն համապատասխան ուժը, ինչ գործունեություն իրականացնող սուբյեկտի ներքին դրդիչները: Այդպիսի իրադրություններ են համարվում գիտելիքների ձեռքբերման, ուսումնառության, մրցակցության գործընթացները [16, էջ 24-33]: 2010-12 թթ. Մեուլում, Կորեայի առողջապահության նախարարության և երիտասարդների ինքնուրույնության աջակցության կենտրոնի կողմից կատարվել են հետազոտություններ կրթություն ստացող երիտասարդների մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ, որտեղ առանձնացրել են հետևյալ բաղադրիչները՝

- ա) հետաքրքրությունն ակտիվացնող կրթություն – ինքնուրույնություն ներառող կրթական ծրագրերը երիտասարդների մոտ ձևավորում են նաև ինքնուրույնության հմտություններ բոլոր հարցերում՝ առավելապես կյանքի ինքնակարգավորման,
- բ) աշխատանքների կատարումը սեփական դատողություններից ելնելով, որի միջոցով արդյունավետ է դառնում երիտասարդների որոշումներ կայացնելը և գործունեության արդյունավետություն ապահովելը,
- գ) սեփական հաջողության կամ անհաջողության գնահատման ներքին չափորոշիչների առկայություն, որի ձևավորումը առաջարկում են սկսել դեռ վաղ տարիքից, որպեսզի արդեն ավելի հասուն տարիքում կարողանան ճիշտ գնահատել և օգտագործել սեփական հնարավորությունները [23]:

Վերը նշված վերլուծություններից նկատում ենք, որ հոգեբանության մեջ բազմաթիվ ուղղություններով քննարկվում է մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրը, և գրեթե բոլոր գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ մասնագիտական պատրաստվածության հիմնաքարը անձի ինքնուրույնության որակն է, որն ըստ այդմ կազմում է նրա ինքնադրսևորումների տարբեր ձևերը: Մարդն իր կյանքի ընթացում մասնագիտական գործունեության հետ կապված միջինը հինգ անգամ որոշում է կայացնում, որոնք էական նշանակություն ունեն նրա ողջ կյանքի ընթացքի և բովանդակության համար: Սովորողների մասնագիտական գործունեությանը հոգեբանորեն պատրաստված լինելը գործնականում իրատեսական է՝ անկախ նրա կազմակերպման ձևից և տևողությունից: Ապագա մասնագետների պատրաստման գործընթացը, այնուամենայնիվ, կազմակերպվում է անձնային մի քանի ռեսուրսներից ելնելով. դրանք են՝ որոշման կայացման գործընթացը, հարմարվողականությունը, դրդապատճառային և արժեքային համակարգը: Քննարկենք դրանցից յուրաքանչյուրի դերը մասնագիտական պատրաստվածության մեջ:

Որոշման կայացումը՝ որպես հոգեբանական բարդ գործընթաց, անձի կյանքի ուղղորդող վեկտորն է: Թերևս մարդն իր կյանքի ընթացում, բացի

առօրյա որոշումներից (պարզ գործողություններից), կայացնում է որոշումներ, որոնք շրջադարձային են իր համար, կամ դրանով պայմանավորված՝ փոխվում է նաև կյանքի բովանդակությունը, օրինակ՝ ամուսնություն, կրթություն, բնակվայրի կամ աշխատանքի փոփոխություն և այլն: Որոշման կայացման նմանատիպ բարդ գործընթաց է նաև մասնագիտության ընտրությունը, որն ավելի է սրվում իր բարդությամբ, երբ դրա առջև կանգնում են դեռևս բավարար կենսափորձ չունեցող դեռահասները: Որոշման կայացման գործընթացում մասնակցություն են ունենում ողջ հոգեկան կառույցները՝ ճանաչողական գործընթացները, հուզական վիճակները, կամային հատկանիշները, դրդապատճառային համակարգը, անհատական տիպաբանական առանձնահատկությունները. բացի այդ՝ մասնակցություն է ունենում նաև անձին շրջապատող սոցիալական միջավայրը՝ ընտանիքը, հարազատները, դպրոցը, ռեֆերենտային խմբերը և այլն:

Ե. Ս. Դավիթաշվիլին և Ա. Պ. Չերնյավսկայան քննարկել են այնպիսի իրադրություն, երբ դեռահասության տարիքում գտնվող անձը հայտնվում է որոշման կայացման հոգեբանական բարդ իրադրության՝ անորոշության մեջ: Անորոշության կամ խառնաշփոթության պայմաններում որոշում կայացնելուն պատրաստ լինելը ձևավորվում է համակարգային մոտեցմամբ՝ ամբողջացնելով որպես մեկ համակարգ ոչ միայն արտաքին ներազդող գործոնները (օրինակ՝ կրթական համակարգը, ընտանիքի մոտեցումը), այլև ներքին հոգեբանական ռեսուրսները (կարողությունները, հմտությունները, նախասիրությունները, անձնային տիպաբանական առանձնահատկությունները) [6, էջ 26-28]:

Մասնագիտություն ձեռք բերելու համար մենք ընտրում ենք դպրոցը, համալսարանը, աշխատավայրը, մասնագիտացումը և այլն: Այս ընտրությունները կազմում են մեր մասնագիտական աճի և հասունության ուղին: Ա. Պ. Չերնյավսկայան իր «Ավագ դպրոցականների մասնագիտական հասունության հոգեբանական նախադրյալները» հոդվածում ևս կարևորում է որոշման կայացման գործընթացի դերը այս հարցում: Նա նշում է. «Որոշման կայացման առաջին պայմանը այն է, երբ մարդը հասկանում է, որ առաջացած պահը կամ իրադրությունը իրենից պահանջում է որոշում: Հաջորդիվ ի հայտ են գալիս մարդու ինքնավարությունը և ինքնուրույնությունը: Եվ երրորդ պայմանը արդյունավետ որոշում կայացնելու կարո-

դությունն է, երբ առկա են բազմաթիվ այլընտրանքներ» [21, էջ 166-167]: Որպես լրացուցիչ գործոններ, որոնք նույնքան մեծ դեր ունեն որոշում կայացնելու հարցում, շեշտադրվում են պլանավորման կարողությունը, հուզական հավասարակշռվածությունը և պատասխանատվությունը:

Գրականություն

1. Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում /նյութերի ժողովածու, հեղ.՝ Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Ե. Մուրադյան, Դ. Սարգսյան, Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 76 էջ:
2. Որոշման ընդունման հոգեբանություն, խմբ.՝ Դ. Հայրապետյան, Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 90 էջ:
3. Պապոյան Վ., Գալստյան Ա., Սարգսյան Դ., Սովորողի առարկայական նախասիրության և մոտիվացվածության կապը մասնագիտական ինքնորոշման գործընթացում, Արդի հոգեբանություն գիտական հանդես, Եր., 2019, 2(4), 389-395 էջ:
4. Адлер А. – Практика и теория индивидуальной психологии. М. 1995 г.
5. Бобриков В. Н., Формирование профессионального самоопределения личности при профильном обучении в системе непрерывного технического образования, Интеграция образования, 1, 2003
6. Давиташвили Е. С., Чернявская А. П., Формирование готовности подростков к принятию решения в ситуации неопределенности, Ярославский педагогический вестник № 4–2009 (61), 26-28
7. Жукова Е. Д., Организация самостоятельной работы студента в исламской образовании: Учеб. Пособие.-Уфа: Изд-во БГПУ, 2013.- 145 с.
8. Жуковская В. И., Психологические основы выбора профессии. Минск: Народная асвета, 1978.
9. Жураковский В., Сазонова З., Чечеткина и., Ткачева Т., Крубатов С., Управление самостоятельной работой: мировой опыт// Высшее образование в России.-2003. №2.-с. 45-49.
10. Зеер Э. Ф., Павлова А. М., Садовникова Н. О., Профоринтология: Учеб. пособие для высшей школы , М., 2006
11. Климов Е. А., Введение в психологию труда, М.: Культура и спорт, ЮНИТИ, 1998, 350 с.

12. Кон И., Психология ранней юности, Просвещение, 1989, 225 с.
13. Макарова В. Н., Орел Г., Развитие профессиональной самостоятельности у будущего специалиста в процессе его подготовки в вузе: материалы заочной всероссийской научно-практической конференции / под общ. ред. М. А. Федоровой – орел, 2010. 128 с.
14. Макарова О. В., Князева Т. Г. Самостоятельная работа студентов как важный этап изучения учетных дисциплин, УДК: 657.3(075), Таврический державный агротехнический университет, 2013, 317-327 с.
15. Мухина В. С. Возрастная психология. М.: Академия, 1997
16. Прыгин Г.С., Психология самостоятельности: Монография.- Ижевск, Набережные Челны: Изд-во Института управления, 2009.-408 с.
17. Психологическая энциклопедия. 2-е изд. /под.ред. Р. Корсини, А. Ауэрбаха, СПб: Питер, 2006, 1096 с.
18. Сальников В., Бурухин С., Реформирование высшей школы: концепция новой образовательной модели //Высшее образование в России.- 2008-Н2.- с. 3-12
19. Толстых А. В. Возрасты жизни. М.: Молодая гвардия, 1988.
20. Фрейдджер Р., Фейдимен Д., Личность. Теория, упражнения, эксперимент / пер. с англ./ СПб, ПРАЙМ – ЕВ – РОЗНАК, 2004, 608 с.
21. Чернявская А. П., Психологические предпосылки развития профессиональной зрелости старшеклассников, Ярославский педагогический вестник – 2017 – № 3, 166-167– 2017 – № 3, 166-167
22. John C. Turner, Katherine J. Reynolds, Self – categorization theory, Handbook of Theories and of Social Psychology, 2012, Chapter 46, p. 399-418
23. Self-reliance skills and core competencies of institutionalized youth, Ministry of Health and Welfare 2010,11,12.Reconstructed based on the Statistics of institutional care facilities. Sook-Young Byun(Research Fellow, KRIVET) www.krivet.re.kr,Publishing date 2012, 12.15,15 p.
24. The Social Learning Theory of Julian B. Rotter, <https://www.semanticscholar.org/paper>

ՀՈԳԵԲԱՆԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մասնագիտական պատրաստման գործընթացում հոգեբանական գնահատումը մինչ այժմ ներկայացրել ենք հիմնականում ինքնուրույնության բաղադրիչների և դրդապատճառային ոլորտի ցուցանիշների տեսանկյունից: Եթե հաշվի առնենք, որ մասնագիտական պատրաստվածությունը ըստ բառարանային մեկնաբանման, անձնային որակական և բնութագրական նախադրյալներն են, որոնք ապահովում են մասնագիտական գործունեությունը ուսումնական հաստատության ավարտից հետո, ապա ակնհայտ է ապագա մասնագետի անձի հոգեբանական գնահատման արդիականությունը: Սովորողի մասնագիտական պատրաստվածությունը օգնում է հաջողությամբ իրականացնել պարտականությունները, պահպանել ինքնակառավարումը և կայունությունը անկանխատեսելի փոփոխությունների առկայության դեպքում: Սովորողի մասնագիտական պատրաստվածությունը աշխատանքային տարբեր պայմաններում արագ և արդյունավետ հարմարվելու կարողություններն են, որոնք դրսևորվում են մասնագիտական ճանապարհին խոչընդոտների և դժվարությունների հաղթահարման ռազմավարությամբ: Այն հոգեբանական կրթական գործընթաց է, որը ներառում է անձի դրդապատճառային, կողմնորոշիչ, կամային, վարքային-կողմնորոշիչ և գնահատման բաղադրիչներ: Այս բաղադրիչների բավարար զարգացումը կամ արտահայտվածությունը և դրանց ամբողջականությունը ցույց են տալիս ապագա մասնագետի աշխատանքային գործունեության պատրաստվածությունը:

Մասնագիտական պատրաստվածության կարևոր կողմ է հոգեբանական պատրաստվածությունը, որն արտահայտվում է ինչպես կայուն դիրքորոշումներով, դրդապատճառներով, անձնային հատկություններով, այնպես էլ հոգեկան վիճակներով: Հոգեկան վիճակների առումով մասնագիտական պատրաստվածությունը հնարավորություն է տալիս ապագա մասնագետներին ձևավորելու ինքնակարգավորման հմտություններ աշխատանքային գործունեության ընթացքում ծագած դժվարությունների և հոգեբանական խնդիրների հաղթահարման համար: Հոգեկանի վիճակների պատրաստվածությունը տարբեր իրադրություններում ինքնիրացվելու

և արդյունավետ գործունեություն իրականացնելու «տրամադրվածությունն» է:

Մասնագիտական պատրաստվածության կարևոր բաղադրիչ է նաև աշխատանքնային շարժունակությունը՝ մասնագետի պատրաստվածությունը տարբեր բնույթի ակտիվության տեսակներին: Մասնագիտական գործունեությունը անձից պահանջում է ոչ միայն մի ուղղությամբ բարձր որակի պատրաստվածություն, այլև ըստ իր մասնագիտության գործառույթային պահանջների: Օրինակ՝ իրավաբանը կարող է շատ լավ տիրապետել օրինական դաշտում իր գիտելիքներին, բայց հասարակական, հանրային, մեծ և փոքր խմբերով աշխատանքներին հոգեբանական պատրաստվածություն չունենալ (Մ. Ի. Դյաչենկո, Լ. Ա. Կանդիբովիչ, Հոգեբանական բառարան, էջ 192-193):

Ստորև ներկայացվող նյութը վերաբերում է մասնագետի անձի հոգեբանասոցիալական գործոնների ուսումնասիրմանն ու հետազոտմանը: Անշուշտ, հոգեբանասոցիալական գործոններն իրենց անմիջական ազդեցություններն են ունենում մասնագիտական պատրաստման ընթացքի վրա: Հոգեբանական գնահատման տեսանկյունից նպաստավոր է ստանալ տեղեկություններ հոգեբանական այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ անձնային վերահսկողությունը՝ լոկուսը, նախաձեռնողությունը, որոշման կայացման ունակությունը և այլն: Համադրելով այս գործոնները անձի նախասիրությունների և գիտելիքի ուղղվածության հետ՝ կարողանում ենք կատարել որոշակի կանխատեսումներ մասնագիտական պատրաստման ճանապարհի արդյունավետ ուղեկցման վերաբերյալ:

Ինչպես արդեն նշել էինք, մասնագիտական կանխատեսումների համար կան խոչընդոտող դրույթներ՝ հոգեբանական թեստերի ոչ ունիվերսալ ու կատարյալ լինելը, մեծահասակների ազդեցությունը, սոցիալական միջավայրի պահանջները և այլն: Դրանք մասնագիտական պատրաստման հոգեբանական գնահատման համար լուրջ պահանջ են ներկայացնում, սակայն, այնուամենայնիվ, մեր կողմից իրականացվող գործնական աշխատանքներն ու նախագծի իրագործման ընթացքում կատարված մասնագիտական վերապատրաստումները ցույց են տալիս, որ տեղեկատվության մատչելիությունն ու հոգեբանական գնահատման արդյունքների համադրումը ունեն կանխորոշող նշանակություն մասնագիտական պատրաստման գործընթացի արդյունավետության համար: Նաև պետք է

հաշվի առնել այն հանգամանքը, որ առաջ են գալիս նոր ձևավորվող կամ նորովի փոփոխվող մասնագիտություններ: Դրանք առաջանում են՝ ներկայիս սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական փոփոխություններով, բարեփոխումներով պայմանավորված: Փոխվում են ոչ միայն մասնագիտությունները, այլև մասնագիտությունների հանդեպ մարդկանց պատկերացումները: Որոշ մասնագիտություններ դառնում են առավել գրավիչ, որոշները կորցնում են իրենց երբեմնի ունեցած բարձր վարկանիշը: Ինչպես մասնագիտական ընտրության, այնպես էլ պատրաստման գործընթացը պայմանավորված է արտաքին և ներքին մի շարք գործոններով [5; 11; 14]:

Որպես արտաքին գործոններ կարող ենք դիտարկել.



- նոր մասնագիտությունների առաջ գալը, որոնք չունեն արմատներ մեր հասարակական մշակույթում (օրինակ՝ մոդելավորող, դիզայներ, գովազդային գործակալ և այլն),
- սովորողների տեղեկացվածության պակասը տարբեր մասնագիտությունների վերաբերյալ,
- թյուր պատկերացումները կոնկրետ մասնագիտության պահանջների վերաբերյալ, որոնք ներկայացվում են մասնագետին,
- բազմաթիվ ուսումնական հաստատությունների առկայությունը, որոնք տարբեր առաջարկներ են կատարում մասնագիտությունների ձեռքբերման վերաբերյալ և այլն:

Որպես ներքին գործոններ կարող ենք դիտարկել.



- անձի ինտելեկտուալ կարողությունները,
- շփման և հուզական ոլորտի բաղադրիչները, որոնք հանդես են գալիս որպես անձի առանձնահատկություններ,
- դրդապատճառային ոլորտի բաղադրիչները՝ արտաքին և ներքին գործոններով պայմանավորված:

Ընդհանուր առմամբ այս գործոններից առավել նշանակալի են սոցիալական միջավայրի ազդեցությունը, այն մեծահասակների կարծիքները, ովքեր հեղինակություն են ապագա մասնագետի համար, մասնավորապես ծնողները, հեղինակություն վայելող այլ հարազատներ: Տարբեր հետազոտական արդյունքներում ամփոփվել է այն միտքը, որ մասնագիտական պատրաստման գործընթացում մեծ է ինքնահսկման, վերահսկման ցուցանիշը, որը վերաբերում է գործունեության մեջ դրսևորվող կոգնիտիվ ոճին, թե ինչպիսի ազդեցություններով է այն պայմանավորված, և որքանով են դրանք գիտակցվում և հսկվում: Պետք է նշել, որ կենսական կարևոր հարցերում և որոշումներում սովորողները՝ որպես երիտասարդ մասնագետներ, առավել նշանակություն են տալիս էքստերնալ կոգնիտիվ ոճին: Սակայն այստեղ առկա է մշակութային ենթատեքստ, ընտանիքի դերի, ծնողի հեղինակության հանդեպ հարգանքի դրսևորման միտում, որը պայմանավորված է կյանքի տվյալ փուլում արժեհամակարգի (կոնստրուկտների) իմաստավորմամբ և վերաիմաստավորմամբ:

Մասնագիտական պատրաստման սոցիալական և հոգեբանասոցիալական նշանակալի գործոններից են մասնագիտության վարկանիշը և պահանջարկը: Նշենք, որ պահանջարկը կարևորվում է միայն այն դեպքերում, երբ անձն ինքնուրույն է իր որոշումներում և ընտրության մեջ, ունի պատկերացում մասնագիտության մասին, իմաստավորում է իր ընտրությունը տվյալ մասնագիտության հարցում: Ապագա մասնագետի պատրաստման գործընթացում համապատասխան ինքնավերաբեմունքը և սեփական ուժերի հանդեպ իրատեսական վստահությունը լավագույն նախապայման կարող են դառնալ մասնագիտական պատրաստման գործընթացի արդյունավետ իրացման համար: Երիտասարդ մասնագետները այս դեպքում ոչ միայն իմաստավորում են սեփական անձը՝ որպես մասնագիտության կրող, ոչ միայն ձևավորում են մասնագիտական Ես-ը, այլև փորձում են նույնականանալ մասնագետի կերպարի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անձի ինքնիրացման հիմնախնդիրները: Ուսումնաօժանդակ ձեռնարկ /Վ. Ռ. Պապոյան, Է. Ա. Գրին, Ա. Ս. Գալստյան և ուրիշներ, Եր.: ԵՊՀ հրատ., 2011, 102 էջ:

2. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական իքնորոշման հոգեբանական գնահատում // մեթոդական ուղեցույց, կազմողներ՝ Վ. Ռ.

Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յու. Սարգսյան, Ե. Բ. Սուրդյան // Եր., ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ:

3. Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում // նյութերի ժողովածու, հեղ.՝ Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Ե. Սուրդյան, Դ. Սարգսյան // Եր., ԵՊՀ հրատ., 2015, 76 էջ:

4. Алкыбаева Г. Ж. Ценностная детерминация поведенческих реакций испытуемых с выраженными специальными способностями в ситуациях познавательного противоречия //Материалы конференции “Тенденции развития психологической науки на пороге XXI века”. Караганда: Изд-во КарГУ, 2000.- 340 с. – с. 18-25

5. Буянова Г. В. Темперамент как фактор выбора профессии, Образование и наука № 7 (75), 2010, с. 81-87

6. Давыдюк Л.В., Истратова О.Н. Мотивы выбора профессии старшеклассниками Раздел III. Прикладные вопросы психологии и педагогики, Известия ТРТУ, № 2, 2005, с. 94-102

7. Зеер Э. Ф., Павлова А. М., Садовникова Н. О. Профориентология: Учеб. пособие для высшей школы , М., 2006, с.12

8. Зинченко В. П., Как построить свое «Я» / Под ред. - М.: Педагогика, 1991. - 136 с.

9. Климов Е. А., Психология профессионального самоопределения. М.: Академия, 2007, 302 с.

10. Мальцева Т. В., Реуцкая И. Е. Профессиональное психологическое консультирование: учеб. пособие. – М.: ЮНИТИ-ДАНА, 2009. – 143 с.

11. Папоян В. Р., Галстян А. С. и др. Психологическое сопровождение и профессиональное самоопределение в системе образования //сборник материалов, Ереван, изд: ЕГУ, 2015, 76 с.

12. Пряхников Н. С., Методы активизации профессионального и личностного самоопределения. Воронеж, 2002.

13. Резапкина Г. В., Отбор в профильные классы. М.:Генезис, 2005. – 128с

14. Ретунская Т. Н., Выбор профессии как психологический феномен, Высшее образование в России № 8-9, 2012, с. 126-130.

15. Petrosyan laura, Galstyan Alina Devising a Method for Studying the Social and Psychological Maturity of Specialists, 27th NISPAcee Annual Conference, May 24-26, 2019, Prague, Czech Republic, e-publishing, 13 p.

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԴԵՐՇ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՁԵՎԱՎՈՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վերջին մի քանի տասնամյակներում ինքնագնահատականի ֆենոմենը առավել շատ է ուսումնասիրվել հատկապես արտասահմանյան հոգեբանների կողմից: Նման ուսումնասիրությունների համար հիմք է հանդիսացել արևմտյան մշակույթում ինքնագնահատականի ֆենոմենի՝ որպես մարդու հոգեբանական կարևորագույն ռեսուրսի ընդունումը: Ըստ արևմտյան հոգեբանության՝ մարդիկ ձգտում են բարձր ինքնագնահատականի ձեռքբերմանն այնպես, ինչպես, օրինակ՝ առողջության, բարեկեցության, ազատության և այլն: Սակայն մինչ օրս բացակայում է այս ֆենոմենի եզակի և հավաքական սահմանումը: Անգլիացի որոշ հեղինակներ ինքնագնահատականի վերաբերյալ կիրառում են մի շարք հասկացություններ, ինչպիսիք են՝ հայացքը դեպի ինքն իրեն, վստահություն ինքն իր հանդեպ, սեփական Ես-ի գիտակցումը, բավարարվածությունը ինքն իրենով և այլն [1, էջ 54]: Վերջիններս դիտարկվում են ինքնագնահատականի՝ self-esteem-ի իմաստային ծանրաբեռնվածության ներքո, ինչը համարում են առավել լայն և ընդգրկուն: Ինքնագնահատական հասկացությունը ներառում է թվարկված մյուս բոլոր հասկացությունների իմաստային երանգները: Սակայն հարկ է նշել, որ այն պարզապես չի նշանակում միայն մարդու կողմից ինքն իրեն տրվող գնահատական, այլ ավելի լայն է և ընդգրկում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ ինքնահարգանքը, սեփական արժևորության զգացումը, ինքնավերաբերմունքը և այլն [1]:

Ինքնագնահատականը անձնային դատողությունն է սեփական արժևորման մասին, այն ներառում է ինքնահարգանքի զգացումը, և եթե ինքնագնահատականն աճում է, ապա անձն իրեն առավել երջանիկ է զգում, իսկ հակառակ դեպքում համապատասխանաբար առաջանում են բացասական զգացողություններ: Հարկ է նշել, որ ինքնագնահատականի ֆենոմենը շատ է ուսումնասիրվում հոգեբանների կողմից, քանի որ այն հեշտ չափելի է: Հաճախ կարելի է հանդիպել այնպիսի մոտեցումների, ըստ որոնց՝ ինքնագնահատականը բարձր կամ ցածր մակարդակների հակադիր կողմն է, սա է պատճառը, որ այս տատանումներն ընկալվում են որ-

պես բացասական: Ինչպես նշվեց, այս ֆենոմենը հեշտ չափելի է, քանի որ միևնույն հարցին տարբեր կերպ կպատասխանի այն մարդը, ում ինքնավստահությունը բավարարում է սեփական վարքը չհսկելու համար, ով ունի գերկարծիք իր անձի մասին [5]:

Ինքնագնահատականը ներառում է հուզական բաղադրիչ, որի շնորհիվ անձը կարող է պատասխանել այնպիսի հարցերի, որոնք թույլ են տալիս գնահատել, գիտակցել, ընդունել կամ փոփոխել այնպիսի հատկանիշներ, որոնք այլ պարագայում գուցե հնարավոր չլինեին նկատել:

Մարդու վերաբերմունքն ու վարքը որոշվում և կանխատեսվում են արժեքներով, որոնք հաճախ հանդես են գալիս որպես դրդապատճառային գործոններ: Արժեքներն այստեղ մենք կդիտարկենք երկու տեսանկյունից. ընդհանուր արժեքներ, որոնք վերաբերում են մարդու կյանքի տարբեր ոլորտներին, և արժեքներ, որոնք վերաբերում են մարդու մասնագիտական գործունեությանը: Վերջինս վերաբերում է աշխատանքային գործունեության մեջ մարդու վարքի ձևերի ընտրությանը: Արժեքները, կապված մարդու աշխատանքի հետ, բնորոշվում են որպես չափանիշներ, որոնցով մարդը գնահատում է աշխատանքի բնույթը, աշխատանքային միջավայրը, ինչպես նաև սեփական նախընտրությունների կարևորությունը: Կա մոտեցում, ըստ որի՝ մասնագիտական-աշխատանքային արժեքները ձևավորվում են հենց աշխատանքային ոլորտում գրանցած հաջողություններից, ֆինանսական աճից, մասնագիտական հետաքրքրությունների բավարարումից, արտաքին և ներքին տարբեր դրդապատճառներից: Մասնագիտական արժեքները կապված են անձնային կայուն գծերի հետ, չնայած դրանք փոփոխություններ են կրում սերնդափոխությանը զուգընթաց: Մասնագիտության ընտրությունը բարդ գործընթաց է, որի վրա ազդում են մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ սոցիալական բնութագրիչները և անհատական գործոնները: Մարդիկ սովորաբար ընտրում են մասնագիտություններ, որոնք թույլ են տալիս իրացնել սեփական հնարավորությունները, իրականացնել նպատակները, ունենալ բարձր ինքնագնահատական, լիովին վստահել սեփական ուժերին [7]:

Մասնագիտական պատրաստման գործընթացում, երբ անհրաժեշտ է լինում կատարել ընտրություն, կայացնել որոշում, առավել կարևորվում է մասնագետի անձի ինքնագնահատականը: Բազմաթիվ ուսումնասիրություններում փորձել են գնահատել մասնագիտության ընտրության որոշ-

ման կայացման դժվարությունների հիմքում ընկած գործունեությունը: Բազմաթիվ փոփոխականների կողքին կարևորվել է ինքնագնահատականը: Այն դրական կամ բացասական վերաբերմունքն է ինքն իր հանդեպ, սեփական արժևորության ընդհանուր գնահատականը [5]: Ըստ արտասահմանյան մոտեցումների՝ ինքնագնահատականն ունի ծագման երկու աղբյուր.

- *ինչպե՞ս է մարդը դիտարկում իր գործունեությունը կյանքի տարբեր ոլորտներում,*
- *ի՞նչ է կարծում, արդյոք ինչպե՞ս են իրեն ընկալում իր համար ոեֆերենտային անձինք [7 էջ 384]:*

Մարդիկ սովորաբար ձգտում են բարձրացնել սեփական անձի հանդեպ վստահությունը, ունենալ սեփական հնարավորություններին համապատասխան և նույնիսկ դրանք գերազանցող ինքնագնահատական, ինչը որոշ դեպքերում կարող է պայմանավորված լինել ինքնահարգանքով, այլ ոչ թե եսակենտրոնությամբ՝ էգոիզմով: Այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե միայն սեփական Ես-ի վրա կենտրոնանալուն, այլ Ես-ը չանտեսելուն՝ լիովին կենտրոնանալով այլ մարդկանց վրա: Ինքնագնահատականի ձևավորման և տատանման վրա մեծ ազդեցություն են թողնում սոցիալական միջավայրը, փոխազդեցությունները, իրավիճակային հաջողություններն ու անհաջողությունները: Ինքնագնահատականի բարձր լինելը մասնագիտական պատրաստման գործընթացում պայմանավորված է աշխատանքի որոնման, դրա ձեռքբերման և ինքնիրացման հետ. համապատասխանաբար ցածր ինքնագնահատականը կապված է անորոշության բարձր ցուցանիշների հետ [6]:

Ես-կոնցեպցիայի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ ինքնահարգանքը, ինքնագնահատականը և դրանց հետ կոռելացվող հասկացությունները՝ մասնագիտական աճ, ինքնարդյունավետություն, հաճախ կարող են սահմանափակել մարդուն մասնագիտական պատրաստման գործընթացի վաղ շրջանում՝ համապատասխան միջոցառումների պակասի հետևանքով: Տեղեկացվածության պակասը, մրցակցային այլընտրանքները, իրավիճակային սահմանափակումները կարող են դժվարություններ առաջացնել մասնագիտական գործունեության մեջ: Կրթական միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն հաստատություններում ուսանող-

ներն արդեն իսկ ընտրում են իրենց մասնագիտությունները, սակայն շատերի համար բացակայում են մասնագիտության մասին իրատեսական պատկերացումները, քանի որ հանրակրթության տարիներին չեն հասցրել ամբողջապես տիրապետել և հասկանալ մասնագիտությունների քարտեզը:

Մասնագիտական ինքնագնահատականը կարող է դիտարկվել որպես անձի մասնագիտական Ես-ի կարևորագույն տարր: Այլ կերպ մասնագիտական ինքնագնահատականը կարելի է դիտարկել որպես իմացություն, որից նշանակալիորեն կախված են անձի մասնագիտական ձեռքբերումները [3]:

Ինքնագնահատականի՝ ընդհանրապես և մասնավորապես մասնագիտական ինքնագնահատականի կառուցվածքում Ա. Ռեանն առանձնացնում է գործառնական և անձնային ասպեկտներ: Ներկայացնենք դրանք ստորև [4 էջ 62]:

- Ինքնագնահատականի գործառնական ասպեկտը կապված է ինքն իրեն որպես սուբյեկտ տրվող գործունեության գնահատականի հետ և արտահայտվում է մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների ձեռքբերման և կոմպետենտության մակարդակներում:
- Մասնագիտական ինքնագնահատականի անձնային ասպեկտն արտահայտվում է սեփական անձնային որակների գնահատմամբ՝ այն համեմատելով մասնագիտական Ես-ի իդեալական կերպարի հետ:

Պարտադիր չէ, որ այդ երկու ասպեկտներում ինքնագնահատականը լինի համապատասխան, քանի որ անհամապատասխանությունը ինքնագնահատականի գործառնական և անձնային ասպեկտներում նպաստում է մասնագիտական հարմարմանը (ադապտացիային), առաջընթացին և զարգացմանը:

Մասնագիտական ինքնագնահատականի կառուցվածքում կարելի է առանձնացնել նաև այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝

- *պոտենցիալի ինքնագնահատականը,*
- *արդյունքի ինքնագնահատականը:*

Արդյունքի ինքնագնահատականն արտացոլում է գործունեության հետևանքով ձեռք բերած արդյունքին տրվող գնահատականը և ցույց է տալիս ձեռքբերմամբ բավարարվածությունը կամ հակառակը՝ անբավարարվածությունը: Պոտենցիալի ինքնագնահատականը կապված է սեփական մասնագիտական հնարավորությունների հետ և արտացոլում է հավատը սեփական ուժերի հանդեպ ու ինքնավստահությունը [3]:

Մասնագիտական պատրաստման գործընթացում ձևավորվող մասնագիտական Ես-ը մարդու պատկերացումն է իր մասին՝ որպես մասնագետի: Ժամանակակից հոգեբանական գիտության մեջ դիտարկում են Ես-կերպարի տարատեսակ մասնավոր դեպքեր: Բացի վերը ներկայացված դասակարգումներից, Ա. Ռեանը անձի մասնագիտական Ես-կոնցեպցիայում առանձնացնում է իրական և իդեալական բաղադրիչներ.

- *Սեփական Ես-ի իրական մասնագիտական հայեցակարգը (կոնցեպցիան) ենթադրում է անձի պատկերացումներն իր մասին որպես մասնագետի՝ գնահատելով իր առկա ձեռքբերումներն ու հավակնությունների մակարդակը:*
- *Իդեալական Ես-կոնցեպցիան համապատասխանում է մասնագիտական ցանկություններին և սպասելիքներին [4 էջ 65]:*

Իրական և իդեալական մասնագիտական Ես-կերպարները կարող են տարբեր լինել: Սակայն դա թերևս հանդիսանում է մասնագիտական ինքնակատարելագործման և զարգացման խթան և ոչ հակառակը: Անձը կարող է ունենալ նաև ցածր մասնագիտական ինքնագնահատական, որը կարող է պայմանավորված լինել ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ մի շարք գործոններով, սակայն ցածր ինքնագնահատականն ամենին չի խոսում մասնագիտական անլիարժեքության բարդույթի մասին: Բացի դա, արդյունքի ցածր ինքնագնահատականի համադրությունը պոտենցիալի բարձր ինքնագնահատականի հետ կարող է նպաստել մասնագիտական ինքնագարգացմանը: Նշված ինքնագնահատականի պատերնը ընկած է ինքնագարգացման դրական մոտիվացիայի հիմքում և կոռելացվում է անձի սոցիալական ու մասնագիտական հաջողության հետ: Տեսական մոտեցումներում կարևոր է ուսումնասիրել ոչ միայն չդիֆերենցվող ինքնագնահատականը, այլև կոնկրետ նրա բաղադրիչներն ու դրանց փոխհարաբերությունները: Հենց ինքնագնահատականի պատերններն են

պայմանավորում մասնագիտական հաջողության մեխանիզմներն ու անձի մասնագիտական դինամիկ զարգացումը [3; 4]:

Մասնագիտական պատրաստման գործընթացում սեփական Ես-ի մասին բազմաթիվ պատկերացումները ձևավորում են մասնագիտական կերպարը՝ հարստացնելով այն մասնագիտական փորձառությամբ՝ ինքնադրսևորվելով որպես Ես-մասնագետ: Անձի հասունության մակարդակը պայմանավորող գլխավոր գործոններից է հենց մասնագիտական ինքնորոշումը: Եթե փորձենք հիշել Ադլերի ձևակերպումն այն մասին, որ մարդն իր կյանքում բախվում է երեք հիմնարար խնդիրների լուծմանը, որոնք կազմում են մարդու կեցության ավելի ընդհանուր բաղկացուցիչները, ապա դրանցից մեկը հենց աշխատանքի և մասնագիտական ինքնորոշման խնդիրն է, որի շուրջ որոնումներն ու դրա լուծումը օգնում են մարդուն գտնել կեցության իմաստը: Մարդիկ ձգտում են ընտրել այնպիսի մասնագիտություն, որը համադրվում է սեփական անձի մասին պատկերացումների հետ, և եթե այդ պատկերացումներն ու ընտրած մասնագիտությունը համապատասխանում են Ես-կերպարին, կարող ենք ասել, որ անձն ինքնիրացման ճանապարհին է:

Այսօր մասնագիտական ինքնագնահատական հասկացության կողքին ժամանակակից հոգեբանության մեջ հաճախ կարելի է հանդիպել նաև մասնագիտական համապատասխանություն կամ մասնագիտական պիտանելիություն հասկացությունների, որոնք բնորոշվում են որպես մարդու հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների համախումբ: Այն անհրաժեշտ է և բավարար մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների առկայության դեպքում հասարակայնորեն ընդունելի արդյունավետ աշխատանքի իրագործման համար [2]: Այս սահմանումը գրեթե ամբողջապես ծածկում է վերոնշյալ հասկացությունը բոլոր կողմերից, սակայն, ըստ մեզ, այստեղ ներառվում է նաև անձի կողմից մասնագիտությամբ բավարարվածության և արդյունքի ձեռքբերման շնորհիվ ինքնիրացման հնարավորության պարտադիր առկայությունը:

Զարգացմանը զուգընթաց՝ մասնագիտական համապատասխանությունը դիտարկվել է երկու ուղղությամբ.

- *որպես անձնային որակների հավաքակազմ, որոնք բնորոշում են պիտանելիության հնարավորության չափը կոնկրետ գործունեության համար,*
- *որպես արդեն իսկ գոյություն ունեցող, ձևավորված մասնագիտական գիտելիքների, հմտությունների, ինչպես նաև հոգեբանական, ֆիզիոլոգիական և այլ հատկանիշների առկայություն, որոնք էլ ապահովում են մասնագիտական խնդիրների լուծումը [2]:*

Կարելի է ենթադրել, որ մասնագիտական համապատասխանությունը ներառում է անձի առանձնահատկությունների համախումբը, որոնք մի կողմից՝ նրան թույլ են տալիս ունենալ հաջողություններ մասնագիտության մեջ, մյուս կողմից՝ մասնագիտության ձեռքբերման ընթացքում մարդը կարողանում է իր մեջ զարգացնել այս կամ այն որակներն ու հատկությունները, որոնք նրան անհրաժեշտ են մասնագիտության մեջ առավել մեծ հաջողություններ ունենալու, բավարարվածությունը մեծացնելու և կոնկրետ արդյունքներ գրանցելու նպատակով:

Մասնագիտական համապատասխանությունն ունի բարդ կառուցվածք, քանի որ այն մասնավորապես արտացոլում է գործունեության ձևի (մասնագիտության) ընտրությունը, որը հնարավորինս համապատասխանում է կոնկրետ մարդու հակումներին, կարողություններին, հմտություններին: Հաճախ մասնագիտական ինքնորոշումը դիտարկվում է որպես սոցիալական ինքնորոշում, ինքնիրացում, ինքնակատարելագործում, Ես-կոնցեպցիայի զարգացում [2]:

Այսպիսով, կարելի է ասել, որ մասնագիտական համապատասխանությունը կարող ենք դիտարկել որպես մասնագիտության ընտրության մոտիվացիոն (դրդապատճառային) և մասնագիտական պատրաստվածության գիտակցման հիմք (ինքնագնահատման պատերնի տեսանկյունից), որը թույլ է տալիս բացատրել անձի դինամիկ զարգացման և դրան զուգահեռ մասնագիտական ձեռքբերումների մեխանիզմները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бороздина Л. В., Сущность самооценки и ее соотношение с Я-концепцией, Вестн. Моск. УН-ТА. Сер 14 Психология, 2011, №1, с. 54-65.
2. Кочнева Е. М., Концептуальные основы подготовки студентов к проектированию будущей профессиональной деятельности, Н.Новгород: НГПУ им. К.Минина, 2013, 156 с.
3. Психология человека от рождения до смерти, под ред. Реан А.А., -СПб.: «прайм-ЕВРОЗНАК», 2003, 416 с.
4. Реан А. А., Психология личности, СПб.: Питер, 2016, с. 288.
5. Baumaster R. F., Self-concept, self-esteem and Identity, Belmont CA, United States, 2005, p. 246-280.
6. Baumaster R. F., How the self became a problem: A psychological review of historical research, Jurnal of personality and social psychology, №1, 1987, p. 163-176.
7. Kounenou K., Self-esteem, work values and career choice among Greek students of higher pedagogical and technological studies, Nova Science Publishers, inc., 2012 p. 383-391.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ «ԵՍ» ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նույնականության հարցն այսօր չափազանց արդիական է բազմակողմանի և բազմաշերտ ուսումնասիրությունների համար: Դեռևս հոգեբանության ծագման վաղ շրջաններից այս հարցն ուսումնասիրվել է տարբեր հեղինակների կողմից անձին առավել խորքային դիտարկելու նպատակով: Այսօր այն արդիական է նաև մասնագիտական պատրաստման ուսումնասիրությունների տեսանկյունից [5]:

Հաճախ նույնականությունը դիտարկվում է որպես անհատի և սոցիալական միջավայրի փոխազդեցության արդյունք, որը տեղի է ունենում անձի՝ խմբի հետ հարաբերվելու ընթացքում: Այդ գործընթացում անձը պատկերացումներ է ձեռք բերում խմբի վերաբերյալ և փորձում իր գործառնությունը կազմակերպել այդ միջավայրում: Որոշ հեղինակներ (Ու. Ջեյմս, Է. Էրիկսոն և այլք) մասնագիտական նույնականություն հասկացության բնույթը բացատրում էին մասնագիտական գործունեության մեջ անձի ինքնիրացման միջոցով [4]: Ժամանակակից մոտեցումները դիտարկում են մասնագիտական նույնականության սոցիալական առանձնահատկությունները, որոնք նպաստում են մասնագիտական պատրաստման ուղու ընտրությանը և ձևավորմանը: Նույնականությունը ձևավորվում է այն կոլեկտիվի հետ փոխհարաբերությունների արդյունքում, որն անձի համար նշանակալի է: Որպես ռեֆերենտ կարող են հանդես գալ ամենատարբեր խմբեր. իրական և իդեալական, մեծ և փոքր: Յուրաքանչյուր անհատ կարող է ունենալ մի քանի ռեֆերենտ խմբեր, որոնց տարբեր չափումներով փորձում է համեմատել իր հետ: Սա էլ հենց տեղի է ունենում մասնագիտության յուրացման ընթացքում [7]: Ա. Բելիկը, անդրադառնալով Ջ. Միդի տեսական մոտեցումներին, նշում է, որ նույնականությունը դրսևորվում է, երբ մարդը սկսում է ընկալել իր վարքն ու կյանքը որպես մեկ ամբողջություն [3]: Այստեղից կարող ենք ենթադրել, որ մասնագիտական նույնականությունը ևս սերտորեն կապված է անձի վարքի, գործողությունների և այն նպատակների հետ, որոնք դրվում են նրա առջև՝ սեփական դրդապատճառներից ելնելով: Կարելի է նաև ասել, որ մասնագիտական նույնականությունը ներառում է երեք հիմնական տարրեր.

- ✓ «Ես» կերպարի ընկալումն այլոց կողմից,
- ✓ այլոց դատողություններն այդ կերպարի վերաբերյալ,

✓ *ինքնավերաբերմունքը, որը կարող է դրսևորվել հպարտության, նվաստացման կամ չեզոքության ձևով:*

Մասնագիտական նույնականությունը կախված է նաև անհատական առանձնահատկություններից, արժեքներից, սակայն փոփոխությունների է ենթարկվում շրջապատի հետ փոխհարաբերությունների աղյուսքում: Մասնագիտական նույնականության համար չափազանց կարևոր է ստեղծել կրթական այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն սովորողի մասնագիտական Ես-ի ձևավորմանը: Այսօր մեր հասարակությունը կանգնած է այնպիսի խնդրի առջև, ինչպիսին է անձի կողմից մասնագիտության ընտրության կայացումն առանց մասնագիտական նույնականության ձևավորման: Նման դեպքերում սովորաբար ընտրությունը հիմնված է լինում առօրեական խոսակցությունների և խորհուրդների վրա: Մասնագիտական կայացման գործընթացը, որպես կանոն, տեղի է ունենում բարձրագույն հաստատությունում, երբ ուսանողները սկսում են ձեռք բերել առաջնային տեսական գիտելիքներ, առաջին գործնական փորձ և այլն [1]:

Ըստ Լ. Շնայդերի՝ «նույնականություն» տերմինն առաջ է եկել և կիրառվել գիտնականների կողմից 20-րդ դարի 70-ական թվականներին [8]: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ մարդիկ ապրում էին կայուն գաղափարախոսության ներքո, ունեին ապահովության զգացողություն թե՛ ուսման, թե՛ մասնագիտության ընտրության և թե՛ ինքնիրացման համար: Սակայն այս ամենի հետ մեկտեղ առաջ եկան նաև գլոբալ խնդիրներ. բնապահպանական աղետներ, տնտեսական ճգնաժամեր, զինվորական կոնֆլիկտներ, ահաբեկչություններ և այլն: Այս ամենին զուգահեռ՝ անխուսափելիորեն սրվում էր նաև մասնագիտական նույնականության հարցը: Այս խնդիրն արդիական է մի քանի պատճառով. առաջին հերթին գիտատեխնիկական հեղաշրջումը նպաստում է նոր մասնագիտությունների առաջ գալուն, բացի այդ՝ ժամանակի մեջ փոփոխություններ են կրում նաև արդեն իսկ եղած մասնագիտությունները, կրթական գործընթացները [8]:

Հետաքրքրական է ուսումնասիրել մասնագիտական նույնականությունը ժամանակակից մասնագետների մոտ ոչ միայն այն ձեռքբերելու ընթացքում, այլ նաև արդեն կիրառման (աշխատանքի) ընթացքում: Կարելի է ենթադրել, որ այն անձը, որն ունի մասնագիտական նույնականության բարձր մակարդակ, ավելի շատ կձգտի կատարելագործել իր մասնագիտական գործունեությունը հենց ընթացակարգային տեսանկյունից՝ ընդլայնե-

լով ճանաչողական և փորձարարական կողմերը: Ն. Ավդունիսան նշում է, որ հայտնի սոցիոլոգ Ա. Ֆլեկսներն առանձնացնում է հինգ հիմնական գծեր, որոնք վերաբերում են յուրաքանչյուր մասնագիտության.

1. գործունեության ինտելեկտուալ և գործնական կողմերը,
2. մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները հիմնվում են տեսական գիտելիքների վրա,
3. տեսական գիտելիքները պարտադիր ունենում են գործնական ծրագիր,
4. մասնագիտական գիտելիքները, հմտությունները կարող են փոխանցվել սերնդեսերունդ ֆորմալ (դասապրոցեսի ընթացքում) և ոչ ֆորմալ (պրակտիկայի ընթացքում) կրթության շնորհիվ,
5. մասնագիտություններն ունեն ինքնակարգավորման հակվածություն [2, էջ22]:

Ըստ վերոնշյալ մոտեցման՝ մասնագիտական պատրաստման գործընթացում անձն անցնում է հստակ փուլերով, որոնցում ձեռք է բերում համապատասխան գիտելիքներ և հմտություններ, ինչն էլ վերջնարդյունքում հենց մասնագիտական նույնականության զգացումն է, սակայն այն այսօր դիտարկվում է ողջ կյանքի ընթացքում և զարգացման մեջ, այլ կերպ ասած՝ շարունակական կրթություն ողջ կյանքի համար (lifelong learning):

Մասնագիտական նույնականությունն այնպիսի հասկացություն է, որը ներառում է մասնագիտական խմբում կամ համայնքում մարդու սեփական պատկերացումներն իր դերի վերաբերյալ: Ե. Կուպրիյանչուկը, հետազոտելով տարբեր հեղինակների առաջարկած մասնագիտական նույնականության տեսամեթոդական հիմքերը (Ե. Երմոլայևա և այլք), նշում է, որ դրան կարելի է հասնել երկարատև մասնագիտական զարգացման բավականաչափ բարձր մակարդակում՝ մասնագիտական անձնային որակների ձեռքբերման և մասնագիտական հմտությունների տիրապետման արդյունքում: Այն հանդես է գալիս որպես մասնագիտական գործընթացի կայուն տարր՝ համաձայնեցնելով իրական և իդեալական մասնագիտական «Ես կերպարները»:

Մասնագիտական նույնականությունը կատարում է կարգավորիչ գործառույթ: Հիմնականում ապահովում է մասնագիտական կենտրոնացում և կայուն մասնագիտական մենթալ դիրքի գրավում: Այս գործառույթները կախված են հետևյալ գործոններից.

- *մասնագիտական որակների հետ նույնականացում, որը կախված է մարդու հարմարման աստիճանից,*
- *սեփական մասնագիտական կերպարի ընդունում և տարբերակում այլ մասնագիտական կերպարներից՝ պահպանելով հարմարվելու ճկունություն այլ մասնագիտական դաշտ անցնելիս,*
- *նույնականության կառուցվածքի համակարգվածություն [5]:*

Ահա այս ամենը ապահովում է մասնագետի կրթվելու, ինքնազարգանալու հնարավորությունը, ինչի արդյունքում անձը կարողանում է համապատասխանել մասնագիտության ժամանակակից պահանջներին՝ պահպանելով և զարգացնելով դինամիկ կողմը:

Հաճախ շատ ուսանողներ սկսում են աշխատել իրենց մասնագիտությամբ դեռևս ուսանելու տարիներին, ինչը միայն ավելի է խթանում մասնագիտական նույնականությունը: Մասնագիտական կրթությունը, բացի մասնագիտական գիտելիքների ձեռքբերման հնարավորությունից, նաև ձևավորում և զարգացնում է սովորողի մասնագիտական նույնականությունն ու սեփական մասնագիտության ու մասնագիտական գործունեության իմաստի գիտակցումը: Անձը, որն ունի ձևավորված մասնագիտական նույնականություն, ավելի ազատ է իր մասնագիտության մեջ, կարող է հաղթահարել մասնագիտական դժվարությունները, ինքնուրույն դնել նպատակներ և մշակել դրանց ձեռքբերման պլանները:

Ժամանակակից աշխարհում տեղի են ունենում «մասնագիտությունների ատլասի» ձևախեղումներ (դեֆորմացիաներ) [1]: Այսօր գործատուն մասնագետից ակնկալում է ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև հմտություններ: Այս առումով ժամանակակից մասնագետը պարտավոր է հետևել նաև մասնագիտության դինամիկային և հասարակության փոփոխվող պահանջներին: Հոգեբանամանկավարժական գրականության մեջ անձի և մասնագիտության փոխազդեցության վերաբերյալ կարելի է հանդիպել երկու մոտեցումների, որոնց անդրադարձել է Ն. Ավոյանինան: Առաջին

մոտեցման ներկայացուցիչները (Ֆ. Պարսոն, Ջ. Հոլլանդ) ենթադրում են, որ յուրաքանչյուր մարդ դեռևս ի ծնե նախատեսված է որոշակի կոնկրետ մասնագիտական գործունեության համար: Երկրորդ մոտեցման ներկայացուցիչները (Դ. Սյուպեր, Ա. Ռոու) ենթադրում են, որ յուրաքանչյուր մարդ իր ներսում կրում է որոշակի որակների, բնութագրիչների և ընդունակությունների համախումբ, որոնք թույլ են տալիս կատարել այս կամ այն աշխատանքը, ընդ որում, մասնագիտական գործունեությունը կարող է մարդու վրա թողնել թե՛ բացասական, թե՛ դրական ազդեցություն [5]:

Աշխատանքի որոշակի տիպով զբաղվելու արդյունքում ձևավորվում է յուրահատուկ ինքնագիտակցություն, մասնագիտական-տիպիկ և անհատական-ինքնատիպ անձնային գծեր [2]: Այսօր Ժամանակակից աշխարհն առավել հակված է երկրորդ մոտեցմանը, քանի որ այն առավել ճկուն է և մարդու առջև բացում է ընտրության լայն հնարավորություններ: Այս խնդրի հետազոտողներն ընդգծում են, որ մասնագիտական նույնականության ձևավորումը բարդ գործընթաց է, որը ոչ միշտ է գիտակցվում մարդու կողմից:

Ժամանակակից մասնագետի մոտ նույնականության ձևավորումը մասամբ կրում է չգիտակցված բնույթ, ինչը դանդաղեցնում է անձի մոտ սեփական մասնագիտության վերաբերյալ ամբողջական պատկերացման ձևավորման գործընթացը: Մասնագիտական նույնականությունը ձևավորվում է մասնագիտական իրողությունների էտալոնների հիման վրա՝ մղելով այս կամ այն վարքային դրսևորումների: Մասնագիտական նորմերի և կարծրատիպերի առավել խորը յուրացումը դիֆերենցում է «կատարյալ մասնագետի» կերպարը, որը հավելվում է մասնագիտական Ես-կերպարով: Այս ամենը առավել ամրապնդվում է մասնագիտական ինքնագիտակցման դեպքում, ինչի շնորհիվ կարծրատիպային վարքից անցում է կատարվում դեպի անկանխատեսելի իրավիճակներում ճկուն վարքի ցուցաբերում: Այս ամենն ավելի է խորացնում միջավայրում անձի զարգացումն ու ինքնիրացումը: Հակառակ դեպքում մարդը կարող է մնալ գործառույթների իրականացման նեղ մակարդակում, քանի որ ի գործու չէ տրանսֆորմացվել փոփոխվող իրավիճակների համաձայն: Մասնագիտական նույնականացում ասելով՝ հասկանում ենք սուբյեկտի բնութագրերը, ով ընտրել է և իրացնում է մասնագիտական փոխազդեցություն շրջակա միջավայրի հետ և որպես հակադարձ գործընթաց առաջանում է ինքնահարգանք՝ ի

պատասխան այդ գործունեության: Մասնագիտական նույնականությունը ենթադրում է մարդու և մասնագիտության գործառական և էկզիստենցիալ փոխազդեցություն: Դա ներառում է մասնագիտության ընդունումը և կարողությունը կատարելու մասնագիտական գործառույթները հնարավորինս լավ՝ այլոց համար: Ռուս հոգեբանների համար բարդ էր մասնագիտական նույնականության տեղը գտնել ընդհանուր նույնականության գործընթացների շարքում: Ըստ Ն. Պրյաժնիկովի՝ մասնագիտական նույնականությունը անձնային նույնականության մի մասն է: Նա բացատրում է, որ անձի մասնագիտական ձևավորումը նույնականության ձեռքբերման գլխավոր գործոնն է [6]: Կարելի է ասել, որ նման մոտեցումը առաջ է եկել հենց այն պատճառով, որ ռուսալեզու գրականության մեջ բավարար չափով չի ուսումնասիրվել սոցիալական նույնականության էությունը: Մասնագիտացումը հիմնված է արժեհամակարգի և սեփական մասնագիտական որակների գիտակցման և վերագնահատման վրա: Առավել ժամանակակից մոտեցումներում մասնագիտական նույնականությունը դիտարկվում է որպես սոցիալական նույնականության ենթատեսակ, որը կրում է սոցիալական նույնականության բոլոր նշանները և նրա ձևավորման համապատասխան կանոնակարգերը: Նման մոտեցման դեպքում հարկ է ընդունել, որ մասնագիտական նույնականությունն օժտված է սոցիալական նույնականության բոլոր որակներով, մասնավորապես՝ կապված սոցիալական խմբում ինքնորոշման, խմբին անդամակցելու, նրա նկատմամբ դրական վերաբերմունքի և այլն: Այն ևս անձնային որակ է և ծագում է անձնային ու մասնագիտական ձևավորման ընթացքում՝ ազդեցություն թողնելով մարդու մտածողության բազմաթիվ ասպեկտների վրա: Մասնագիտական նույնականացումը դիտարկվում է որպես մասնագիտական ինքնորոշման և ինքնակազմակերպման գործընթացների արդյունք, որը դրսևորվում է ինքն իրեն տվյալ մասնագիտության ներկայացուցիչ գիտակցելու ձևով՝ դրսևորվելով կոգնիտիվ, հուզական և վարքային ինքնաներկայացման ձևերում: Ըստ Լ. Շնեյդերի՝ «Մասնագիտական նույնականությունն» առաջ է գալիս մասնագիտացման (պրոֆեսիոնալիզացիայի) ընթացքում: Պրոֆեսսոնալիզացիան մասնագետ դառնալու գործընթացն է: Այն ներառում է մարդու կողմից մասնագիտության իրացումը՝ հաշվի առնելով սեփական հնարավորությունները և ընդունակությունները, մասնագիտության նորմերի և կանոնների յուրացումը, ինքնագիտակցումն ու մասնագիտության միջոցով

ինքնագարգացումը: Ընդհանրացնելով հարկ է նշել, որ պրոֆեսիոնալիզացիան սոցիալականացման մի կողմն է: Կարևոր է առանձնացնել մասնագիտական նույնականացման ձևավորման գործընթացի երկու ասպեկտները. նախ և առաջ մասնագիտական նույնականության մակարդակը, երկրորդ հերթին՝ որպես մասնագետ զարգացման փուլերը [8]:

Սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների շրջանակներում ներկայացվել են մասնագիտական նույնականության ձևավորման հետևյալ փուլերը. սոցիալական կատեգորիզացիայի փուլ, որը ենթադրում է սոցիալական միջավայրի կարգավորում այն ճանապարհով, որն իմաստ ունի անհատի համար, սոցիալական նույնականացման փուլ, որը ենթադրում է մարդու այս կամ այն կատեգորիայի հետ միախառնման գործընթաց, սոցիալական նույնականության փուլ, որը ենթադրում է ամբողջական սոցիալական նույնացում [5]:

Ըստ Ն. Պրյաժնիկովի՝ մասնագիտական նույնականության մակարդակներում հնարավոր է հետևյալ հիերարխիան. [6]

1. Մոտակա և հեռավոր մասնագիտական նպատակների գիտակցում, սեփական գործը հասկանալու ձգտում, ամբողջական աշխատանքի տիրապետում, աշխատանքային գործառույթների յուրացում, մասնագիտական հարաբերությունների կառուցվածքի հասկացում և դրանում սեփական տեղի որոնում: Հիերարխիայի այս մակարդակում մարդու և մասնագիտության համապատասխանությունը որոշվում է «ուզում եմ» մոդալականությամբ:

2. Հիմնական գիտելիքների յուրացում, սեփական հնարավորությունների գիտակցում, պատկերացում տվյալ գործունեության կատարման վերաբերյալ, մասնագիտական կապերի հաստատում: Այս մակարդակում մարդու և մասնագիտության համապատասխանությունը որոշվում է «գիտեմ» մոդալականությամբ:

3. Ընտրված մասնագիտական նպատակների գործնական իրացում, գործունեության ինքնուրույն և գիտակցված իրագործում, գործունեության սեփական ոճի ձևավորում, մասնագիտական կապերի որոշակի շրջանի ձևավորում: Այս մակարդակում մարդու և մասնագիտության համապատասխանությունը որոշվում է «կարող եմ» մոդալականությամբ, մասնագիտական նույնականությունը ակտիվ է:

4. Մասնագիտական գործունեության ազատ իրագործում, մասնագիտական բարդ խնդիրների որոնում, մասնագիտական կատարելագործում, ստեղծագործականություն և վարպետացում, մասնագիտական կապերի նշանակալիության զգացում, սեփական փորձը մյուսներին փոխանցելու և դրանով կիսվելու ցանկություն: Մարդու և մասնագիտության համապատասխանությունը որոշվում է «կատարում եմ» մոդալությամբ, մասնագիտական նույնականությունը կայուն է [6]:

Հեղինակը մասնագիտական նույնականությունը բնորոշում է որպես ինքնորոշմանը մոտ հասկացություն, սակայն նրա բովանդակությունը փոքր-ինչ այլ է: Մասնագիտական նույնականությունը սեփական անձի գիտակցումն է՝ որպես շրջակա միջավայրի հետ փոխազդեցության ձևեր ընտրողի և իրագործողի, որի ընթացքում նաև այդ գործունեության շնորհիվ տեղի է ունենում ինքնիրացման իմաստավորում:

Մասնագիտական ինքնորոշումը կատարած աշխատանքի իմաստի գիտակցումն է, որն ուղեկցում է մասնագիտական նույնականությանը: Ավելի պարզ, դա կատարած աշխատանքի ինքնուրույնությունն է և դրա տիրապետումը:

Արևմտյան գրականության մեջ կարելի է հանդիպել սկսնակ մասնագետի որակների տարբեր բնութագրումների, ինչպես, օրինակ՝

- *ինքնիրացման արդյունավետություն,*
- *հատուկ գիտելիքների, կարողությունների տիրապետում,*
- *ստեղծագործականություն,*
- *պատասխանատվություն սեփական կարիերայի նկատմամբ,*
- *մասնագիտական էթիկայի պահպանում [9]:*

Մասնագիտական նույնականությունը կարելի է դիտարկել նաև որպես մասնագիտական ինքնորոշման, ինքնակազմակերպման գործընթաց, որը դրսևորվում է որոշակի մասնագիտության ներսում սեփական անձի գիտակցմամբ: Արևմտյան տեսական ուսումնասիրություններն ուղղված մասնագիտական նույնականության խնդրին թույլ տվեց դուրս բերել հետևյալ կետերը, որոնք որոշ չափով ունեն նաև հակասական բնույթ [2].

- մասնագիտական նույնականության գործընթացի բազմաչափի և բազմակողմանի ուսումնասիրություններ, որոնք չեն բացառում մյուս մոտեցման ճշմարտացիությունը,

- մասնագիտական նույնականության նկարագրություններ՝ հիմնվելով նույնականության այլ տեսակների բնորոշումների վրա,

- եզակի գործոնների որոնում, որի հիման վրա հնարավոր կլինի որոշել մասնագիտական գիտակցության ձևավորվածության աստիճանը,

- սուբյեկտի մասնագիտական նույնականության բովանդակության գնահատում մասնագիտության ձևավորման տարբեր փուլերում, մեթոդական դժվարությունների հաղթահարում և այլն [2, էջ 25]:

Կարող ենք ասել, որ այս ամենի հիմքում այն հեղինակություններն են, որոնք նպաստում են անձի մասնագիտական նույնականության ձևավորմանը: Ընդ որում, նրանց քանակը կախված է կյանքի նշանակալի ոլորտների քանակից: Այս ամենի մեջ մտնում են նաև սոցիալական ադապտացիան (հարմարումը) և նյութական-կենցաղային ադապտացիան, թե արդյոք համապատասխանում են անձի սպասելիքները և միջավայրի հնարավորությունները: Էական նշանակություն ունի նաև այն խնդիրը, թե արդյոք այսօրվա կրթությունը համապատասխանում է այն պահանջներին, որոնք գործատունն ունի է աշխատողի առջև: Ըստ ժամանակակից հետազոտությունների՝ այսօր երիտասարդներն առավել մեծ ժամանակ են տրամադրում իրենց կրթության, մասնագիտության ձեռքբերման, աշխատաշուկայում անընդմեջ մրցունակ լինելու, հասարակության մեջ կարգավիճակ ձեռք բերելու, ընտանիք կազմելու վրա: Դասական անցումները դարձնում են դեպի բուհ և բուհից դեպի աշխատանք բովանդակային առումով վերջին երեք տասնամյակում բավականաչափ դժվարացած են, քանի որ տեղի է ունեցել աշխատաշուկայի վերակառուցում՝ սկսած ընդհանուր համակարգից, ավարտված ծառայության մատուցման ամենանեղ ոլորտներով: Սրա հետևանքով փոփոխվել են նաև կրթական պահանջները [1]:

Արևմտյան հեղինակներ Ուիլսոն և Վուդմանը գտնում են, որ փոփոխություններն աշխատաշուկայում, ինչպես նաև կրթական համակարգում փոփոխության են ենթարկել նաև երիտասարդ մասնագետներին, որոնք կանգնել են այնպիսի խնդրի առջև, ինչպիսիք են՝ լինել ճկուն, դիմակայել մարտահրավերներին, մնալ մրցունակ, կատարելագործել հմտություններն ու գիտելիքներն անընդմեջ փոփոխվող աշխատաշուկայում [10]: Գտնվելով

նման դինամիկայի մեջ՝ երիտասարդ մասնագետների համար չափազանց կարևոր են դարձել այնպիսի գործոններ, ինչպիսիք են ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքները, աշխատանքային գրաֆիկի ճկունությունը, մի քանի աշխատանք համատեղելու հնարավորությունը և այլն: Այս ամենը ստեղծում են ավելի լայն հնարավորություններ ինքնագարգացման, վերապատրաստումների, կրթության շարունակականության, այլ գործունեություն ծավալելու համար: Առկա է մեծ փոխկապվածություն անձնային հատկության և կարիերայի միջև: Նման դինամիկան և ճկունությունը երիտասարդներին հնարավորություն են տալիս արդյունավետ ընտրություն կատարելու բազմաթիվ ճանապարհների միջև: Գրեթե բոլոր ուսումնասիրությունները, որոնք կենտրոնացած են բացատրելու անցումը դեպի առավել արդյունավետ ընտրության, կառուցվում են երեք հիմնական հարցերի շուրջ.

- 1. ո՞ր գործոններն են առավել կարևոր դեռահասությունից հասունության անցնելու ընթացքում,*
- 2. արդյո՞ք այդ գործոնները եզակի են սոցիալական համատեքստում կամ կապված են հասարակության և մշակույթի հետ,*
- 3. ինչպիսի՞ որակներ են բնորոշ երիտասարդների անձի հասունությանը [9]:*

Մոտեցումները, որոնք հիմնվում են այս երեք հարցադրումների վրա, հնարավորություն են ձեռք բերում նկարագրելու տեղի ունեցող փոփոխությունները՝ հաշվի առնելով նաև անհատական ատրիբուտները՝ ինքնավարությունը և անկախությունը: Բացի սա, ինչպես նշում է Համընդհանուր սոցիալական հետազոտությունների եվրոպական խումբը (2001թ.), երիտասարդները ակտիվորեն փորձում են կառուցել իրենց ներկան և ապագան, չնայած որ սահմանափակված են տնտեսական, սոցիալական և մշակութային պայմաններով [9]:

Հիմնվելով վերոնշյալի վրա՝ կարող ենք ասել, որ ընտրված մասնագիտությունը նշանակալի ներգործություն է ունենում կյանք մուտք գործելու և նույնականության ձևավորման վրա: Մասնագիտության ընտրությամբ չի

դադարում այս ողջ գործընթացը, և մասնագիտական ուղին ևս նշանակալի դեր ունի, քանի որ խոսքը դինամիկ և ոչ թե ստատիկ երևույթների մասին է:

Արևմտյան հեղինակները պնդում են [9], որ պետք է առավել խորացնել ուսումնասիրությունները, որպեսզի հասկանան սերունդներում կառուցվածքային փոփոխությունները, և թե ինչպես են դրանք ազդում մասնագիտական ուղու կայունության վրա: Վերը ներկայացված բոլոր բնորոշումներն ունեն մի շարք ընդհանրություններ. մասնագիտական նույնականությունը նախ և առաջ մասնագիտական ինքնորոշման արդյունք է, երկրորդ՝ մասնագիտական զարգացման գործընթացն է, և վերջապես երրորդ՝ տվյալ մասնագիտության արժեքային կողմի ընդունումն է և այն գիտակցումը, որ տվյալ անձը այդ մասնագիտության ներկայացուցիչն է [9]:

Հարկ է նշել, որ մասնագիտական նույնականությունը սերտորեն կապված է մասնագիտական ինքնորոշում, մասնագիտական ինքնագիտակցություն մասնագիտական զարգացում և մասնագիտական դեֆորմացիա հասկացությունների հետ: Մասնագիտական նույնականությունն արտացոլվում է մարդու պատկերացումներում այն մասին, թե ինչպիսին պետք է լինի մասնագետը, ինչպիսի գիտելիքներ և հմտություններ պետք է ունենա, և վերջապես, թե որքանով է ինքը համապատասխանում այդ պահանջներին: Ժամանակակից հոգեբանամանկավարժական հետազոտություններում չկա մասնագիտական նույնականության վերաբերյալ հստակ սահմանում:

Վերլուծելով բազմաթիվ մոտեցումներ՝ յուրաքանչյուր «մշակույթ» կարող է ձևակերպել իր սահմանումը՝ ելնելով տվյալ տարածաշրջանի և ժամանակային ընկալումների առանձնահատկություններից: Հարկավոր է այնպիսի սահմանում, որը կներառի բոլոր բաղադրիչները, որոնք առնչվում են մասնագիտական ինքնորոշման ողջ գործընթացին և կարող է ցույց տալ այդ բազմափուլ և բազմակողմ ընթացքի ամբողջական պատկերը կիրառական նշանակության տեսանկյունից:

Վերոնշյալից կարելի է դուրս բերել հետևյալ ամփոփումները.

✓ Նույնականությունը բարդ ինտեգրատիվ հոգեբանական ֆենոմեն է, որը դիտարկվում է թե՛ որպես զգացողություն, թե՛ որպես գիտելիքների հանրագումար սեփական անձի մասին և թե՛ որպես վարքային միավոր: Նույնականությունը մարդու ունիկալության բնութագրիչների սինթեզն է,

որը որոշվում և փոփոխվում է սուբյեկտիվ պրագմատիկ կողմնորոշման արդյունքում:

✓ Առանձնացնում են նույնականության մի քանի տեսակ՝ կախված Ես-ի անձնային և/կամ սոցիալական ասպեկտների արտահայտվածության աստիճանից (անձնային կամ սոցիալական նույնականություն): Սոցիալական նույնականությունը բնութագրվում է ըստ մարդու սոցիալական խմբի պատկանելիության (մասնագիտական, էթնիկ, ընտանեկան, կրոնական և այլն):

✓ Սոցիալական նույնականության ուսումնասիրություններն ուղղված են հասկանալու մարդու վերաբերմունքն ինքն իր հանդեպ սոցիալական խմբում. մեր աշխատանքում մասնավորապես շեշտադրել ենք մասնագիտական խումբը:

✓ Հոգեբանության մեջ գոյություն չունի մասնագիտական նույնականության բնորոշման եզակի մոտեցում, քանի որ յուրաքանչյուր դպրոցի ներկայացուցիչ ֆենոմենը բացատրում է իր տեսանկյունից ելնելով:

✓ Մասնագիտական նույնականությունը ձևավորվում է մասնագիտական անձի կայացման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Авдонина Н. С., К вопросу об определении профессиональной идентичности, УДК 159.923 ББК 88.8.7, 2017 с. 5

2. Авдонина Н. С., К вопросу об определении и структуре профессиональной идентичности, Вестник ВГУ серия: Проблемы высшего образования. 2018 №1 с. 4

3. Белик А. А., Теория Дж. Мида и психологическая антропология, социальная психология и общество, том. 2 №1, 2011 с. 31-43

4. Джемс У., Эриксон Э.://под. Ред. Райгородский Д. Я. Психология самосознания, Хрестоматия, , Самара, БАХРАХ-М, 2007, 672 с.

5. Куприянчук Е. В., Теоретико-методологические основы исследования профессиональной идентичности, Саратовский государственный университет имени Н. Г. Чернышевского, 2014 с. 6

6. Пряжников Н. С., Пряжникова Е. Ю., Психология труда, М.: Издательский центр «Академия», 2009, 480 с.

7. Шиняева О. В., Тчапе А. К., Теорико-методологические подходы к исследованию профессиональной идентификации молодежи, Известия высших учебных заведений. Поволжский регион, №4 (36), 2015 12 с.
8. Шнейдер Л. Б., Профессиональная идентичность: Теория, Эксперимент, Трейнинг, учеб. Пособие, -М.: Издательство НПО «МОДЭК», 2004, 600 с.
9. Amanda Benjamin, Kendra Haines, Transitions to adulthood: What do we know, what do we need to know? Annual conference of CASAE, 2015, p. 29-33.
10. Woodman D., Wyn J., Youth and generation: Retinking change and inequality in the lives of young people, SAGE publications Ltd, 2015, 175 p.

ԱՆՁՆԱՅԻՆ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մասնագիտական պատրաստման ճանապարհին անձը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում՝ վերախմաստավորում է իր գոյությունը, հարմարվում կամ հակադրվում է շրջապատող սոցիալական միջավայրին՝ մշտապես գտնվելով դրա ազդեցության ներքո: Մակայն յուրաքանչյուրն անհատականություն է, ունի իր սեփական կենսավորված, որը կուտակել է տարիների ընթացքում, իր նախասիրություններն ու վարքային դրսևորումների «ձևաչափերը»: Սովորողներից շատերը ընթանում են կյանքի հունով՝ հենվելով իրենց ձեռքբերումների, առաջադիմության, ստացված գիտելիքների և կարողությունների վրա: Մակայն ոչ բոլորն են բնականոն ընթացքին հարմարվում: Կան պատանհներ և երիտասարդներ, ովքեր իրենց ինքնուրույնության և ակտիվության շնորհիվ պարբերաբար փորձում են փնտրել նորը, ունենալ նոր նպատակներ, առաջ քաշել նոր խնդիրներ՝ շատ դեպքերում նույնիսկ գերազանցելով այն պատկերացումներն ու հնարավորությունները, որոնք վերագրվել են նրանց շրջապատի կողմից:

Տարիների ընթացքում ծավալված հետազոտական արդյունքների ամփոփումը և վերլուծությունները հիմք են նոր մեթոդների, մեթոդիկաների թե՛ տեղայնացման, թե՛ ստեղծման ու մշակման համար: Հասարակական կյանքի բարեփոխումները և ակտուալ իրավիճակները իրենց նորովի պահանջներն են դնում մասնագետների առջև, որոնք այլընտրանքային լուծումներ են պահանջում: Այդ է պատճառը, որ մենք, հետազոտական նոր փուլում իրագործելով «Անձի հոգեբանական գնահատումը մասնագիտական պատրաստման գործընթացում» նախագիծը, համալրել ենք մեր նա-

խորդ տարիների մշակումները նոր, առավել արդյունավետ թեստերով և վարժանքներով, որոնք ներկայացնում ենք սույն ձեռնարկում:

Հավատարիմ մնալով մեր նախորդ տարիներին կատարած նախա-
ձեռնությունների արդյունքներին և առաջնորդվելով այսօրվա կրթական
նոր պահանջներով և չափանիշներով՝ նպատակահարմար ենք գտել ոչ
միայն կարևորել սովորողների անհատական առանձնահատկություննե-
րը, ինքնուրույնությունը, ինքնագնահատումը, այլև մեծ ուշադրություն
դարձնել նրանց մոտիվացիոն ոլորտի ցուցանիշների վրա: Նախապես
պայմանավորվածություն ունենալով Թաթարստանի Գիտությունների
ակադեմիայի սոցիալ-տնտեսական բաժնի ենթակայության Կազանի
տնտեսագիտության, կառավարման և իրավունքի ինստիտուտի հոգեբա-
նական ուղղվածությամբ աշխատանքներ իրականացնող մասնագետնե-
րի հետ՝ ձեռք ենք բերել նրանց կողմից մշակված մասնագիտական գոր-
ծունեության գնահատման մի քանի թեստեր: Դրանք են՝ «Գործողություն
իրականացնելու պատրաստվածության հարցարանը» (հեղինակներ՝ Կոլ-
պակովա Լ. Մ., Հուսանովա Ս. Վ.), «Ապրման բաղադրիչը որպես կարգա-
վորիչ գործունեության պաշար» (հեղինակներ՝ Կոլպակովա Լ. Մ., Չապլի-
նա Ս. Յու.) և «Պատկերացումներ սեփական կյանքի և արժեքների մասին»
(հեղինակ՝ Կոլպակովա Լ.) մեթոդիկաները: Նշված հոգեդիագնոստիկա-
կան մեթոդիկաները անցել են թարգմանական և հետթարգմանական,
փորձագիտական գնահատման ընթացակարգերով, տեղայնացվել են մեր
աշխատանքային խմբի կողմից: Տեղայնացման գործընթաց է անցել նաև
«Մասնագիտական պատրաստվածության» (հեղինակ՝ Չերնյավսկայա Ա.
Պ.) ծավալուն հարցարանը, որն ուղղված է ինքնավարության, որոշման
կայացման, պլանավորման և մասնագիտական գործունեության այլ կար-
ևոր բաղադրիչների դուրսբերմանն ու գնահատմանը:

Մասնագիտական պատրաստման գործընթացի համար արդյունա-
վետ նախահիմք է մասնագիտական ինքնուրույն կողմնորոշումը: Հասկա-
նալ սեփական առանձնահատկությունները, յուրահատկությունները,
հնարավորությունները, կարողանալ հստակեցնել նպատակները և հետո
միայն ընտրություն կատարել մասնագիտության մեջ. սա է ամենակա-
րևորը և առանցքայինը ապագա մասնագետի կողմնորոշման գործընթա-
ցի համար: Ամեն մի մասնագիտության համար մեզանից յուրաքանչյուրն
ունի ինչ-որ տեղ կարծրատիպային, ինչ-որ չափով գիտակցված կամ չգի-

տակցված պատկերացումներ: Օրինակ՝ երբ տեղեկանում ենք, որ մեր ծանոթներից մեկը բժիշկ է դառնալու, մտովի պատկերացում ենք կազմում ոչ միայն նրա ուսումնառության, այլև ապագա կյանքի մասին: Այսպես ցանկացած մասնագիտության համար, լինի դա հոգեբան թե մաթեմատիկոս, դերասան թե լեզվաբան, նկարիչ թե ֆիզիկոս և այլն: Ինչպես նշում են մասնագիտական գործունեության և պատրաստման հիմնախնդրով զբաղվող շատ հեղինակներ (Լ. Մ. Կուլպակովա, 2015, Ա. Պ. Չերնյավսկայա, 2001, Ա. Ա. Անդրեևա, 2008, Ե. Ֆ. Ջեյեր, 2006 և այլք), երբ փորձում ենք ընդահանրացնել մարդու կյանքի ուղին, կարող ենք ասել, որ նա ծնվում է, սովորում է, ձեռք է բերում ընկերներ, ընտանիք է կազմում, ծավալում է աշխատանքային կամ մասնագիտական գործունեություն, ունենում հաջողություններ, հետո՝ հասնում կենսաթոշակային տարիքի և այլն... Սակայն եթե ոչ թե ընդհանրացնենք մարդու կյանքի ստանդարտ իրողությունները, այլ փորձենք անհատականացնել յուրաքանչյուրի կյանքը, պարզ կլինի, որ ամեն մեկի համար այն ընթանում է տարբեր ուղիներով, տարբեր վերելքներով և անկումներով:

Վերջին տասնամյակում և ավելի վաղ (2007 թ. սկսած) մեր աշխատանքային խումբը, իրականացնելով պետության կողմից ֆինանսավորվող թեմատիկ նախագծեր, առաջնորդվել է մասնագիտական ինքնորոշման հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրմամբ, հետազոտական գործիքակազմի և հոգեբանական, ինչպես նաև հոգեբանաստոցիալական գնահատման տեխնոլոգիաների մշակմամբ:

Մեր կողմից կատարված հետազոտություններում, երբ ԵՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողների շրջանում կատարվել է հարցում, թե ինչու են ընտրել տվյալ մասնագիտությունը, պատասխաններն ունեցել են նմանատիպ բովանդակություններ. «հիմնվել ենք առարկայական նախասիրության և դրա մեջ խորանալու ցանկության վրա» (29%), «ավելի շատ առաջնորդվել ենք բարձրագույն ուսումնական հաստատության վարկանիշով» (20%), «ընտրությանը նպաստել են ծնողների խորհուրդները, տեղեկատվությունը» (42%), «հաշվի են առնվել ապագա մասնագիտության համար անհրաժեշտ նախադրյալները» (9%): Սակայն երբ հարցը վերաբերում է աշխատանք գտնելուն, հասարակության մեջ հանդիպում ենք «դժվար է գտնել», «աշխատանք չկա», «որտեղ հնարավորություն լինի», «հարմար տեղ չկա» և այլ սահմանափակ արտահայտությունների: Մեկ-

նաբանել այս երևույթը միայն այն տեսանկյունից, որ մեր հասարակության մեջ իրոք կան աշխատանք գտնելու դժվարություններ, այնքան էլ համոզիչ չէ: Պետք է շեշտը դնել այն հանգամանքի վրա, որ յուրաքայուր մարդ կրթություն ստանալուց առաջ պետք է ունենա այն գիտակցումը, որ մտնում է մասնագիտական գործունեության համար հիմք հանդիսացող, նախադրյալ ստեղծող և ապահովող փուլ, այլ ոչ թե լոկ կրթություն ստանալու փուլ: Այսինքն՝ կրթության գործընթացի առաջին իսկ օրերից ոչ միայն պետք է բավարարվի գիտելիք ձեռք բերելու, կրթություն ստանալու պահանջմունքը, այլև ձևավորվի պատկերացում գիտելիքը կիրառելու, սեփական կարողությունները դրան ծառայեցնելու և մասնագիտական սկզբնական հմտություններ ձեռք բերելու մասին: Վերջինս նպաստում է մասնագիտական կերպարի հետ նույնականացմանը, որը շատ արդյունավետ է դարձնում աշխատանքային գործունեության հետագա փնտրումների գործընթացը:

Վերջին տարիներին դիմորդները ավելի շատ նախապատրաստվում էին բարձրագույն կամ միջին մասնագիտական հաստատություն դիմել ոչ թե մասնագիտություն ձեռք բերելու, այլ ուղղակի ընդունվելու, ուսանողի կարգավիճակ ստանալու և այս կամ այն համալսարան մուտք գործելու համար: Դա ոչ միայն իրենց համար էր կարևոր, այլև ծնողների. հպարտանում էին, որ երեխան համալսարանում է սովորում: Նույնիսկ պատահում էին դեպքեր, երբ ընդունվելուց հետո ուսանողը դժվարանում էր նշել իր մասնագիտությունը: Ասել, որ արդեն այդպես չէ, այնքան էլ ճիշտ չի լինի: Բայց չնկատել, որ ինչ-որ բան փոխվում է կրթության և մասնագիտության արժեքման համակարգում, ևս սխալ կլինի: Վերջին տասնամյակում, մանրակրկիտ ուսումնասիրելով մասնագիտական ինքնորոշման և ընտրության հիմնախնդիրը, մասնագիտական պատրաստման գործընթացի համար առավել նշանակալի ենք համարում սովորողի՝ որպես ապագա մասնագետի տեղեկացվածությունը: Մեր նպատակն է ոչ միայն տեսական դրույթներով և վերլուծություններով հագեցնել սովորողներին, այլև գործնականում՝ պարզ վարժանքների և տեխնիկաների կիրառմամբ, թրեյնինգային տարբեր ծրագրերով և նախագծերով աջակցել սովորողներին համարժեք գնահատել սեփական կարողություններն ու հնարավորությունները, ճանաչել սեփական անձը և ծանոթանալ տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների հոգեբանական դիմանկար-

ներին, մասնագիտական գործունեության հոգեբանական նկարագրերին, լինել տեղեկացված՝ մասնագիտություն ընտրելիս ճիշտ ինքնորոշվելու համար: Եվ, ինչպես արդեն բազմիցս նշվել է, այսօր մասնագիտության համար ավելի վաղ պետք է ինքնորոշվել և ոչ թե միայն կողմնորոշվել: Անձի ինքնորոշմանը առաջին հերթին նպաստում են ինքնուրույնության և ինքնավարության որակները, այսինքն՝ բավարար պատրաստակամություն սեփական անձի պատասխանատվության և սեփական որոշումների կայացման համար: Այս նպատակով մեր գործնական աշխատանքները կիրառվում են ավագ դպրոցականների և բակալավրիատի ուսանողների շրջանում՝ նրանց մասնագիտական ինքնորոշման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար:

Սույն ձեռնարկի հոգեբանական գնահատման և կիրառական մասերում ներկայացվում են մեր՝ նախորդ տարիների մշակած և տեղայնացված հեղինակային գործիքները՝ համալրված նորերով: Նոր վարժանքների շարքը հնարավորություն է տալիս սովորողներին ինքնորոշվելու և կողմնորոշվելու սեփական հետաքրքրությունների, հնարավորությունների, կարողությունների և նախասիրությունների շրջանականերում, լինել սեփական գործունեության պատասխանատուն, կարողանալ կատարել մասնագիտական ընտրություն կրթական տարբեր փուլերում:

ՀՈԳԵԴԻԱԳԼՈՍՏԻԿԱԿԱՆ
ԹԵՍՏԵՐ ԵՎ ՀԱՐՑԱՐԱՆՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼ
ԱՆՁԻ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ



ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

Հրահանգ. Յուրաքանչյուր հարցի համար ընտրեք ա), բ), գ) տարբերակներից որևէ մեկը:

1. Սովորաբար ինչպե՞ս եք պատրաստվում դասերին և դպրոցական պարապմունքներին.

- ա) աշխատասիրությամբ, առանց օգնության,
- բ) դիմելով համադասարանցիների և ուսուցիչների օգնությանը,
- գ) հույսը դնելով ուրիշների վրա:

2. Երբ ունենում եք որոշման կայացման խնդիր, ինչպե՞ս եք այն իրականացնում.

- ա) մշտապես այլ մարդկանց խորհրդով,
- բ) երբեմն խորհրդակցելով մտերիմ մարդկանց հետ,
- գ) հույսը դնելով սեփական փորձի և գիտելիքների վրա:

3. Ինչպե՞ս եք ընտրում մտերիմ ընկեր.

- ա) առաջնորդվելով այլ մարդկանց կարծիքներով,
- բ) մտերիմների հետ խորհրդակցելով,
- գ) առաջնորդվելով միայն սեփական կարծիքով:

4. Ինչպե՞ս եք պնդում Ձեր սեփական կարծիքը ընկերական միջավայրում.

- ա) առանց դժվարության, անկախ հանգամանքից,
- բ) վիճաբանելով, փորձելով չոտնահարել դիմացինի կարծիքը,
- գ) դժվարանում եմ պնդել:

5. Ինչպե՞ս եք պնդում Ձեր սեփական կարծիքը ընտանիքում.

- ա) մշտապես, անկախ հանգամանքից,
- բ) մեծմասամբ դեմ գնալով, պահպանելով իմը,
- գ) հազվադեպ եմ կարողանում պնդել:

6. Ինչպե՞ս եք Ձեզ դրսևորում ուսումնական և հասարակական միջավայրերում.

- ա) մշտապես ընդունելով մյուսների առաջարկները,
- բ) հասարակական աշխատանքներում ակտիվություն ցուցաբերելով,
- գ) առաջնահերթ ուսմամբ տարվելով:

7. Ինչպե՞ս եք հետևում սեփական առողջությանը.

- ա) հազվադեպ ուշադրություն դարձնելով,
- բ) մեծերի խորհրդով,
- գ) մշտապես հետևողական եմ:

8. Իմ հետաքրքրություններում կողմնորոշված եմ՝

- ա) դեպի ապագա մասնագիտությունը,
- բ) տատանվելով մի քանի բնագավառների միջև,
- գ) դեռևս կողմնորոշված չեմ:

9. Մի րո՞ւմ եք հաջողության հասնել.

- ա) դիմելով փորձառուների աջակցությանը,
- բ) կենտրոնանալով գործի վրա,
- գ) վստահելով սեփական ուժերին:

10. Ինչպե՞ս կկազմակերպեք Ձեր կենցաղը, եթե մենակ լինեք.

- ա) առանց որևէ դժվարության,
- բ) կհետաձգեմ գործերը, մինչև օգնողներ լինեն,
- գ) կդժվարանամ:

11. Ի՞նչ որոշում կկայացնեք դպրոցն ավարտելուց հետո.

- ա) կշարունակեմ ուսումս՝ հաշվի առնելով սեփական նախասիրություններս ու գիտելիքներս,
- բ) կառաջնորդվեմ ծնողներիս և մտերիմներիս խորհուրդներով,
- գ) կդժվարանամ որոշում կայացնել:

12. Ի՞նչը դեր կխաղա Ձեր ապագա աշխատանքի ընտրության մեջ.

- ա) պահանջարկը և աշխատատեղի հնարավորությունը,
- բ) կապերը, ծանոթներից ստացված տեղեկությունները,
- գ) կապասեմ առաջարկի:

13. Եթե տանը ինչ-որ իր փչանում է, ապա Դուք՝

- ա) կփորձեմ վերանորոգել այն հնարավորությունների սահմաններում,
- բ) կդիմեմ մեծի օգնությանը,
- գ) դեն կնետեմ:

14. Եթե պետք է կատարեք կարևոր առաջադրանք, ապա՝

- ա) կառաջնորդվեմ մասնագետի կարծիքով,
- բ) կփորձեմ խորհրդակցել մեծի հետ,
- գ) ամբողջովին կկենտրոնանամ գործի վրա:

15. Ձեզ համար կարևոր է.

- ա) ուսումնական գործընթացին հարմարվելը,
- բ) գիտելիքներն ու իմացությունը,
- գ) բարձր առաջադիմությունը:

16. Երբ հանդիպում եք դժվարությունների՝

- ա) հիասթափվում եք,
- բ) փորձում եք կանգ առնել, կշռադատել,
- գ) ավելի եք կենտրոնանում անելիքների վրա:

17. Կարողանո՞ւմ եք հետևել Ձեր հագուստին՝

- ա) այո՝ ,
- բ) մեծի օգնությամբ,
- գ) ո՛չ:

18. Երբ հստակ որոշում եք կայացնում, ապա կարևորում եք՝

- ա) այլ մարդկանց հավանությունը,
- բ) մեծերի խորհուրդը,
- գ) սեփական կարծիքում համոզվածությունը:

19. Երբ հայտնվում եք անձանոթների միջավայրում, ապա՝

- ա) ակտիվություն եք ցուցաբերում ծանոթության նպատակով,
- բ) ընդառաջում եք դիմացինի ակտիվությանը,
- գ) ոչինչ չեք ձեռնարկում:

20. Հասարակական կարծիքի հանդեպ ունեք հետևյալ մոտեցումը՝

- ա) անտեսում եք,
- բ) ընդունում եք մասամբ,
- գ) ընդունում եք լիովին:

Թեստի բանալի.

- Եթե հարցվողը ընտրել է **ա)** տարբերակը 1, 4, 5, 8, 10, 11, 12, 13, 17, 19 և 20 հաստատումների համար, ապա յուրաքանչյուր համընկնման դեպքում ստանում է 2 միավոր:
- Եթե ընտրել է **գ)** տարբերակը 2, 3, 6, 7, 9, 14, 15, 16 և 18 հաստատումների համար, ապա յուրաքանչյուր համընկնման դեպքում ստանում է 2 միավոր:
- Եթե հարցվողն ընտրել է միջին՝ **բ)** տարբերակը, ապա ստանում է 1 միավոր:

Ստացված արդյունքները գումարվում են:

Արդյունքների մեկնաբանություն.

27-40 միավոր – անտարբեր, չեզոք վերաբերմունք այլ մարդկանց կարծիքին, լիովին ինքնուրույնություն, որը կարող է նույնիսկ հասնել համառության, ինքնավստահության: Այս ցուցանիշը կարող է հանգեցնել լրացուցիչ սահմանափակումների, տարբեր պարագաներում գերվստահության և նպատակին ամեն գնով հասնելու անսահման ձգտման:

13-26 միավոր – բնութագրվում է անձի հուսալիությամբ և կայունությամբ, դժվարությունների հանդեպ դիմացկունությամբ և հարմարվողականությամբ: Այս ցուցանիշների դեպքում առկա է իրատեսական վստահություն սեփական ուժերի հանդեպ, նաև գնահատվում է շրջապատողների կարծիքը, որոնց կողմից անձը ճանաչվում և գնահատվում է:

0-12 միավոր – բնութագրվում է սեփական անձի հանդեպ անվստահությամբ, շրջապատից կախվածությամբ, անորոշությամբ:



ՆԱԽԱՁԵՌՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

1. Ի՞նչ կանես, եթե խանութում գտնես ինչ-որ մեկի դրամապանակը:
2. Ի՞նչ կանես, եթե կորցրել ես ուրիշի իրը:
3. Ո՞ր դեպքերում են դիմում ոստիկանի:
4. Ինչպե՞ս դու կվարվես, եթե քեզնից փոքրը սկսի կռվել քեզ հետ:
5. Ի՞նչ կանես, եթե տեսնես փողոցում կանգնած երեխայի ուղղությամբ սլացող մեքենան:
6. Ինչո՞ւ է ավելի հարմար շենքը կառուցել քարից, այլ ոչ թե պանելից:
7. Ինչո՞ւ են կանանց և երեխաներին պատերազմական իրավիճակներում տեղահանում:
8. Ինչո՞ւ են հանցագործներին մեկուսացնում:
9. Ինչո՞ւ է թանկ ապրանքը ավելի հարմար գնել խոշոր թղթադրամով, քան մանրադրամներով:
10. Ինչո՞ւ է սննդամթերքի վրա ժամկետ նշվում:
11. Ինչո՞ւ է ավելի հարմար դրամը փոխանցել բարեգործական հիմնադրամ, քան տալ մուրացկանի:
12. Ինչո՞ւ են ընտրությունները կատարում փակ, գաղտնի քվեարկությամբ:
13. Ինչո՞ւ է ավելի հարմար քաղաքից դուրս զբոսանքի գնալուց օգտվել միանգամվա սպասքից:
14. Ինչո՞ւ է անհրաժեշտ կատարել խոստումը:
15. Ինչպե՞ս կմեկնաբանեք հետևյալ ասացվածքը. «Ամեն փայլող բան ոսկի չէ»:
16. Ինչո՞ւ ենք ընտրում պատգամավորներ:
17. Ինչո՞ւ են ներմուծվում նոր գաղափարները:
18. Ի՞նչ կանես, եթե քո փոխարեն մեկ ուրիշն է որոշում կայացրել քեզ վերաբերող կարևոր հարցում:
19. Ինչպե՞ս կմեկնաբանես այս արտահայտությունը. «Այսօրվա գործը վաղվան մի՛ թող»:
20. Ե՞րբ է արդարացվում համառություն ցուցաբերելը:

Թեստի բանալի.

- Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է **2 միավոր**, եթե հարցվողը տվել է հստակ պատասխան (նույնիսկ մեկից ավելի), որում երևում է սեփական կարծիքը կամ գործողությունը:
- Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է **1 միավոր**, եթե հարցվողը պատասխանի մեջ դիմում է մեծահասակի կամ այլ մարդու աջակցությանն ու միջամտությանը:
- Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է **0 միավոր**, եթե հարցվողը դժվարանում է հիմնավորում գտնել:

Արդյունքների մեկնաբանություն.

27-40 միավոր – այս ցուցանիշը բնութագրվում է նախաձեռնողության բարձր մակարդակով, որը բնորոշ է անկախություն սիրող ինքնուրույն անձանց:

13-26 միավոր – այս ցուցանիշների դեպքում առկա է նախաձեռնողության միջին մակարդակ, որում արժևորվում են այլ մարդկանց, մեծահասակների խորհուրդը, օգնությունը և միջամտությունը:

0-12 միավոր – բնութագրվում է սեփական անձի հանդեպ անվստահությամբ, շրջապատից կախվածությամբ, ինքնուրույնության և նախաձեռնողության թույլ արտահայտվածությամբ:

Հիշեցում. Հարցարանը համապատասխանում է Վեբսլերի ինտելեկտի սանդղակի (1974) 9-րդ ենթաթեստին:



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հրահանգ. Դասակարգեք նշված առարկաները ըստ ստորև ներկայացված առաջադրանքների՝ յուրաքանչյուրին տալով իր կարգային համարը:

<i>Ո՞ր առարկային էք տալիս նախընտրություն Ձեր ապագա մասնագիտության համար</i> (1-շատ նախընտրելի, 21-քիչ նախընտրելի)	ԱՌԱՐԿԱՆԵՐ	<i>Ո՞ր առարկայից ստացված գիտելիքներն են բավարարում Ձեր հետագա զարգացման համար</i> (1-լիովին բավարար, 21- ոչ բավարար)	
	Հայոց լեզու		
	Հայ գրականություն		
	Մաթեմատիկա		
	Ֆիզիկա		
	Քիմիա		
	Կենսաբանություն		
	Պատմություն		
	Աշխարհագրություն		
	Ինֆորմատիկա և ՏՀՏ		
	Օտար լեզու		
	Ֆիզկուլտուրա		
	ՆԶՊ		
	Քաղաքագիտություն		
	Տնտեսագիտություն		
	Հոգեբանություն		
	Բարոյագիտություն		
	Արվեստի պատմություն		
	Կենցաղային տեխնիկա		
	Արտասահմանյան գրակ.		
	Հոետորական արվեստ		
	Սպորտային խմբակ		

Նշեք Ձեզ շատ հետաքրքրող մի քանի առարկա.

ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թերթիկի աջ մասում՝ դատարկ սյունակում, յուրաքանչյուր տողում պետք է նշվի գնահատված կարգերի տարբերությունը: Մեծ արժեքները կվկայեն գիտելիքի և նախասիրության տարբերության մասին, իսկ չնչին տարբերությունները՝ համապատասխանության մասին:

Լրացուցիչ նշումները ևս համեմատվում են վերը նշված կարգային գնահատումների հետ և մեկնաբանվում են որակապես:

ՀԱՎԱՍՏՈՒՄ. Գիտականորեն կարելի է դուրս բերել կոռելյացիոն գործակից՝ ռանգային վերլուծության ճանապարհով, որի նշանակությունը գերազանցելու պարագայում կարող ենք փաստել աշակերտի առարկայական ուղղվածության և կողմնորոշման միջև համապատասխանության մասին: Բանաձևն ունի հետևյալ տեսքը.
$$\rho = 1 - \frac{6 \sum_{i=1}^n d_i^2}{n(n^2 - 1)},$$

որտեղ n -ը առարկաների քանակն է, իսկ d^2 -ն՝ կարգերի տարբերությունների քառակուսիների գումարը: $n=21$ դեպքի համար պետք է ստացված հաստատունը (0.00068) բազմապատկել հաշվարկված քառակուսային գումարով և 1-ից հանել ստացվածը: Որքան ստացված գործակիցը գերազանցի աղյուսակային նշանակությունը (0.369), այնքան համապատասխանությունը մեծանում է երկու կարգային գնահատումների միջև:

Աշակերտի մասնագիտական ինքնորոշման ամբողջական պատկերն ունենալու համար պետք է աշխատանքը շարունակվի նմանատիպ այլ գնահատումով, որը վերաբերում է մասնագիտություններին և պահանջարկին:

Հրահանգ. - Դասակարգեք նշված մասնագիտությունները ըստ ստորև ներկայացված առաջադրանքների՝ յուրաքանչյուրին տալով իր կարգային համարը:

<i>Ո՞ր մասնագիտությանն էք տալիս նախընտրություն Ձեր ապագայի համար</i> (1-շատ նախընտրելի, 21-քիչ նախընտրելի)	ՄԱՍՆԱԳԻՏՈՒ- ԹՅՈՒՆ	<i>Ո՞ր մասնագիտությունն էք համարում պահանջարկ ունեցող</i> (1-լիովին բավարար, 21- ոչ բավարար)	
	Լեզվաբան		
	Գրականագետ		
	Մաթեմատիկոս		
	Ֆիզիկոս		
	Քիմիկոս		
	Կենսաբան		
	Պատմաբան		
	Աշխարհագրագետ		
	Ծրագրավորող		
	Օտար լեզվի մասնագետ		
	Զինվորական		
	Քաղաքագետ		
	Տնտեսագետ		
	Հոգեբան		
	Արվեստաբան		
	Սպորտսմեն		
	Բժիշկ		
	Իրավաբան		
	Ինժեներ		
	Հաշվապահ		
	Ոստիկան		

ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թերթիկի աջ մասում՝ դատարկ սյունակում, յուրաքանչյուր տողում պետք է նշվի գնահատված կարգերի տարբերությունը: Մեծ արժեքները կվկայեն մասնագիտության ընտրության և դրա պահանջարկի անհամապատասխանության մասին, իսկ չնչին տարբերությունները ավելի շատ ցույց կտան ինքնորոշման աստիճանը: Եթե երկու առանձին գնահատումների համար տարբերությունների կարգերը միմյանցից էապես չեն տարբերվում, կարող ենք փաստել, որ աշակերտն ունի մասնագիտական ինքնորոշման բարձր մակարդակ:

Լրացուցիչ նշումները ևս համեմատվում են վերը նշված կարգային գնահատումների հետ և մեկնաբանվում են որակապես:

ՀԱՎԱՍՏՈՒՄ. Գիտականորեն կարելի է դուրս բերել կոռելյացիոն գործակից՝ ռանգային վերլուծության ճանապարհով, որի նշանակությունը գերազանցելու պարագայում կարող ենք փաստել աշակերտի մասնագիտական նախընտրության և պահանջարկի միջև համապատասխանության մասին: Բանաձևն ունի հետևյալ տեսքը.
$$\rho = 1 - \frac{6 \sum_{i=1}^n d_i^2}{n(n^2 - 1)},$$

որտեղ n -ը առարկաների քանակն է, իսկ d^2 -ն կարգերի տարբերությունների քառակուսիների գումարը: $n=21$ դեպքի համար պետք է ստացված հաստատունը (0.00068) բազմապատակել հաշվարկված քառակուսային գումարով և 1-ից հանել ստացվածը: Որքան ստացված գործակիցը գերազանցի աղյուսակային նշանակությունը (0.369), այնքան համապատասխանությունը մեծանում է երկու կարգային գնահատումների միջև:

Մասնագիտական ինքնորոշման ցուցանիշները կարող են համարվել զրույցի, հարցազրույցի մեթոդներով, որոնք իրականացնելու ըն-

թացքում ցանկալի է առաջնորդվել հետևյալ ուղղորդող հարցերով և հաստատումներով.

Ի՞նչ էք պատրաստվում անել հիմնական դպրոցն ավարտելուց հետո.

- ստանալ նախնական մասնագիտական կրթություն
- ստանալ միջին մասնագիտական կրթություն
- շարունակել ուսումն ավագ դպրոցում
- աշխատել, կատարել այն աշխատանքը, ինչը հնարավոր է
- աշխատել, ձեռք բերել հմտություններ հետագա մասնագիտություն ձեռք բերելու համար
- դեռ չեմ կողմնորոշվել

Ի՞նչը կարող է նպաստել մասնագիտություն ընտրելուն

- բարձրագույն ուսումնական հաստատությունը
 - ծնողների ստացած մասնագիտությունը
 - ծնողների առաջարկը
 - ծնողների թելադրանքը
 - այն, որ նախնական ընտրությունը մեծերի կողմից հավանության է արժանանում
 - առարկայական նախասիրությունը և դրա մեջ խորանալու ցանկությունը
 - տվյալ մասնագիտության համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը
 - մասնագիտության վարկանիշը
 - մասնագիտության պահանջարկը
 - մեծերի, շրջապատող հեղինակավոր անձանց խորհուրդները
 - ընկերական միջավայրի ազդեցությունը
 - դեռ չեմ կողմնորոշվել
-



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՀԱՐՑԱՐԱՆ

Հրահանգ. Եթե *Դուք ունենայիք աշխատանքի հնարավորություն, նշված տարբերակներից ո՞րը կնախընտրեիք (համապատասխան ա) կամ բ) տարբերակի մոտ որևէ նշում կատարեք).*

1

- ա) Խնամել կենդանիներին:
- բ) Սպասարկել մեքենաները:

2

- ա) Օգնել հիվանդներին:
- բ) Կազմել աղյուսակներ, սխեմաներ, համակարգչային ծրագրեր:

3

- ա) Հետևել գրքային ձևավորումների, գեղարվեստական բացիկների, պլակատների որակին:
- բ) Հետևել բույսերի զագացմանը, վիճակին:

4

- ա) Մշակել նյութեր (փայտ, կտոր, մետաղ և այլն):
- բ) Ապրանքները հասցնել սպառողներին (գովազդել, վաճառել):

5

- ա) Քննարկել գիտահանրամատչելի գրքեր և հոդվածներ:
- բ) Քննարկել գեղարվեստական գրքեր:

6

- ա) Աճեցնել որևէ տեսակի բույս:
- բ) Մարզել հասակակիցներին (կամ փոքրերին):

7

- ա) Պատրաստել նկարների, երաժշտական գործիքների պատճեններ:
- բ) Վարել որևէ փոխադրամիջոց (բեռնատար, մարդատար):

8

- ա) Մարդկանց տեղեկացնել, բացատրել անհրաժեշտ տեղեկություններ (տեղեկատվական բյուրոյում, էքսկուրսիայի ժամանակ և այլն):
- բ) Կատարել ցուցահանդեսների, պիեսների կամ ցուցափեղկերի գեղարվեստական ձևավորում:

9

ա) Վերանորոգել իրեր (հագուստ, տեխնիկա), բնակարան:

բ) Ուղղել տեքստերի սխալները:

10

ա) Բուժել կենդանիներին:

բ) Կատարել հաշվարկներ:

11

ա) Ստեղծել նոր տիպի բույսեր:

բ) Կառուցել, նախագծել նոր սարքավորումներ:

12

ա) Պարզաբանել վիճաբանություններ, համոզել, բացատրել, խրախուսել, պատժել:

բ) Ճշգրտել գծագրեր, սխեմաներ և այլն:

13

ա) Դիտել, ուսումնասիրել ստեղծագործական ինքնագործունեության խմբակի աշխատանքը:

բ) Դիտել, ուսումնասիրել մանրէների կյանքը:

14

ա) Սպասարկել, կարգավորել բժշկական սարքավորումները:

բ) Բժշկական օգնություն ցուցաբերել մարդկանց:

15

ա) Կազմել ճշգրիտ նկարագրություններ երևույթների, իրադարձությունների և չափվող օբյեկտների մասին:

բ) Գեղարվեստորեն նկարագրել, պատկերել իրադարձությունները:

16

ա) Կատարել լաբորատոր անալիզներ հիվանդանոցում:

բ) Ընդունել, հետազոտել հիվանդներին, նշանակել բուժում:

17

ա) Ներկել շինությունների պատերը:

բ) Շենքի մոնտաժ կամ մեքենայի հավաքում իրականացնել:

18

ա) Կազմակերպել հասակակիցների կամ կրտսեր ընկերների մշակութային արշավներ, այցելություններ ցուցահանդես, թատրոն և այլն:

բ) Խաղալ բեմում, մասնակցել համերգների:

19

ա) Գծագրերով դետալներ պատրաստել, կառուցել շենքեր:

բ) Զբաղվել գծագրությամբ, պատճենահանել գծագրեր, քարտեզներ:

20

ա) Պայքարել բույսերի հիվանդությունների և ընդհանրապես բուսական աշխարհի վնասատուների դեմ:

բ) Աշխատել ստեղնաշարով մեքենաների վրա:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Յուրաքանչյուր հարցի ընտրված տարբերակի համար կատարվում է նշում ստորև բերված պատասխանների թերթիկում: Այնուհետև յուրաքանչյուր պլանակի համար հաշվարկվում է գումարային բալ: Սյունակների վերջին տողի նշանակումները վերաբերում են գործունեության տարբեր ոլորտների: Դրանք են՝ «մարդ-բնություն», «մարդ-տեխնիկա», «մարդ-մարդ», «մարդ-նշանային համակարգ» և «մարդ-գեղարվեստական պատկեր»:

Պատասխանների թերթիկ

1ա	1բ	2ա	2բ	3ա
3բ	4ա	4բ	5ա	5բ
6ա		6բ		7ա
	7բ	8ա		8բ
	9ա		9բ	
10ա			10բ	
11ա	11բ	12ա	12բ	13ա
13բ	14ա	14բ	15ա	15բ
16ա		16բ		17ա

				18բ
	17բ	18ա		
	19ա		19բ	
20ա			20բ	
Մ-Բ	Մ-Տ	Մ-Մ	Մ-Ն	Մ-Գ

Գումարային առավելագույն բալլը վկայում է գործունեության համապատասխան ոլորտի նկատմամբ անձի ուղղվածության մասին:



ԼՈՎՈՒՄ ՀՄԿՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

Հրահանգ. *Խնդրում ենք յուրաքանչյուր հաստատման համար նշեք ա) և բ) տարբերակներից մեկը՝ այն, որն ավելի է համապատասխանում Ձեզ: Երկար մի՛ մտածեք ամեն հարցի վրա, քանի որ չկան ճիշտ կամ սխալ պատասխաններ, այլ կա պատասխան, որն ավելի ընդունելի է Ձեր անձի համար:*

1.

ա) Երեխաները փորձությունների մեջ են ընկնում, որովհետև ծնողները շատ են պատժում նրանց:

բ) Երեխաների մեծ մասի դժբախտությունը պայմանավորված է նրանով, որ ծնողները մեղմ են վերաբերվում նրանց:

2.

ա) Մարդկանց անհաջողություններից շատերը պայմանավորված են նրանով, որ նրանք բախտ չունեն:

բ) Մարդկանց դժբախտ լինելը նրանց թույլ տված սխալների հետևանքն է:

3.

ա) Պատերազմների հիմնական պատճառներից մեկն այն է, որ մարդիկ բավարար չեն կարևորում քաղաքականությունը:

բ) Պատերազմները, միևնույնն է, կլինեն՝ անկախ այն բանից, թե մարդիկ ինչ ջանքեր են գործադրում դրանք կանխարգելելու համար:

4.

ա) Ի վերջո մարդիկ ձեռք են բերում այն հարգանքը, որը վաստակում են այս աշխարհում:

բ) Ցավոք, մարդու արժեքը մնում է չընդունված՝ անկախ նրանից, թե որքան է նա ջանում:

5.

ա) Կարծիքն այն մասին, որ ուսուցիչները սովորողների հանդեպ արդարացի չեն, անհեթեթություն է:

բ) Սովորողների մեծ մասը չի հասկանում, թե որքանով է նրանց գնահատականը կախված պատահական իրողությունից:

6.

ա) Առանց համապատասխան իրավունքների դժվար է արդյունավետ առաջնորդ դառնալ:

բ) Ունակ մարդիկ, ովքեր ձախողվում են առաջնորդ դառնալուց, ընդհանուր են նրանով, որ չեն օգտվում իրենց տրված հնարավորություններից:

7.

ա) Նշանակություն չունի, թե որքան եք Դուք ջանք թափում, միևնույնն է, կան մարդիկ, որոնք Ձեզ չեն սիրում:

բ) Մարդիկ, ովքեր չեն կարողանում անել այնպես, որ սիրված լինեն ուրիշների կողմից, չեն էլ հասկանում, թե ինչպես վարվեն մյուսների հետ:

8.

ա) Ժառանգականությունը մեծ դեր է խաղում մարդու ձևավորման մեջ:

բ) Մարդու կյանքի փորձն է որոշիչ, թե ինչպիսին է նա:

9.

ա) Ես միշտ համարել եմ, որ ինչ լինելու է, կլինի:

բ) Ճակատագրին հավատալը երբեք նախընտրելի չի եղել ինձ համար, որքան որոշում կայացնելը գործերի ընթացքի համար:

10.

ա) Լավ պատրաստված ուսանողի պարագայում հազիվ թե քննական թեստն անարդար լինի:

բ) Շատ անգամ քննական հարցերը դուրս են դասընթացի սահմաններից, և անիմաստ է դրանք յուրացնել:

11.

ա) Հաջողության հասնելը պայմանավորված է քրտնաջան աշխատանքով:

բ) Լավ աշխատանք ունենալը պայմանավորված է նրանով, որ մարդը հայտնվում է ճիշտ տեղում՝ ճիշտ պահին:

12.

ա) Միջին խավի քաղաքացին կարող է ազդեցություն ունենալ կառավարության որոշումների վրա:

բ) Աշխարհը կառավարվում է մի քանի մարդկանց կողմից, ովքեր ուժ ունեն, շատ քիչ բան կարող է անել «շարքային մարդը»:

13.

ա) Երբ պլաններ եմ կազմում, գրեթե համոզված եմ, որ դրանք կիրագործեմ:

բ) Ապագան պլանավորելը ոչ միշտ է ճիշտ, քանի որ շատ բաներ, ինչպես պարզվում է, ձակատագրից են կախված:

14.

ա) Կան որոշակի մարդիկ, որոնք պարզապես լավը չեն:

բ) Ամեն մարդու մեջ մի լավ բան կա:

15.

ա) Ինչ ուզում և ստանում եմ, իմ պարագայում պայմանավորված չէ բախտով:

բ) Շատ դեպքերում որոշում կայացնելու համար պետք է «մանրադրամ նետենք»:

16.

ա) Ղեկավար դառնալը հաճախ կախված է այն բանից, թե որքանով է մարդ հաջողակ և ինչպես է հայտնվում այնտեղ, ուր հարկավոր է:

բ) Մարդուն հարկավոր է գործի դնել կարողությունը, բախտը ոչ մի առնչություն չունի դրա հետ:

17.

ա) Ինչ վերաբերում է համաշխարհային գործընթացին, մեզանից շատերը որոշ ուժերի գոհ են դառնում, որոնք մենք ոչ հասկանում ենք, ոչ էլ կարող ենք ղեկավարել:

բ) Ակտիվ գործունեություն ծավալելով քաղաքական և հասարակական կյանքում՝ մարդիկ կարող են վերահսկել համաշխարհային իրադարձությունները:

18.

ա) Մարդիկ չեն հասկանում, թե իրենց կյանքն ինչպես է պատահականություններով ղեկավարվում:

բ) «Բախտ» ասվածը իսկապես գոյություն չունի:

19.

ա) Մարդ միշտ պետք է կարողանա ընդունել սեփական սխալները:

բ) Սովորաբար լավ է, երբ մարդը կարողանում է կոծկել սեփական սխալները:

20.

ա) Դժվար է իմանալ, որ մարդն իսկապես սիրում է քեզ:

բ) Որքան լավ մարդ ես, այնքան ընկեր ունես:

21.

ա) Կյանքի ընթացքում տեղի ունեցած վատ իրադարձությունները հավասարակշռվում են լավ իրողություններով:

բ) Դժբախտությունների մեծ մասը կարողությունների, տգիտության, ծուլության կամ դրանց միասնության արդյունք է:

22.

ա) Գործադրելով մեծ ջանքեր՝ մենք կարող ենք վերացնել քաղաքական կոռուպցիան:

բ) Մարդկանց համար դժվար է վերահսկել այն, ինչ անում են քաղաքական գործիչներն իրենց գրասենյակներում:

23.

ա) Երբեմն ես չեմ հասկանում, թե ուսուցիչներն ինչպես են որոշում այն գնահատականը, որը նշանակում են:

բ) Իմ սովորածի և ուսուցչի գնահատականի միջև ուղիղ կապ կա:

24.

ա) Լավ առաջնորդը (լիդերը) մարդկանցից ակնկալում է, որ իր փոխարեն որոշեն, թե ինչ է հարկավոր անել:

բ) Լավ առաջնորդը ինքն է բոլորին հասկանալի դարձնում, թե ինչ աշխատանքներ է հարկավոր կատարել:

25.

ա) Շատ անգամ ես կարծում եմ, որ քիչ ազդեցություն ունեմ ինձ հետ կատարվածի վրա:

բ) Ինձ համար անհնար է հավատալ այն բանին, որ պատահականությունը կամ բախտը կարևոր դեր է խաղում իմ կյանքում:

26.

ա) Մարդիկ միայնակ են, որովհետև չեն փորձում բարեհամբույր լինել:

բ) Անիմաստ է մարդկնաց գոհացնելու փորձեր անել. եթե սիրեն, կսիրեն:

27.

ա) Այնքան էլ անհրաժեշտություն չկա ավագ դպրոցում մարմնամարզությանը ուշադրություն դարձնել:

բ) Թիմային սպորտը բնավորություն կերտելու համար լավագույն միջոց է:

28.

ա) Ինչ կատարվում է ինձ հետ, իմ գործն է:

բ) Երբեմն ես կարծում եմ, որ չունեմ բավականաչափ հսկողություն այն բանին, թե ինչ ուղով է կյանքս ընթանում:

29.

ա) Շատ անգամ ես չեմ հասկանում քաղաքական գործիչների գործելաոճը:

բ) Ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում վատ կառավարման համար ի վերջո պատասխանատու է հասարակությունը:

Թեստի բանալի.

Էքստեռնալություն 2ա, 3բ, 4բ, 5բ, 6ա, 7ա, 9ա, 10բ, 11բ, 12բ, 13բ, 15բ, 16ա, 17ա, 18ա, 20ա, 21ա, 22բ, 23ա, 25ա, 26բ, 28բ, 29ա:

Ինտեռնալություն. 2բ, 3ա, 4ա, 5ա, 6բ, 7բ, 9բ, 10ա, 11ա, 12ա, 13ա, 15ա, 16բ, 17բ, 18բ, 20բ, 21բ, 22ա, 23բ, 25բ, 26ա, 28ա, 29բ:

Գումարային բալն էքստեռնալության և ինտեռնալության համար կազմում է 23, քանի որ հարցերից վեցը ֆոնային են: Որքան մեծ է գումարային բալը, այնքան լոկուս հսկման ուղղվածությունը հարաբերականորեն բարձր է մյուսի հանդեպ:

Թեստային արդյունքների մեկնաբանություն.

Գործնականում լոկուս հսկման հոգեդիագնոստիկան վերաբերում է կոգնիտիվ ոճին, որը դրսևորվում է ինչպես ուսումնական, այնպես էլ մասնագիտական ոլորտներում: Քանի որ հոգեկանի կոգնիտիվ բաղադրիչները առկա են նրա բոլոր դրսևորվորումներում, ապա լոկուս հսկման պատկերացումները տարածվում են անձի բնութագրումների վրա՝ իր գործունեության մեջ:

Էքստեռնալներին բնորոշ է արտաքին խթանիչներով պայմանավորված վարքը, նրանք զնահատում են իրավիճակը որպես արտաքին ցանկալի նախապայման, որում հաջողության հասնելու դեպքում ներկայացվում են ընդունակությունները: Այս մարդկանց տեսանկյունից պատասխանատվությունը կարծես ընկնում է իրավիճակի՝ որպես արտաքին խթանիչի վրա: Էքստեռնալները համոզված են, որ իրենց անհաջողությունները ձախորդությունների, պատահականությունների, այլ մարդկանց բացասական ազդեցությունների արդյունք են: Նրանց համար շատ անհրաժեշտ են խրախուսանքը, գովաբանումը և աջակցումը, հակառակ

դեպքում նրանք ուսման կամ աշխատանքային գործունեության մեջ արդյունքի չեն հասնի: Մակայն էքստենսիվներից առանձնակի արձագանք պետք չէ սպասել:

Ինտենսիվները իրավիճակին վերաբերվում են այլ տեսանկյունից: Նրանք համարում են, որ մարդու հաջողություններն ու անհաջողություններն ավելի շատ պայմանավորված են կոմպետենտությամբ, նպատակաւացությամբ, ընդունակությունների մակարդակով, և որ դրանք նպատակաուղղված գործունեության և ինքնուրույն գործելու արդյունք են: Ինտենսիվներն ունեն առավել լայն ժամանակային հեռանկարներ, որոնք ներառում են ինչպես ապագայի, այնպես էլ անցյալի բազմաթիվ իրադարձություններ:

Աղբյուրը՝ *Локус контроля*, Елисеев О. П., Практикум по психологии личности – СПб., 2003. С. 413-417:



ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԵՎ ԱՆՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՐՑԱՐԱՆ

***Հրահանգ.** Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր հարց, պատասխանեք ԱՅՈ կամ ՈՉ՝ նշելով Ձեր պատասխանը հարցի վերջում առանձնացված պոնակներում: Աշխատեք արագ և մի՛ ծախսեք շատ ժամանակ որևէ հարցի վրա, քանի որ այս հարցարանը չունի ճիշտ և սխալ պատասխաններ, և արժեքավորը մտքում ծագած առաջին պատասխանն է, որը կարող է մոտ լինել իրականին: Այժմ սկսեք աշխատել՝ հիշելով, որ շատ կարևոր է անկեղծ լինելը:*

N	ՊՆԴՈՒՄՆԵՐ	ԱՅՈ	ՈՉ
1.	Ընդգրկվելով աշխատանքի մեջ՝ հաջողության հույս եմ ունենում		
2.	Գործունեության մեջ ակտիվ եմ		
3.	Հակված եմ նախաձեռնություն ցուցաբերելու		
4.	Պատասխանատու առաջադրանքների կատարման ժամանակ աշխատում եմ հրաժարվելու հնարավոր պատճառներ գտնել		
5.	Հաճախ ընտրում եմ ծայրահեղություններ՝ կա՛մ չափազանց հեշտ առաջադրանքներ, կա՛մ էլ՝ շատ բարդեր		
6.	Խոչընդոտների հանդիպելիս, որպես կանոն, չեմ նահանջում, այլ փնտրում եմ դրանց հաղթահարման միջոցները		
7.	Հաջողությունների կամ անհաջողությունների պարագայում հակված եմ գերազնահատել սեփական ձեռքբերումներս		
8.	Գործունեության արդյունավետությունը հիմնականում կախված է իմ նպատակաուղղվածությունից, այլ ոչ թե արտաքին հսկումից		
9.	Իմ գործունեության արդյունավետությունը նվազում է, երբ դժվար առաջադրանքների կատարման ժամանա-		

	կը սահմանափակվում է		
10.	Նպատակիս հասնելու համար հակված եմ համառո- թյուն ցուցաբերելու		
11.	Հակված եմ պլանավորելու իմ հեռավոր ապագան		
12.	Եթե ռիսկի եմ դիմում, ապա այն գիտակցված է		
13.	Նպատակի հասնելիս այնքան էլ համառ չեմ, հատկա- պես եթե բացակայում է արտաքին ազդեցությունը		
14.	Նախընտրում եմ իմ առջև դնել միջին բարդության, նույնիսկ ավելի բարդ նպատակներ		
15.	Առաջադրանքի կատարման ընթացքում առաջացած անհաջողությունը նվազեցնում է տրամադրվածու- թյունը		
16.	Հաջողությունների կամ անհաջողությունների պարա- գայում հակված եմ գերազնահատելու սեփական ան- հաջողություններս		
17.	Նախընտրում եմ պլանավորել մոտ ապագան		
18.	Սահմանափակ ժամանակի պայմաններում աշխա- տելիս իմ գործունեության արդյունավետությունը ա- ճում է, եթե նույնիսկ առաջադրանքները միջին դժվա- րության են		
19.	Անհաջողության պարագայում ես, որպես կանոն, չեմ հրաժարվում առաջադրված նպատակից		
20.	Եթե ինքս եմ ընտրել առաջադրանքը, ապա անհաջո- ղության պարագայում տրամադրվածությունս միայն աճում է		

Թեստի բանալի.

1, 2, 3, 6, 8, 10, 11, 12, 14, 16, 18, 19, 20 հարցերի համար տրվում է 1 բալ, եթե պատասխանը ԱՅՈ է:

4, 5, 7, 9, 13, 15, 17 հարցերի համար տրվում է 1 բալ, եթե պատասխանը ՈՉ է:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.

➤ Եթե հարցվողը հավաքել է 1-7 բալ, ապա մոտիվացիոն բևեռն ուղղված է անհաջողությունից խուսափելուն:

➤ Եթե հարցվողը հավաքել է 14-20 բալ, ապա մոտիվացիոն բևեռն ուղղված է հաջողության հուսադրմանը:

➤ Եթե հարցվողը հավաքել է 8-13 բալ, ապա մոտիվացիոն հստակ ուղղվածություն չի դրսևորվել, ընդ որում, 8-9 բալի դեպքում ավելի շատ հակվածությունը վերաբերում է անհաջողությունից խուսափելուն, իսկ 12-13 բալի դեպքում՝ հաջողության մոտիվացիային:

ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՎԱՑԻԱ. Բարձր բալերի դեպքում կարող ենք մեկնաբանել, որ մարդը, գործը սկսելով, ձգտում, ակնկալում է ինչ-որ դրական, կոնստրուկտիվ նվաճում: Հիմնականում նա ակտիվությունն ուղղում է հուսադրված հաջողության և ունի արտահայտված նվաճման պահանջունք: Նման մարդիկ վստահում են սեփական ուժերին, պատասխանատու են, նախաձեռնող և ակտիվ, ցուցաբերում են համառություն և նպատակասլացություն՝ հաջողության հասնելու համար:

ԽՈՒՍԱՓՈՒՄ ԱՆՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ. ցածր բալերի դեպքում կարող ենք մեկնաբանել, որ մարդը հակված է փախուստի հնարավոր արգելքներից, դժվարություններից, անհաջողություններից: Նման մարդիկ ունեն ավելի շատ բացասական սպասումներ և մտածում են ինչ-որ թվացյալ անհաջողությունների, քան հնարավոր հաջողության հասնելու հնարավորությունների մասին: Նրանք ունեն բարձր տազնապայնություն, ընդգծված անվստահություն սեփական ուժերի հանդեպ, խուսափում են պատասխանատվությունից, իսկ պարտադիր գերպատասխանատու առաջադրանքների կատարման դեպքում կարող են դրսևորել իրավիճակային տազնապի շատ բարձր ցուցանիշ: Այնուամենայնիվ, այս ամենը կարող են համադրվել գործի հանդեպ բավական պատասխանատու վերաբերմունքով:

29. Ես կարծում եմ, որ ապագա սերունդների խնամքը թույլ կտա ինձ դառնալ այնպիսի մարդ, ինչպիսին ես ուզում եմ լինել					
30. Ես ենթադրում եմ, որ ինքնագարգացմամբ (իմ ընդունակությունները, կարողությունները, հմտությունները, աշխատանքը բնավորության հետ) կարող եմ դառնալ այն					

մարդը, ով ուզում եմ լինել					
31. Ես չունեմ որոշակի պատկերացում այն մասին, թե ինչը կարող է ինձ օգնել					
32. Ես կցանկանայի զբաղվել բարեգործությամբ					
33. Ես կցանկանայի ներդրում ունենալ հասարակության մեջ՝ օգնելով այլ մարդկանց					
34. Ես կցանկանայի մեծացնել երջանիկ երեխաներ					
35. Ես առաջնահերթ կցանկանայի օգնել իմ ընտանիքին, ինչը կօգներ ողջ հասարակությանը					

Գնահատումն իրականացվում է նորմատիվային սանդղակի որոշմամբ: Յուրաքայուր բաժնի համար կարելի է հաշվարկել հնարավոր մեծագույն արժեքը և դրա հետ համադրել այն, ինչ ստացվում է գնահատման արդյունքում:

3-24 % (1, 2, 3 ստե՛ն) – ցածր մակարդակ. արժեքային վերաբերմունքն ունի սահմանափակ և ընտրողական բնույթ՝ կյանքի գործունեության նշանակալի ոլորտների հետ կապված:

25-82 % (4, 5, 6 ստե՛ն) – միջին մակարդակ. արժեքային վերաբերմունքն ունի հավասարակշիռ բնույթ, որը համապատասխանում է սոցիալական միջավայրի սպասելիքներին:

83-99 % (7, 8, 9, 10 ստե՛ն) – բարձր մակարդակ. արժեքային վերաբերմունքն ունի աճելու հավանականություն՝ ուղղված արժեքիմաստային վերաբերմունքին և սահմանների ընդլայնմանը կյանքի ու գործունեության նշանակալի ոլորտների յուրացման ընթացքում:



ՄԱՍՆԱԳԵՏԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

Հրահանգ. Ստորև ներկայացված են իրավիճակներ և համապատասխան պնդումներ: Ընտրեք Ձեզ համար առավել բնորոշ տարբերակը:

1. Ինչպե՞ս կվարվեք, եթե պաշտոնական առաջընթացի համար Ձեզ որոշ գիտելիքներ չբավարարեն, իսկ այդ գիտելիքների ձեռքբերումը Ձեզանից պահանջի շատ ժամանակ, եռանդ, հոգեբանական և ֆինանսական ռեսուրսներ:

- a) կզերադասեք ամեն ինչ անել, որ լրացնեք գիտելիքների պակասը
- b) ամեն դեպքում գուցե և հրաժարվեք այդ պաշտոնից, քանի որ բացի աշխատելը Ձեզ պետք է կյանքը վայելել
- c) պատրաստ կլինեք ռիսկի դիմել և ամեն դեպքում ստանձնել պաշտոնը առանց այդ գիտելիքների՝ աշխատանքի ընթացքում դրանք ձեռք բերելու հույսով

2. Եթե Դուք ինչ-որ գործ եք ստանձնում, սակայն իրականացնելիս հանդիպում եք չնախատեսված բարդությունների, որոնք հաղթահարել հնարավոր է միայն որոշակի կորուստների դեպքում, ինչպե՞ս եք վարվում.

- a) երկար մտածելուց հետո հրաժարվում եք
- b) ամեն դեպքում ստանձնած գործը կհասցնեք ավարտին
- c) գործը կանեք, սակայն հենց բախվեք լուրջ կորուստների, կդադարեցնեք այն

3. Եթե Ձեր կյանքում հանդիպում եք իրավիճակների, երբ պետք է ընտրություն կատարեք, ինչպե՞ս եք վարվում.

- a) խելամիտ որոշում եք կայացնում և գործում ըստ այդ որոշման
- b) թողնում եք ճակատագրին, հետո հարմարվում եք այդ ընտրությանը (ինչ որ պիտի լինի, չի կարող չլինել)
- c) առաջնորդվում եք հեղինակավոր մարդկանց խորհրդով

4. Ձեր կյանքում տեղի ունեցող երևույթները վերլուծելիս սովորաբար ինչպե՞ս եք վարվում.

- a) հենվում էք պատճառահետևանքային կապերի վրա և նկատում էք հակասությունները
- b) երևույթներն ընդունում էք որպես ճակատագիր և չեք ներթափանցում դրանց մեջ
- c) երևույթները վերլուծում էք, բայց դժվարանում էք գտնել պատճառները

5. Երբ հայտնվում էք այնպիսի իրավիճակում, ուր Ձեզ պատում են անհաջողությունները, ապա՝

- a) ոչ մի կերպ չեք կարողանում հաշտվել իրավիճակի հետ և երկար ժամանակ է հարկավոր, որ դուրս գաք այդ վիճակից
- b) անհաջողությունն ընդունում էք որպես Ձեր կյանքի մի մասը և անտրտուն լուծում էք խնդիրները որքանով կարողանում էք
- c) ընդունում էք այդ անհաջողությունը, բայց շարունակում էք ապրել այնպես, որ էլ երբեք չհայտնվեք նման իրավիճակում

6. Եթե Ձեր ճանապարհին հանդիպում են խոչընդոտներ, որոնք հաղթահարելու համար Դուք այնքան էլ պատրաստ չեք, ապա՝

- a) դրանք շրջանցում էք, եթե նույնիսկ ինչ-որ բան կորցնում էք՝ համարելով, որ կգնաք այնքան, որքան կարող էք
- b) ձգտում էք հաղթահարել դրանք, որքան էլ որ դժվար լինի
- c) հրաժարվում էք այդ ճանապարհից՝ հաշտվելով, որ դա Ձեզ համար չէ, և որ Դուք դեռ պատրաստ չեք

7. Եթե Ձեր աշխատանքում հանդիպում էք անսպասելի բարդությունների, ինչպե՞ս էք վարվում.

- a) բարկանում էք և որոշ ժամանակ հետո շարունակում էք աշխատանքը
- b) հունից դուրս եք գալիս և նույնիսկ մտածում էք հրաժարվել այդ գործը կատարելուց (բայց ոչ ձեր աշխատանքից), քանի որ այն Ձեզանից շատ ռեսուրսներ է խլում
- c) արագ հարմարվում էք իրավիճակին և շարունակում աշխատանքը

8. Եթե Ձեր կյանքում որոշում էք կայացնում, սակայն դա այնքան էլ դուր չի գալիս Ձեզ շրջապատող անձանց, ապա՝

- a) վերանայում էք Ձեր որոշումը և գտնում օպտիմալ տարբերակ

b) չէք փոխում Ձեր որոշումը

c) համարում եք, որ մարդիկ Ձեզանից միշտ պետք է գոհ լինեն, և փոխում եք Ձեր որոշումը

9. Երբ հայտնվում եք Ձեզ համար ոչ ընդունելի իրավիճակներում, ապա՝

a) տարվում եք այլ գործերով

b) իրավիճակը հարմարեցնում եք Ձեզ, որքան հնարավոր է

c) հոգեբանորեն տրամադրում եք Ձեզ և ընդունում եք իրավիճակն այնպիսին, ինչպիսին, որ կա

10. Ձեզ հանդիպած կարևոր իրադարձությունների ընթացքում ինչպե՞ս եք վարվում.

a) դուք լավ հասկանում եք, թե ինչ է կատարվում Ձեր ներաշխարհում, և պատրաստ եք ընդունել այն խաղաղությամբ

b) դուք ժամանակի ընթացքում միայն կարող եք հասկանալ Ձեզ, բայց երբեմն դա արդեն ուշ է լինում

c) դուք հասկանում եք, թե իրավիճակը ինչ հույզեր է Ձեզ բերում, սակայն դժվարանում եք դրանց հետ հանդիպել

11. Եթե Ձեր ժամանակը սուղ է, բայց Դուք ունեք շատ գործեր, ապա՝

a) սկսում եք այն գործերից, որոնք հրատապ են և ավելի կարևոր

b) սկսում եք կատարել դրանք հերթով, առանց մտածելու, թե երբ կավարտեք

c) հրաժարվում եք այդ գործերի որոշ մասից

12. Եթե դուք պայմանավորվում եք ինչ-որ բան անել, սակայն ժամանակը Ձեզ չի բավարարում, և ընթացքում գործը բարդանում է, ինչպե՞ս եք վարվում՝

a) ջանում եք կատարել պայմանավորվածությունը՝ հետաձգելով Ձեր մյուս գործերը

b) այլ գործերը չէք հետաձգում և կարող եք հրաժարվել այդ գործը շարունակելուց

c) ջանում եք հաղթահարել բարդությունները, բայց ծայրահեղ դեպքում կփոխեք պայմանավորվածությունը

13. Եթե Ձեր կյանքում անհրաժեշտ է լինում կտրուկ փոփոխությունների դիմել, ապա՝

a) գնում էք փոփոխություններին ընդառաջ՝ առանց հետ նայելու

b) երկար մտածում էք և փոփոխությունների դիմում միայն ծայրահեղ դեպքում

c) խուսափում էք փոփոխությունների ցանկացած տարբերակից

14. Երբ Ձեր կյանքում ունենում էք մեծ ցանկություններ և ձգտում էք իրագործել դրանք, ինչպե՞ս էք վարվում.

a) հաճախ լավ չէք պատկերացնում Ձեր հնարավորությունները, բայց դա Ձեզ չի խանգարում ցանկություններ ունենալ

b) համարում էք, որ անհնարին ոչինչ չկա, և գնում էք առաջ

c) վերանայում էք Ձեր ցանկությունները և հնարավորությունները

15. Ձեր հաջողությունները բավականություն են պատճառում այն դեպքում, երբ՝

a) դրանք իրագործվել են ցանկություններին համապատասխան

b) Դուք չէք էլ մտածել այդ մասին և հանկարծ ստացել էք այն

c) Դուք փորձել էք Ձեր կարողությունները, և այն ստացվել է

16. Եթե Դուք նոր գործ էք սկսում, ապա գերադասում էք.

a) վստահել ճակատագրին և անել այն, ինչ տվյալ պահին կստացվի

b) հստակ պլանավորել, այնուհետև գործել

c) խորհրդակցել և առաջ գնալ պահի թելադրանքով

17. Եթե Ձեր աշխատանքում հանդիպում են իրավիճակներ, որտեղ բախվում են Ձեր անձնական և գործնական շահերը, ապա՝

a) գործնականը միշտ գերադասում էք անձնականից

b) երբեք չէք հրաժարվում անձնական շահերից, քանի որ գործնականը միշտ կարելի է շտկել

c) գործնականը կարևորում էք, բայց գործում էք պահի թելադրանքով:

18. Եթե Ձեր կյանքում լինի այնպիսի իրավիճակ, որ Դուք ստիպված լինեք ընտրություն կատարել պարտականության և զգացմունքների միջև, ապա՝

a) զգացմունքներին հետևելով՝ կստանձնեք նոր պարտականություններ

b) զգացմունքներից հրաժարվելով՝ հավատարիմ կմնաք Ձեր պարտականություններին

c) կվերահսկեք Ձեր զգացմունքները, որպեսզի երբեք չկանգնեք պարտականությունների վերանայման առաջ

19. Որպեսզի կյանքում հաջողության հասնելու դասեր քաղեք՝

a) ուսումնասիրում եք հաջողակ մարդկանց պատմությունները

b) վերլուծում եք Ձեր անցած կյանքը և զարգացնում եք Ձեր հմտությունները ժամանակին համապատասխան

c) դասեր եք քաղում սեփական սխալներից, վերլուծում եք սեփական փորձը

20. Երբ կյանքը Ձեր նկատմամբ բարեհաճ է գտնվում և տալիս է լայն ընտրության հնարավորություն, ապա Դուք՝

a) երկմտանքի առաջ չեք կանգնում, քանի որ միշտ գիտեք, թե ինչ եք ուզում

b) վերցնում եք կյանքից այն, ինչ կարող եք

c) փորձում եք ընտրությանը գիտակցաբար մոտենալ, հասկանալ, թե որն է Ձեզ համար ավելի կարևոր

21. Եթե Ձեր կյանքում հանդիպեն իրավիճակներ, երբ պետք է ընտրություն կատարել, ապա Դուք՝

a) կառաջնորդվեք Ձեր սկզբունքներով

b) կկատարեք ընտրությունը իրավիճակի թելադրանքով

c) կհետևեք հեղինակավոր մարդկանց խորհուրդներին, փորձին

22. Եթե Ձեր աշխատանքում հանդիպում են իրավիճակներ, երբ Դուք պետք է շահեք գործընկերոջ վստահությունը, ինչպե՞ս եք վարվում.

a) անկախ ամեն ինչից՝ խոսում եք այն մասին, ինչում ինքներդ վստահ եք

b) անում եք ամեն ինչ, որպեսզի Ձեզ վստահեն, իսկ հետո գործում եք ըստ իրավիճակի

c) Ձեր պոտենցիալ հնարավորությունները փաստացի ներկայացնում եք, հետո դրանք փորձում եք իրագործել

23. Երբ նպատակին հասնելու ճանապարհին հանդիպում եք այնպիսի իրավիճակների, որոնք պահանջում են հոգեկան ու ֆիզիկական մեծ ջանքեր, ինչպե՞ս եք վարվում.

- a) գերադասում էք հրաժարվել այդ նպատակից և հանգիստ ապրել
- b) որոշում էք ներդնել այդ ջանքերը և հասնել նպատակին
- c) փորձում էք խնայելով Ձեր ռեսուրսները հասնել նպատակին կիսով չափ

24. Եթե Ձեր կյանքում հայտնվեք այնպիսի իրավիճակում, որ կորցնեք Ձեր ունեցած դիրքը, ապա՝

- a) իրավիճակը կընդունեք որպես բնականոն կյանքի ընթացք և սահուն կանցնեք Ձեր կյանքի հաջորդ փուլին
- b) կմտածեք որ Ձեր դիրքով չի որոշվում Ձեր հեղինակությունը, Դուք, միևնույնն է, ոչինչ չեք կորցնում
- c) չեք հաշտվի կորստի հետ և ամեն կերպ կպայքարեք այն հետ բերելու համար

25. Ձեր մասնագիտական ոլորտում ավելի բարձր դիրքի հասնելու համար ինչպիսի՞ն կլինեն Ձեր նախընտրությունները՝

- a) կառաջնորդվեք ցանկություններով՝ ձգտելով զարգացնել Ձեր կարողությունները
- b) կգործեք Ձեր կարողությունների սահմանում և նույնիսկ կանտեսեք Ձեր ցանկությունները
- c) կհամարեք, որ հստակ տարբերություն չկա Ձեր կարողությունների և ցանկությունների միջև, կարևորը հնարավորությունն է

26. Եթե Ձեր կյանքում ստեղծվի այնպիսի իրավիճակ, որ ստիպված լինեք փոխել Ձեր համոզմունքները, որպեսզի հարմարվեք իրավիճակին, ապա Դուք՝

- a) կգերադասեք կայուն մնալ Ձեր համոզմունքներում և կրել կյանքի բարդությունները
- b) կվերանայեք Ձեր համոզմունքները, քանի որ կյանքն է այդպես թելադրում
- c) կհարմարվեք իրավիճակին՝ ինքներդ Ձեզ հետ կոխիվ տալով

27. Եթե Ձեր մտերիմ ընկերը այնպիսի արարք կատարի, որը դատապարտվի հասարակության կողմից, սակայն այն Ձեր հանդեպ չլինի, ապա Դուք՝

- a) կմտածեք, որ անկախ ամեն ինչից՝ նա Ձեր ընկերն է, և չեք փոխի վերաբերմունքը
- b) նույնիսկ կմտածեք, որ չարժե նրան ընկեր համարել, համաձայն, ինչպես ասում են՝ «ասա՛՛ ով է ընկերդ, ասեմ՛ ով ես դու» արտահայտության
- c) կփորձեք օգնել Ձեր ընկերոջը, բայց և հասարակությանը դեմ դուրս չեք գա

28. Եթե հայտնվեք այնպիսի իրավիճակում, որում, ըստ Ձեզ՝ «բարկությունը սահման չունի», ապա Դուք՝

- a) կբարկանաք ամբողջ ուժով
- b) ոչինչ չեք անի, որպեսզի ոչ ոք չնկատի Ձեր բարկությունը
- c) կխոսեք Ձեզ բարկացնող իրավիճակի մասին և հանգիստ կարտահայտեք Ձեր դժգոհությունը

29. Եթե դուք հանդիպում եք այնպիսի իրավիճակների, որոնք Ձեզ մեծ հուզական լարվածություն են պատճառում, ապա Դուք՝

- a) ձգտում եք այդ իրավիճակից հնարավորինս շուտ դուրս գալ և անտեսել այն
- b) փորձում եք հասկանալ, թե ինչն է Ձեր լարվածության պատճառը և մտորելով այդ մասին այլ կերպ եք նայում իրավիճակին
- c) փորձում եք գտնել նրան, ով մեղավոր է Ձեր այդ վիճակի համար, և պարզաբանել նրա հետ

30. Եթե Ձեր կյանքում հանդիպեք այնպիսի իրավիճակի, որտեղ ընտրություն պետք է կատարել Ձեր մասնագիտական պարտականությունների և հարազատական կապերի միջև, ինչպե՞ս կվարվեք՝

- a) կգերադասեք մասնագիտական պարտականությունները
- b) անկախ մասնագիտությունից՝ հարազատ կմնաք Ձեր մտերմական կապերին
- c) կձգտեք համոզել հարազատներին, որ Ձեզ նման իրավիճակի մեջ չդնեն

31. Եթե Ձեր կյանքում հանդիպեք այնպիսի իրավիճակի, որը Ձեզ ստիպի մտորել անցած կյանքի մասին, ապա կմտածեք, որ՝

- a) կյանքի ընթացքում Ձեզ մոտ ձևավորվել են հստակ կանոններ, որոնք չպետք է խախտել

b) իրավիճակն է թելադրում կյանքի կանոնները, և չկան հստակ սկզբունքներ

c) Ձեր կյանքի կանոնները կարող եք խախտել միայն բացառիկ դեպքերում

32. Եթե Դուք որոշում եք կայացրել, սակայն իրագործելիս հանդիպում եք տարբեր խոչընդոտների, որոնք բարդացնում են Ձեր կյանքը, ինչպե՞ս կվարվեք՝

a) կվերանայեք Ձեր որոշումը

b) կմտածեք հրաժարվելու մասին

c) կիրագործեք Ձեր որոշումը՝ անտեսելով բարդությունները

33. Եթե Ձեզ անսպասելի անհիմն մեղադրեն որևէ հարցում, ինչպե՞ս կվարվեք՝

a) կընկճվեք և չեք կարողանա միանգամից պաշտպանել Ձեզ

b) միանգամից կվրդովվեք և կպաշտպանեք Ձեզ, ինչպես կարող եք

c) կհամարեք, որ դա սխալմունք է, և հանգիստ կբացատրեք իրավիճակը

34. Եթե Ձեր կյանքում հայտնվեք այնպիսի իրավիճակում, որ ստիպված լինեք հրաժարվել Ձեր կյանքի որևէ կարևոր մասից (աշխատանք, ընտանիք, ընկերներ և այլն), ինչպե՞ս կվարվեք՝

a) չեք կարող պատկերացնել Ձեր կյանքն առանց այդ կարևոր մասի

b) կտխրեք, բայց Ձեր կյանքի մյուս կարևոր մասերի վրա հենվելով՝ կշարժվեք առաջ

c) կշարունակեք ապրել, սակայն միշտ ցավոտ հիշողություններ կլինեն կորցրածի հետ կապված

35. Եթե հայտնվեք անորոշ իրավիճակում, որտեղ հնարավոր ելքերը (դրական և բացասական) հավասարապես լինեն, ինչպե՞ս կվարվեք՝

a) ամեն դեպքում կսպասեք դրական ելքի

b) կմտածեք, որ Դուք պատրաստ եք ընդունելու երկու ելքերը հավասարապես

c) կսպասեք դրական ելքի, բայց և այնպես կտրամադրվեք բացասականին ևս

36. Երբ ինձ մոտ ինչ-որ բան հարթ է ստացվում.

*a) նշանակություն չեմ տալիս դրան, քանի որ արդյունքը կան-
խատեսելի էր*

b) կարևորում եմ դա ու երբեմն էլ զարմանում եմ

c) փորձում եմ վերլուծել և գտնել պատճառները

Բանալի.

1	Նպատակասլացություն	1, 6, 11, 16, 21, 26
2	Գործնական հուսալիություն	2, 7, 12, 17, 22, 27
3	Վճռականություն	3, 8, 13, 18, 23, 30
4	Իրատեսություն	4, 9, 14, 19, 24, 31
5	Ինքնաճանաչում	5, 10, 15, 20, 25, 32
6	Հուզական հավասարակշռվածություն	28, 29, 33, 34, 35, 36

խնդիր տարբերակ	a	b	c
1	2	0	1
2	1	2	0
3	2	0	1
4	2	0	1
5	0	2	1
6	1	2	0
7	1	0	2
8	1	2	0
9	0	1	2
10	2	0	1
11	2	0	1
12	2	0	1
13	2	1	0
14	0	1	2
15	2	0	1
16	0	2	1
17	2	0	1
18	2	0	1
19	0	2	1
20	2	0	1
21	2	1	0
22	2	0	1
23	0	2	1
24	2	0	1
25	2	1	0
26	2	0	1
27	2	0	1
28	0	1	2
29	1	2	0
30	2	0	1
31	2	0	1
32	1	0	2
33	0	1	2
34	0	2	1
35	1	0	2
36	2	0	1

Յուրաքանչյուր գործոնի առավելագույն գումարային միավորը՝ 12

Մինչև 3 միավոր՝ ցածր

4-8 միավոր՝ միջին

9 և ավելի՝ բարձր

Գումարային միավորը՝

21-ից ցածրը՝ շատ ցածր

22-29 ցածր

30-37 միջինի ստորին սահման

38-42 միջին

43-50 միջինի վերին սահման

51-58 բարձր

59-ից բարձր՝ շատ բարձր

Գործոնների նկարագրությունը

Նպատակասլացությունը՝ որպես անձնային հասունության բնութագրիչ, գիտակցված հետևողական և կայուն կողմորոշումն է դեպի այն արդյունքը, որին ուղղում է իր ջանքերը: Նպատակասլացությունը առաջին հերթին խնդրի առաջադրման կարողությունն է կամ նպատակադրումը, այնուհետև արդյունքին հասնելու ճանապարհի պլանավորումը և այդ ճանապարհի խոչընդոտների վերացումը: Նպատակասլացությունը ապահովվում է անձի հուզական և կամային հատկանիշների շնորհիվ: Նպատակների առկայությունը կապված է անձի կյանքի իմաստավորման հետ: Կայուն նպատակների առկայության դեպքում անձը իր կյանքը համարում է իմաստավորված, իսկ դրանց հասնելու պարագայում՝ կյանքով բավարարված: Նպատակասլացությունը կյանքի ընթացքում ձեռք բերվող հատկանիշ է և բնութագրում է անձի հոգեբանական հասունությունը:

Գործնական հուսալիությունը ևս անձի հոգեբանական հասունության կարևոր բնութագրիչներից մեկն է: Այն առաջին հերթին արտահայտում է անձի պատասխանատվության զգացումը: Գործնական հուսալիությունը սոցիալական միջավայրում անձի իր նկատմամբ ապահովության զգացման, վստահության ձևավորումն ու պահպանումն է: Գործնական հուսալիությունը սերտորեն կապված է այն բանի հետ, թե անձը իր արարքներում, գործնական փոխհարաբերություններում որքանով է

դրսևորում կայունություն և որքանով է ի գորու պատասխան տալու իր վարքի համար: Գործնական հուսալիությունը ենթադրում է սեփական ռեսուրսների հստակ գիտակցում և այդ ռեսուրսները տնօրինելու կարողություն: Այն անմիջականորեն ազդում է անձի՝ խոստումներ տալու և դրանք կատարելու վրա:

Վճռականությունն արտահայտվում է անձի ինքնուրույն, պատասխանատու որոշումների կայացման և իրագործման կարողության մեջ: Այս բնութագրիչը ևս կապված է անձի հուզական և կամային հատկանիշների հետ, սակայն այն ձեռք է բերվում կյանքի ընթացքում: Վճռականությունը անձի գիտակցված ընտրությունն է, ինչպես նաև հետևողական գործելու ունակությունը: Այս հատկությունը ևս զարգանում է սոցիալական փորձի շնորհիվ, այն պահանջում է ներքին և արտաքին խոչընդոտների հաղթահարման կարողություն:

Իրատեսությունը՝ որպես անձի հոգեբանական հասունության բնութագրիչ: Իրատեսություն կենսագործունեության մեջ անձի սեփական ռեսուրսների և շրջապատող աշխարհի երևույթների իրական ընկալումն է: Այն ենթադրում է քննադատական մտածողության առկայություն: Որքան որ իրականության ընկալման նկատմամբ շատ են դրսևորվում պաշտպանական մեխանիզմները, այնքան անձը հեռանում է իրականությունից: Կյանքի դժվար իրավիճակների նկատմամբ անձի դիմակայման կարողությունը թույլ է տալիս կյանքը ընկալել այնպես, ինչպես որ կա:

Ինքնաճանաչումը հասուն անձի կարևոր բնութագրիչ է: Անձը ինքնաճանաչման հասնում է կյանքի ընթացքում սեփական վարքի և ապրումների վերլուծման շնորհիվ: Ինքնաճանաչումը սեփական հոգեկանի հետ ներդաշնակության մեջ ապրելու կարևոր նախապայման է: Այն սեփական հույզերի, վարքի, մտքերի կենսաբանական և սոցիալական էության ճանաչումն է, որը սկսվում է դեռևս վաղ տարիքից և շարունակվում է մինչև կյանքի վերջը: Սեփական հոգեկան աշխարհը հասկանալը և անձը ընդունելն է: Ինքնաճանաչումը թույլ է տալիս անձին ինքնաիրականանալ, ինքնիրացվել: Համակցվելով հասունության մյուս բնութագրիչների հետ՝ այն դառնում է անձի ողջ ներուժի օգտագործման և հաջողության հասնելու գրավականը:

Հուզական հավասարակշռվածությունը հասուն անձի բնութագրիչներից մեկն է: Այն արտահայտվում է հուզական լարվածություն ենթադրող

իրավիճակներում անձի ապրումներում, վարքում և մտքերում: Հուզական հավասարակշռվածությունը առաջին հերթին արտացոլվում է անձի ներաշխարհում, այնուհետև ունենում է վարքային դրսևորում: Միայն վարքային հավասարակշռվածությունը, որը հակասում է անձի ապրումներին և մտքերին, չի կարող ապահովել հուզական հավասարակշռվածությունը: Այս բնութագրիչը սերտորեն կապված է անձի նյարդային համակարգի տիպի հետ, սակայն այն կարող է փոխհատուցվել այն դեպքում, եթե անձը ճանաչում է իր հույզերը, և կյանքի ընթացքում զարգացնում է այդ հույզերի հետ գործ ունենալու իր կարողությունը: Հուզական հավասարակշռվածության ձգտումը նպաստում է հուզական հասունությանը, հույզի գիտակցմանն ու ընդունմանը, ինչն էլ կարևոր հիմնաքար է դառնում հասուն անձի, առավել ևս՝ մասնագետի արդյունավետ գործունեության համար:

Հարցարանի ստեղծման, մշակման և տեղայնացման ընթացակարգի նկարագրությունը

Հարցարանի բովանդակությունը անցել է տեսական և փորձագիտական վալիդիզացիա, այնուհետև՝ տեղայնացվել: Նաև յուրաքանչյուր առաջադրանքի համար հաշվարկվել են դիսկրիմինատիվության գործակիցներ, որոնց թույլ ցուցանիշների գրանցման արդյունքում հարցերը և պնդումները բազմիցս ենթարկվել են բովանդակային փոփոխության և նորից գնահատվել մի քանի տասնյակ փորձարկվողների կողմից: Փորձարկման ընթացքում փորձագիտական գնահատման միջոցով հստակեցվել է հրահանգը, և իրականացվել են հոգեդիագնոստիկական մեթոդիկաներին ներկայացվող հիմնական պահանջները՝ ստանդարտացում, նորմատիվային ցուցանիշների դուրսբերում, հուսալիության և վալիդության ստուգում զուգահեռ թեստավորման ճանապարհով: Կատարվել է թեստային ցուցանիշների բաշխվածության համապատասխանության ստուգում նորմալ բաշխման ֆունկցիայի հետ՝ ըստ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի: Այնուհետև հաշվարկվել են յուրաքանչյուր գործոնի միջին արժեքն ու ստանդարտ շեղումը, սահմանվել են փորձարարական (էքսպերիմենտալ) նորմատիվային ցուցանիշները: Հարցարանի ստեղծման և տեղայնացման ընթացակարգի վերաբերյալ հոդվածը (*Petrosyan Laura, Galstyan Alina Devising a Method for Studying the Social and Psychological Maturity of Specialists 27th NISPACEE Annual Conference, May 24-26, 2019, Prague, Czech Republic*) ներկայացված է Պրահայում 2020 թ, էլեկտրոնային տպագրությամբ:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ՏԵԽՆԻԿԱՆԵՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒ ԽՄԲԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ձեռնարկի կիրառական մասում ներկայացված են ոչ միայն մեր աշխատանքային խմբի անդամների կազմած հեղինակային տեխնիկաներ, այլև վարժություններ, որոնք մշակվել են Օ. Ա. Մախաևայի և Ե. Ե. Գրիգորևայի «Ես ընտրում եմ մասնագիտություն» և Ա. Պ. Չերնյավսկայայի «Մասնագիտության կողմնորոշման հոգեբանական խորհրդատվություն» ձեռնարկների գործնական նյութերից:

Կան նաև էլեկտրոնային աղբյուրներից դուրս բերված նյութեր, որոնք ևս անցել են մշակման և տեղայնացման մասնագիտական ու փորձագիտական ճանապարհ:

Վարժությունները թարգմանվել և խմբագրվել են հայերենով, տեղայնացվել՝ մեր մշակույթին համապատասխան: Սկզբնական փորձարկումներն անցկացվել են ինչպես Երևանի, այնպես էլ մարզային մի քանի դպրոցներում, քոլեջներում և բուհերում: Սովորողների հետ գործնական և սեմինար աշխատանքներ իրականացնելուց բացի, անցկացրել ենք վերապատրաստումներ Երևանում, Վանաձորում և Գյումրիում, բուհական մասնագետների, հոգեբանների, մանկավարժների, սոցիալական աշխատողների և սոցիալական մանկավարժների հետ:

ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՈՒԹՅՈՒՆ 5

Նպատակը՝ այս վարժանքը օգնում է վերանայել սեփական հետաքրքրությունները, ստացած գիտելիքների բազան, փորձել գտնել կապեր իմացության և հետաքրքրության միջև: Նախապես ներկայացվում է փոքրիկ ակնարկ առարկայական գիտելիքի, հետաքրքրության և մասնագիտությունների մասին: Այնուհետև խմբի յուրաքանչյուր անդամին բաժանվում են համապատասխան բլանկներ և տրվում այն լրացնելու հրահանգը:

N°	<i>Ի՞նչն է ինձ հետաքրքիր իմանալ, ի՞նչ նոր գիտելիք եմ ուզում ձեռք բերել</i>	<i>Ո՞ր մասնագիտությունը ինձ կօգնի իրագործել իմ ցանկությունը</i>	<i>Ի՞նչ պետք է անեմ, որպեսզի ստանամ այդ մասնագիտությունը</i>
1			
2			
3			
4			

Անձը պետք է ի սկզբանե կարողանա կողմնորոշվել իր հետաքրքրությունների մեջ: Որքան շատ լինեն դրանք, այնքան ավելի արդյունավետ կլինի գործնական աշխատանքը: Այնուհետև պետք է մտածել դրանք իրականացնելու հնարավորությունների մասին և ինքնորոշվել մասնագիտության մեջ: Կարող են գրանցել հետաքրքրությունը, գիտելիքը, բայց դժվարություն ունենան իրականացման քայլերը լրացնելու համար: Հարցերի դեպքում անհրաժեշտ է միջամտել և նպաստել, որ գրանցվեն ոչ միայն լիովին իրատեսական տարբերակները, այլև քիչ իրատեսականները, նույնիսկ երևակայականները:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՎԵՐԲԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Ծ

Նպատակը՝ մասնագիտությունների մասին տեղեկությունների բազմազանության ոչ վերբալ հմտությունների ձևավորում:

Խմբից ընտրվում է կամավոր, ով ավելի հստակ է ինքնորոշված մասնագիտության մեջ: Խումբը շարք է կանգնում շրջված, իսկ կամավորը խնդրում է վերջին կանգնածին շրջվել և նրան, առանց խոսքի, ներկայացնում է իր մասնագիտության համապատասխան որևէ գործողություն: Դիմացինը ուշադիր հետևում է, ընդունում, շրջվում է և իր դիմացինին է փորձում դա ներկայացնել: Ցուցադրողը հետ է շրջվում: Այդպես շարունակում են, մինչև հերթը հասնում է շարքի առաջին կանգնածին: Նա, ով վերջինն է ականատես լինում այդ ոչ վերբալ գործողությանը, մոտենում է կամավորին, ով առաջինն էր ներկայացրել, և փորձում են համեմատել շարժումները: Խումբը քննարկում է, թե ինչպիսի գործողության մասին է խոսքը:

Վարժությունը կարող է շարունակելի լինել, եթե կամավորների քանակը մեծ է:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ.

- ✓ *Ի՞նչն էր հատկապես տպավորիչ վարժանքում:*
- ✓ *Ի՞նչն է կարևոր, նշանակալի:*
- ✓ *Ի՞նչը կարելի է փոփոխել վարժանքում:*
- ✓ *Ի՞նչ մտքեր և զգացողություններ առաջացան կատարման ընթացքում:*
- ✓ *Ի՞նչը կցանկանայիք հստակեցնել և լրացուցիչ քննարկել:*

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԱՎԱՐՏ ՆԿԱՐ Ծ

Նպատակը՝ ինքնաբուխ դրսևորումների միջոցով բացահայտել խմբի անդամների ակտիվության և ներգրավվածության ցուցանիշները տարբեր մասնագիտությունների ընկալման հետ կապված, նպաստել խմբային դինամիկային: Խումբը բաժանվում է 2 կամ 3 ենթախմբերի՝ կախված ընդհանուր քանակից: Յուրաքանչյուր ենթախմբի հատկացվում են A3 ձևաչափի թուղթ և գունավոր մատիտներ: Թղթի վրա նախապես պատկերված է անորոշ և թերի գծապատկեր, որը կարող է ասոցացվել ինչ-որ մասնագիտության հետ: Հրահանգ է տրվում ավարտել այն, մինչև ստացվի ամբողջական նկար, որն ընդունելի է տվյալ ենթախմբի համար: Գծապատկերները կարող են լինել գունավոր կամ անգույն:

Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր ենթախմբից ընտրվում է մեկ ներկայացուցիչ, որը մեկնաբանում է իրենց կատարած աշխատանքը: Եթե ենթախմբի մյուս անդամները ունենում են լրացումներ, նույնպես կարող են ներկայացնել: Մեկնաբանվում են պատկերված նկարների բովանդակությունները, յուրաքանչյուրը փորձում է գտնել նմանատիպ (ասոցիատիվ) կապեր իր նախասիրությունների, հետաքրքրությունների և ներկայացված պատկերների միջև:

Քննարկվում է, թե որքանով է աշխատանքը եղել խմբային, որքանով է յուրաքանչյուրն աշխատել ինքնուրույն կամ լրացրել մյուսներին: Ուշադրություն ենք դարձնում ներկայացված թերի գրաֆիկական խթանիչի և ավելացված պատկերների համադրությանն ու հակադրությանը.

- որքանով են դրանք համապատասխանում արտաքին տեսքով, գույնով, չափով և ձևով,
- որքանով է խթանիչը դրդել գունային այլ ընտրությունների,
- որքանով է այն թելադրել բովանդակություն յուրաքանչյուրի համար,
- ով է եղել նախաձեռնողը,
- ինչ գաղափարներ են առաջ եկել խթանիչին նայելու ընթացքում,
- ով ինչ ակտիվություն է ցուցաբերել...
- այլ...

Քննարկումները հնարավորություն են տալիս գիտակցելու այն դրսևորումները, որոնք ինքնաբույս են եղել: Փորձում ենք դրանք մեկնաբանել անձի տեսանկյունից:

ԱՊԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 5

Նպատակը՝ ճանաչել մասնագիտությունը տարբեր տեսանկյուններից, մոտենալ մասնագիտական կերպարի պատկերացումներին:

Նշեք մի քանի մասնագիտություններ, որոնցում ինքնորոշված եք կամ դեռ ինքնորոշված չեք, ցանկանում եք ունենալ, այսինքն՝ մասնագիտություններ, որոնք նախընտրելի են Ձեզ համար: Եթե դժվարանում եք կատարել առաջադրանքը, պատկերացրեք մասնագետների, որոնց համարում եք: Փորձեք նկարագրել նրանց՝ որպես իրենց մասնագիտությունը կրողների, և ըստ նրանց մասին Ձեր ունեցած պատկերացումների՝ լրացրեք աղյուսակը:

№	Մասնագիտության առավելությունները	Մասնագիտության թույլ կողմերը	Շահեկանություն և հետաքրքրություններ
1			
2			
3			
4			

Առաջին սյունակում պետք է նշել մասնագիտության դրական կողմերը, որոնք հանդես են գալիս որպես առավելություններ: Պատկերացրեք, որ դուք այդ մասնագիտությունը կրողն եք, ի՞նչն է Ձեզ համար հաճելի, օգտակար, պիտանի տվյալ մասնագիտության համար: Գրանցեք դրանք աղյուսակում:

Երկրորդ սյունակում պետք է նշել մասնագիտության բացասական կողմերը, որոնք հանդես են գալիս որպես սահմանափակումներ: Նորից պատկերացրեք Ձեզ որպես տվյալ մասնագիտության կրող, փորձեք մտո-

վի անցնել համապատասխան գործունեության ընթացքով և դուրս բերեք այն ոչ հաճելի, անսովոր, դժվար հաղթահարելի կողմերը, որոնց հնարավոր է հանդիպել այդ ճանապարհին: Գրանցեք դրանք աղյուսակում:

Երրորդ սյունակը վերաբերում է հետաքրքրություններին և շահեկանությանը: Պետք է դուրս բերել մասնագիտության այն կողմերը, որոնք օգտակար են լինելու Ձեր անձի համար, հնարավորություն են տալու զարգանալու և նոր հմտություններ ձեռք բերելու, այսինքն՝ ծառայելու են ի շահ Ձեզ:

Յուրաքանչյուր սյունակում նշել հնարավորինս շատ տարբերակներ, որովհետև դրանք պետք է վերանայվեն քննարկումների ընթացքում: Աշխատանքի վրա կարող եք ծախսել մոտավորապես քսան րոպե:

Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընտրած մասնագիտությունն ու դրա դրական ու բացասական կողմերը: Փորձում ենք քննարկումները ուղղել դեպի անձը՝ դուրս բերելով նրա այն անձնային որակները, որոնք օգնելու են հաղթահարել մասնագիտության սահմանափակումները և նոր հմտություններ ձեռք բերելու հնարավորություններ են ստեղծելու:

Քննարկումներն ավարտելուց հետո կարող ենք առաջարկել փորձել այլ մասնագիտության համար կատարել նմանատիպ բանավոր աշխատանք՝ ըստ ցանկության:

Նմանատիպ գործնական աշխատանքը հնարավորություն է տալիս նույնականանալ մասնագիտությունը կրողի՝ ապագա մասնագետի հետ, հստակեցնել հետաքրքրությունները, փնտրել որոշում կայացնելու գործընթացում սեփական անձի շահը, օգտակարությունը, կանխատեսել հնարավոր դժվարությունները և այլն...

ԱՍՈՑԻԱՏԻՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ Թ

Նպատակը՝ խթանել սովորողի անձի հուզական հասունությունը, հույզերի ճանաչումն ու գիտակցումը, ունենալ մասնագիտության ասոցիատիվ զգացողության ճանաչման փորձառություն:

Յուրաքանչյուր մասնակից տրված թերթիկների վրա գրում է մեկ մասնագիտություն, որը պարտադիր չէ բարձրաձայնել: Վարողը ներկայացնում է մասնագիտությունների ցանկը և խնդրում, որ խմբի անդամներն իրենց պատկերացնեն որպես այդ մասնագիտությունները կրողներ և նշեն, թե ինչ հույզեր և զգացմունքներ են արթնացնում դրանք: Ներկայացման համար կարելի է մասնակիցների ցանկի դիմաց կազմել հույզերի և զգացմունքների ցանկը և սլաքներով ցույց տալ կապերը:

Խմբային քննարկման ընթացքում թե՛ մասնագիտությունները, թե՛ հույզերն ու զգացմունքները կարելի է համալրել նորերով:

Վարժությունների ավարտն ամփոփվում է հարցադրումներով.

- ✓ Ո՞ր հույզն է ամենից շատ հիշատակվել և ինչո՞ւ:
- ✓ Ինչո՞վ են պայմանավորված առկա կապերը:
- ✓ Ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ ինչ-որ մասնագիտության համար գրեթե բացակայում են կապերը:

ՀԱՐՈՒՍՏ ԸՆԿԵՐ Թ

Նպատակը՝ սովորողների մեջ ձևավորել բիզնես մտածողություն, պլանավորման հմտություններ, նպաստել մրցակցային առողջ փոխհարաբերությունների ձևավորմանը:

Մասնակիցները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբում յուրաքանչյուր մասնակից մշակում է բիզնես ծրագիր (օրինակ՝ կապված մասնագիտական ինքնորոշման գործընթացի խթանման հետ՝ դպրոցներում), իսկ երկրորդը՝ փորձում է գնահատել դրանք: Բիզնես ծրագիր մշակողների համար նախապես պատրաստվում են համարակալված թերթիկներ, որպեսզի նրանք մոտենան հերթականությամբ. սկզբում՝ 1, 2 համարակալումով մասնակիցները, այնուհետև՝ 3, 4-ը և այլն: Մշակողներից երկուսը մոտենում են և առանձին-առանձին ներկայացնում իրենց ծրագրերը:

Գնահատողները ընտրում են, թե որն է ավելի արդյունավետ, և ընտրում, թե որ ներկայացնողի կողմն են անցնում: Քանակները գրանցվում են: Ով ունենում է ավելի շատ ձայներ, անցնում է հաջորդ փուլ:

Այնուհետև պլանները ներկայացնում են մշակողների երկու այլ ներկայացուցիչ: Նույն գնահատման գործընթացով ընտրվում է մյուս հաղթողը:

Զույգերով հաղթողների ընտրությունից հետո նրանք մրցում են միմյանց հետ՝ նորից համարակալման հերթականությանը համապատասխան (ըստ աճման):

Աշխատանքը շարունակվում է այնքան, մինչև ընտրվի լավագույն բիզնես ծրագիր մշակողը: Ընդ որում, ներկայացնողները պետք է ի սկզբանե ներկայացնեն այն, ինչ մշակել են, սակայն կարող են ընթացքում կատարել փոփոխություններ, լրամշակումներ:

Վարժությունների ավարտն ամփոփվում է հարցադրումներով.

- ✓ Ի՞նչը նպաստեց տվյալ բիզնես ծրագիրն ընտրելուն որպես հաղթող:
- ✓ Մյուս բիզնես ծրագրերում ի՞նչ արդյունավետ լուծումներ կային կիրառական տեսանկյունից:
- ✓ Ո՞ր բիզնես ծրագիրն ուներ ամենամեծ հեռանկարը:
- ✓ Ո՞ր չափանիշներն էին հաջողված ընտրության համար:
- ✓ Ինչպիսի՞ համապատասխանություն կարելի է գտնել ներկայացնողի անձի և բիզնես ծրագրի արդյունավետ իրականացման միջև:
- ✓ Ինչպիսի՞ անձնային որակներ են անհրաժեշտ լավագույն բիզնես ծրագրերն իրականացնելու համար:

ՄԵՎ ԽՈՌՈՉ – ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐԻԶՈՆ Պ

(Տարածությունը և ժամանակը անանցանելիության սահմաններում - սահմանափակ տարածություն, որտեղ իրողությունն անհայտ է և կապված չէ այլ տարածության հետ: Սև խոռոչին բնորոշ է այն, որ մեր իրողության մեջ չունենք ինֆորմացիա, թե ինչ է տեղի ունենում այնտեղ, և հակառակը. եթե կա ինչ-որ իրադարձություն խոռոչում, այն անհայտ է մեզ համար):

Աշխատանքի ընթացքում մասնակիցները սովորում են կանխատեսել ապագան, որն այս պարագայում հանդիսանում է իրողությունների հորիզոնը:

Փորձում ենք ենթադրել, թե ինչ հավանականությամբ կարող է որևէ մեկի մոտ լինել այս կամ այն իրողությունը. որքա՞ն է հավանականությունն այն բանի, որ՝

- ✓ ապագայում կարող եք աշխատել օրական 10.000 դրամ (այս իրողությունը մոտ է մեզ և այնքան էլ մոտ չէ իրողությունների հորիզոնին – (X %)
- ✓ ապագայում կարող եք դառնալ տիեզերագնաց (...)
- ✓ ապագայում կարող եք դառնալ հաշվապահ (...)
- ✓ կարող եք սովորել, ձեռք բերել նոր մասնագիտություն (...)
- ✓ անբուժելի հիվանդություններ չլինեն (...)
- ✓ կարող եք գրուցել ռոբոտի հետ (...)
- ✓ կարող եք գրուցել ռոբոտի հետ և չիմանալ, որ իրականում մարդ չէ (...)
- ✓ կարող եք լինել լուսնի վրա (...)
- ✓ այլ...

Տոկոսային հարաբերակցությունները քննարկելուց հետո պետք է մասնակիցներն առաջարկեն նոր իրողություններ, օրինակ՝ 50 տարի հետո ինչպիսի իրողություններ կլինեն:

**ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ Ծ**

Նպատակը՝ ձևավորել այլընտրանքային պատկերացումներ համընդհանուր ներառման գործընթացի վերաբերյալ՝ կապված հատուկ կարիքներով անձանց հնարավորությունների գնահատման և սահմանափակումների գիտակցման հետ:

Նախապես քննարկվում են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասնագիտական ինքնորոշման և մասնագիտական գործունեության իրականացման հիմնախնդիրները: Վարժանքը ներառում էր երեք հիմնական փուլային գործնական առաջադրանքներ, դրանք են՝

- *կազմել համակարգ՝ գործատուի և աշխատանքի դիմորդի համար (դիմորդն ունի առանձնահատուկ պայմանների կարիք),*
- *ներկայացնել գործատուի պահանջների բաղադրիչները որպես մասնագիտական կոմպետենտության հիմք, որում քննարկվում է նաև ինքնուրույնությունը որպես մասնագիտական գործունեության կարևոր պայման,*
- *հոգեկան և ֆիզիկական տարբեր դժվարությունների դեպքում, ինչպես նաև տարբեր մասնագիտությունների հետ համադրմամբ կազմել մասնագիտական կոմպետենցիաների և անձնային հատկությունների սխեմա:*

Արդյունքում պարզ է դառնում մասնագիտական գործունեության հետ կապված բազմաթիվ ներքին (անձնային) և արտաքին (սոցիալական) խնդիրների բնույթը, որոնք խոչընդոտում են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց սոցիալական ներառումը՝ առավելապես մասնագիտական գործունեության կոմպետենցիաների ձևավորման և իրացման հարցում:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ օ

Նպատակը՝ հեքիաթաթերապիայի կիրառության միջոցով խթանել մասնագիտական ինքնորոշման և պատրաստման գործընթացը:

Առաջին փուլում մասնակիցներին մոտիվացնելու նպատակով տրվում է մասնագիտությունների ցանկ: Յուրաքանչյուր անդամ ներկայանում է մասնագիտության դրական և բացասական կողմերով:

Երկրորդ փուլում առաջարկվում է, թե ով կցանկանա փոխել մասնագիտությունը: Ընտրվում են նոր մասնագիտություններ՝ իրենց թերություններով և առավելություններով:

Երրորդ՝ ամփոփիչ փուլում ինքնաքննադատաբար մասնակիցները վերլուծում են իրենց ինքնուրույնության բաղադրիչները՝ շեշտադրելով անկախ, ազատ որոշման կայացումը:

Խմբային աշխատանքի նպատակը

Խթանել խմբի մասնակիցների ինքնուրույնությունը՝ մասնագիտական ինքնորոշման և ընտրության նպատակով:

Պարագաները

Մասնագիտությունների քարտեր՝ ստորև բերված ցանկին համապատասխան.

առևտրական, մագործ, փոստատար, մաքրող, կաթնավաճառ, անտառապահ, փականագործ, օժանելիք պատրաստող, հեռախոսավար, մեղվապահ, սրբագրիչ, թիկնապահ, քարտաշ, մանկավարժ, այգեպան և այլն...

Ընթացակարգ

Հրահանգ. Պատկերացրեք, որ Դուք անցնում եք երկար ճանապարհ՝ դեպի հեքիաթային թագավորություն, որտեղ մարդիկ ապրում են բարեկեցիկ, երջանիկ ու երկարատև կյանքով: Դուք նույնպես որոշել եք բնակվել այդ թագավորությունում: Անցնելով երկար և դժվարին ճանապարհ այնտեղ հաստատվելու համար՝ Դուք պետք է համաձայնեք մի շատ կարևոր պայմանի. նա, ով դառնում է հեքիաթային թագավորության բնակիչ, աշխատում է այն մասնագիտությամբ, որն իր համար Թագավորն է ընտրել: Չէ որ Թագավորը գիտի, թե ինչ է անհրաժեշտ իր թագավորության զարգացման համար, և նա սիրով կընդունի Ձեզ իր Հեքիաթային երկիրը:

Փուլ 1-ին: Եվ այսպես, խմբի մասնակիցները հայտնվել են ընդարձակ դահլիճում և նրանց ողջունում է Թագավորը: Նա հրավիրում է մասնակիցներին սեղանի շուրջ, ծանոթանում է և հետաքրքրվում, թե ով ինչ աշխատանքով է ուզում զբաղվել: Այնուհետև վարողը թագավորի անունից հայտարարում է իր որոշումը. «Ուրախ եմ ձեզ հյուրընկալելու իմ երկրում: Գուցե ժամանակի ընթացքում դուք կկարողանաք զբաղվել այն աշխատանքով, ինչը ձեզ հաճելի է, սակայն այժմ պետք է տիրապետեք այն մասնագիտությանը, որն անհրաժեշտ է մեր Հեքիաթային թագավորությանը»:

Ողջույնից հետո վարողը ներկայացնում է մասնագիտությունների քարտերը մասնակիցներին և խնդրում, որ կատարեն ընտրություն: Քանի որ նախապես ընտրված մասնագիտությունները այնքան էլ արդիական չեն, և շատերի համար տեխնոլոգիական փոխարինողներ կան, ենթադրվում է, որ մասնակիցներն այնքան էլ հաճույքով չեն ընդունելու իրենց բաժին ընկած մասնագիտությունը: Մակայն պետք է կատարեն ընտրություն, նույնիսկ եթե մասնագիտությունները համընկնեն:

Ծանոթանալով իրենց սպասվելիք գործունեությանը՝ մասնակիցները կարող են արտահայտել դժգոհություն և բարձրաձայնել տարբեր կարծիքներ: Վարողի խնդիրն այն է, որ տեղիք չտա կրքերի բորբոքմանը, հիշեցնի թագավորության պահանջներն ու այն, որ իրենք հայտնվել են բարեկեցության, երջանկության ու երկարակեցության կարգավիճակում՝ որպես Հեքիաթային թագավորության բնակիչ:

Այնուհետև յուրաքանչյուր մասնակից պատմում է իր ձեռքբերած մասնագիտության մասին, որն իրականացնելու է Հեքիաթային թագավորությունում, մատնանշում է դրա օգտակարությունը, պահանջարկը և իր անձի այն լայն հնարավորությունները, որոնց շնորհիվ դառնալու է իր գործի վարպետը:

Վարողն ուշադրություն է դարձնում յուրաքանչյուր մասնակցի խոսքին, թե որքան համոզիչ է ներկայացնում մասնագիտությունը, որքանով է դրան հուզականորեն վերաբերվում, գուցե փորձում է գտնել կապեր իր նախասիրությունների և ապագա իրական մասնագիտական հետաքրքրությունների միջև:

Փուլ 2-րդ: Վարողը ներկայացնում է Հեքիաթային թագավորության կյանքը 10 տարի անց. այն է՝ մասնակիցները կայացել են որպես մասնա-

գետներ, դարձել են պրոֆեսիոնալներ, վայելում են մեծ հարգանք թագավորության բնակչության շրջանում, ունեն բնակարաններ, ընտանիք, ապրում են երջանիկ կյանքով: Թագավորության տարբեր ծայրամասերից մարդիկ գալիս են, որպեսզի օգտվեն նրանց որակյալ ծառայություններից: Շնորհիվ նրանց մասնագիտական հմտությունների՝ Հեքիաթային թագավորությունը բուռն զարգացում է ապրել: Եվ 10-ամյակի կապակցությամբ Թագավորը հրավերք է կազմակերպել իր պալատում:

Վարողը Թագավորի անունից շնորհակալություն է հայտնում մասնագիտական ներդրումների համար, նշում, որ դրանք շատ մեծ օգուտ են տվել թագավորության առաջընթացին, և խնդրում է, որ յուրաքանչյուրը ներկայացնի իր ձեռքբերումների և նվաճումների ոչ միայն արդյունքները, այլ հնարավորությունները, թե ինչպես է հասել դրան, ինչ ուժեղ կողմերի շնորհիվ: Նաև հիշեցնում է իրենց առաջին հանդիպումը, երբ խոստացավ, որ կգա այն ժամանակը, երբ մասնագետները իրենք կընտրեն համապատասխան աշխատանք իրենց համար: Եվ ահա հասել է այդ պահը. յուրաքանչյուր մասնակից պետք է կատարի ընտրություն, ուզում է արդյոք փոխել մասնագիտությունը, զբաղվել այլ, ավելի նախընտրելի գործով:

Փուլ 3-րդ: Վարողը խնդրում է մասնակիցներից յուրաքանչյուրին հիմնավորել իր ընտրությունը: Որոշման կայացման գործընթացը հիմնավոր ավարտելուց հետո մասնակիցները պետք է տպավորություններ փոխանակեն՝ առաջնորդվելով հետևյալ հարցադրումներով.

- ✓ Ի՞նչ կատարվեց իրենց հետ,
- ✓ ինչպիսի՞ զգացողություններ ունեցան,
- ✓ ինչպե՞ս փոխվեցին նրանց հուզական ռեակցիաները,
- ✓ ինչպիսի՞ մտքեր ունեցան տեխնիկայի տարբեր քայլերով անցնելիս,
- ✓ ինչպե՞ս կայացրին որոշում,
- ✓ այլ...

Ըստ էության վերջում վարողը յուրաքանչյուրին մղում է դեպի ինքնաքննադատության, ինքնառեֆլեքսիայի, ինքնագիտակցման, թե որքանով էին մասնակիցները ցուցաբերում ինքնուրույնություն ընտրության մեջ, որքանով էին հարմարվում իրավիճակին և թելադրանքին, որքանով էին ինքնորոշված այս կամ այն մասնագիտության մեջ:

Այս ամենը հնարավորություն է ստեղծում վերանայելու սեփական ընտրության հնարավորությունները մասնագիտական ինքնորոշման և կողմնորոշման տեսանկյունից, վերլուծել իրավիճակները փոխզիջումային և մրցակցային վարքի տեսանկյունից, կատարել համապատասխան եզրահանգումներ:

Տեխնիկայի ընթացքում կարևոր է, որ քննարկումները լինեն բազմաբնույթ, նույնիսկ վերածվեն բանավեճի: Կարևորը, որ արդյունքում հասկանալի լինեն պատճառահետևանքային կապերը:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ Ծ

Նպատակը՝ ինքնորոշվել սեփական անձի նախընտրությունների մեջ և փորձել գտնել համապատասխանություն այս կամ այն մասնագիտության հետ:

Քայլ 1.

Նշեք 3-5 որակներ, որոնք բնութագրական են Ձեր անձի համար:

Ստորև նշված ցանկից ընտրեք Ձեզ համար **համակրելի** երկու մասնագետ.

Անասնաբույժ, Բանկի աշխատող, Բժիշկ, Գիտնական, Գյուղատնտես, Դերասան, Զինվորական, Ինժեներ, Իրավաբան, Լեզվաբան, Լուսանկարիչ, Խոհարար, Ծրագրավորող, Հաշվապահ, Հոգեբան, Մանկավարժ, Սառուցող, Նկարիչ, Շինարար, Պատմաբան, Ռեժիսոր, Վաճառող, Վարորդ, Վարսահարդար, Ոստիկան, Տնտեսագետ:
--

1. _____

2. _____

Քայլ 2.

Բնութագրեք այդ մասնագետներին իրենց անձնային և մասնագիտական որակներով.

_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____

Փորձեք գտնել համադրություններ Ձեր և ընտրված մասնագետների անձնային որակների միջև: Կրկնվող կամ մոտ որակները գրանցեք ստորև:

Քայլ 3.

Մասնագիտությունների նույն ցանկից ընտրեք Ձեզ համար **ոչ համա-
կրելի** երկու մասնագետի.

1. _____

2. _____

Բնութագրեք այդ մասնագետներին իրենց անձնային և մասնագիտա-
կան որակներով.

_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____

Փորձեք գտնել համադրություններ Ձեր և ընտրված մասնագետների
անձնային որակների միջև: Կրկնվող կամ մոտ որակները գրանցեք
ստորև:

Քայլ 4.

Քննարկում և ամփոփում. Կա՞ն արդյոք նմանություններ Ձեզ համար
նախընտրելի մասնագետների և Ձեր նախասիրությունների միջև: Փորձեք
գտնել ընդհանրություններ: Այնուհետև փորձեք համադրել Ձեր անձի
թույլ կողմերը և ոչ նախընտրելի մասնագետներին վերագրած որակները:
Հետևեք այն մտքերին և զգացողություններին, որոնք առաջանում են Ձեր
մեջ:

Քննարկումների արդյունքը հնարավորություն է տալիս վերանայելու սեփական անձի սահմանափակումները, փորձելու գնահատել անձնային այն որակները, որոնք կարող են դրսևորվել ապագա մասնագիտական դիմանկարում (հոգեգրամա) և ապահովել արդյունավետություն աշխատանքային գործունեության մեջ (պրոֆեսիոգրամա): Նմանատիպ գործնական աշխատանքի արդյունքում սովորողի մեջ ձևավորվում են ինքնաճանաչման նոր գիտակցումներ՝ կապված անձի ուժեղ և թույլ կողմերի հետ:

ՀՈՒԶԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ

Նպատակը՝ ճանաչել մասնագիտության հանդեպ ձևավորվող հուզական վերաբերմունքը, մասնագիտության ասոցիացիաները, ունենալ ասոցիատիվ փորձառություն:

Ընթացակարգ.

Պատկերացրեք, որ անցնում եք մասնագիտության ընտրության երկար ձգվող ճանապարհով, ուր գունային փոփոխություններ են լինում: Սկզբում ճանապարհը սպիտակ է. . . Դուք անցնում եք ու սկսում մտածել մասնագիտության ընտրության մասին: Ճանապարհը գունավորվում է: Գուցե տարբեր մասնագիտություններ տարբեր գույներ են ստանում, եթե դրանք մեկից ավելի են: Փորձեք թվարկել գույն-մասնագիտություն կապերն ըստ առաջնայնության: Փորձեք կենտրոնանալ և ինքնորոշվել. այնուամենայնիվ, ո՞րն էք ընտրում: Եթե կարողացաք կատարել ընտրությունը, սկսեք ճանապարհով առաջ գնալ: Պատկերացրեք, որ կրթության տարիներին ձեռք եք բերում նոր գիտելիքներ, հարստանում եք նոր փորձառություններով և կարողանում եք մտնել ձեր ընտրած մասնագիտության աշխարհը: Ասեք, թե ինչ գույն ունի այն և ինչ զգացողություններ ունեք Դուք ճանապարհի այդ մասում: Շարունակեք ճանապարհը, ավելի առաջ անցեք և պատկերացրեք, որ արդեն մասնագիտանում եք, ունեք աշխատանք, կարողանում եք իրականացնել մասնագիտական գործունեություն: Տեսեք Ձեզ մասնագիտության հետ նույնականացված: Ո՞ր գույնով փոխվեց ճանապարհը, ի՞նչ զգացողություններ են առաջանում գունային գամմայում: Ճանապարհը դեռ չի ավարտվում, և Դուք կարող եք

անցնել այն տարիներ շարունակ: Ապագան լուսավոր է, և Դուք դեռ շատ ակնկալիքներ և սպասումներ ունեք...

Իսկ հիմա փորձենք հույզերը և զգացողությունները ներկայացնել գույներով: Միացրեք համապատասխան գույնը զգացողություններին՝ յուրաքանչյուրի համար ընտրելով միայն մեկը: Գույները կարող են կրկնվել:

Կարմիր	Ուրախություն
Դեղին	Տխրություն
Կանաչ	Հանգստություն
Մոխրագույն	Բարկություն
Կապույտ	Հպարտություն
Շագանակագույն	Վախ
Սև	Անհանգստություն

Փորձեք գտնել ընդհանրություններ հույզերի, զգացողությունների և մասնագիտությունների սկզբնական ընտրությունների միջև, երբ անցնում էիք մասնագիտական պատրաստման ճանապարհով:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆԱԽԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ Ծ

Նպատակը՝ գիտակցել ապագա մասնագիտության հետ կապված սեփական ցանկությունները և հնարավորությունները:

Շարունակեք անավարտ նախադասությունը՝ լրացնելով ստորև բերված աղյուսակը, որն ուղեկցվում է հետևյալ հարցադրումով. «Ես կցանկանայի ունենալ աշխատանք, որն ինձ հնարավորություն կտար...»: Մի քանի տող լրացնելուց հետո փորձեք կողմնորոշվել մասնագիտության մեջ, որը կհամապատասխանի Ձեր հնարավորություններին և ինչ-որ չափով կնպաստի Ձեր ցանկությունների իրագործմանը:

№	Ես կցանկանայի ունենալ այն- պիսի աշխատանք, որն ինձ հնարավորություն կտար...	Մասնագիտություններ, որոնք ապահովում են դա
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

Իսկ այժմ շարունակեք աշխատանքը մյուս աղյուսակի համար, ուր հարցադրումն այսպիսին է. «Գործեր, որոնք ես սիրում եմ անել, դրանք են`...»: Սկզբում լրացրեք այդ սյունակի տողերը:

№	Գործեր, որոնք ես սիրում եմ անել	Կարևորության աստիճան	Ինչպե՞ս ես կա- րող եմ դա ավե- լի հաճախ անել
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			

Աշխատանքի հերթականություն.

1. Գործերի ցանկում կարող են լինել կարդալ, կազմակերպել երեկո-
ներ, ֆուտբոլ խաղալ, աշխատել որևէ տեղ և այլն: Դուք կարող եք

նան նշել գործեր, որոնցով երբեք չեք զբաղվել, սակայն շատ կցանկանայիք փորձել:

2. Առանձնացրեք գործերի կարևորության աստիճանն ըստ եռաբալ սանդղակի (Ա - շատ կարևոր, Բ - կարևոր, Գ - ոչ այնքան կարևոր): Այսպես Դուք կլրացնեք հաջորդ սյունակը:

3. Այնուհետև այն տողերում, որտեղ նշել եք «Ա», լրացրեք նան երրորդ սյունը:

4. Փորձեք գտնել կապեր Ձեր նախընտրած աշխատանքի և մասնագիտության միջև, համադրեք դրանք Ձեր նախասիրությունների և հետաքրքրությունների հետ:

Ո՞Վ ԵՄ ԵՍ ԿԱՍ Ի՞ՆՉ ԵՄ ՄՏԱԾՈՒՄ ԻՄ ՄԱՍԻՆ ֆ

Նպատակը՝ ինքնաճանաչման գործընթացի ակտիվացում, մասնակիցների հետ բարենպաստ «հարաբերությունների մթնոլորտի» ձևավորում:

Առաջադրանքներ՝ մասնակիցներին սովորեցնել առանձնացնել կարևոր հարցերի պատասխաններ՝ կիրառելով հոգեչափման մատչելի մեթոդներ (ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ուզում, ի՞նչ եմ կարողանում և այլն): Սովորեցնել խմբի անդամների միջև հարաբերությունների կանոնների կողմնորոշումը և պահպանումը: Մասնակիցների համար պարզել դասընթացի իմաստը և կարևորությունը:

Ջրույց հոգեբանի էթիկայի մասին, հոգեդիագնոստիկայի սկզբունքների վերաբերյալ:

